

Ա. Արևիստան

Խորեսազո՞ր
ՎԵՐԱԴՐՈՒՇ
“ԱՇԽԱՐՀԱՅՈՅՅԻ”Ի
ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԻ
ՇՈՒՐՅԱԾ

91(47.92) 3688
 26-12 Чиринишевъ.
 Бенрѣнчумъ Чиринира
 "Чиринаръ" б.
 28/IV 29.IV 28

Год, м-ц	Число	Ежедневные записи о

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք.

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ИСТОРИИ И МАТЕРИАЛЬНОЙ КУЛЬТУРЫ

АШ. АБРАМЯН
КАНДИДАТ ИСТОРИЧЕСКИХ НАУК

К ВОПРОСУ ОБ АВТОРСТВЕ
„ГЕОГРАФИИ“,
ПРИПИСЫВАЕМОЙ МОВСЕСУ ХОРЕНАЦИ

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАНа
ЕРЕВАН

1940

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ.—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

00(47.325)(092 Վահան Կոբեյան) + 091

~~81-12
091~~

ԱԾՈՒ. ԿԱՐՈՅ Հ. 1961 թ.

ԱՇ. ԱԲՐԱՅԱՄՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՂԵԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐԵՆԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ

“ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ”-Ի

ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՃՈՒՐՁԸ

3688

A II
32888



ԱՐՄԹԱՆ - ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1 9 4 0

Տպագրվում է ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի
Հայկական Ֆիլիալի Նախագահության կողմամբ:

Հայ ժողովրդի պատմության վհչ մի հարց այնքան ջանք ու եներգիա չի կալել բանասիրությունից, վորքան Խորենացու Ժամանակի հարցը Նրանով զբաղվել են հայագիտության այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպիսին՝ ակադեմիկ Ն. Յա. Մառն և, Նորայր Բյուզանդը, Գ. Տ.-Մկրտչյանը, Ս. Մալխասյանը, ակադեմիկ Հ. Մանանդյանը, պրոֆ. Խալաթյանը և ուրիշները՝ Խորենացիագիտության վերաբերյալ ստեղծված գրականությունը՝ հայերեն, ուռւերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ լեզուներով՝ ամբողջ գրադարաններ կարող ե կազմել: Գիտնականների՝ նման հետաքրքրությունը դեպի Խորենացին ինքնին հասկանալի յիշանագույն մի աղբյուր, վորն առաջին անգամ փորձ և անում բանագոր և գրավոր տեղեկությունների հիման վրա կազմել հայ ժողովրդի պատմությունը՝ հաղորդելով արժեքավոր և որիգինալ տեղեկություններ, ինչպես հայ ժողովրդի, այնպես և հարեվան ժողովրդների պատմության համար, բնական և, չեր կարող գիտնականների ուշազգության առարկա չգառնապէ Հին շրջանով զբաղվող մասնագետները չեյին կարող չզբաղվել այդ հեղինակի ժամանակի պարզաբանման հարցով: Խորենացու հաղորդած պատմական տեղեկությունները, հասկանալի յիշ, իրենց համապատասխան նշանակությունը կարող են ստանալ և նպատակին կարող են ծառայել միայն այն գեղագում, յերբ վերջնականապես վորոշվի իրեն, Խորենացու ժամանակը:

Խորենացով զբաղվող բանասիրները կատարել են մեծ և անգնահատելի աշխատանք: Նրանց հաջողվել ե լուծել Խորենացու աշխատությունների հետ կատված վիճելի շատ հարցեր՝ նրա ոգտագործած աղբյուրները, նրան վերաբրվող մի շարք աշխատությունների հարազատության հարցը, նրա աշխատություններում յեղած ընդմիջարկություններն ու աղավաղութմները և այլն: Մա-

կայն հիմնական հարցը, Խորենացու ժամանակի հարցը, մեր կարծիքով, դեռևս մնացել է չլուծված:

Ծանոթանալով Խորենացու ժամանակի վերաբերյալ յեղածմի շարք մենագրությունների հետ և կատարելով ձեռագրական վորոշ համեմատություններ, մենք յեկանք այն համոզման, վոր Խորենացու ժամանակի հարցի պարզաբանման խնդրում դրական արդյունքների կարելի յե հասնել «Աշխարհացոյց»-ի ձեռագրերի ուստամասիրության հիման վրա: Ուսումնասիրության ժամանակ մեղ համար պարզ դարձավ, վոր ընդորինակող գրիչները հին հայկական աշխատություններում, մասնավորապես «Աշխարհացոյց»-ում, կատարել են զգալի փոփոխություններ, վորոշ գեպքերում անգամ խմբագրել են նրանք. այժմ, մեղ թվում ե, հին հայկական տեքստի վերընծան հիման վրա, նրա հեղինակը հնարավոր կլինի պարզել միայն այն գելքում, յերբ վերջնականապես ավյալ տեքստը կազմակի նորամուծություններից:

Մեր առաջադրած հարցի՝ Խորենացու ժամանակի առեղծվածի ուսումնասիրությունը, մենք սկսեցինք Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ից: Այդ հարցը մեր ուսումնասիրության յելակետը դարձավ այն պատճառով, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստը՝ Խորենացու ժամանակը վորոշելու հարցում վորոշ բանասերների մոտ կարեղ կռվաններից մեկն և հանդիսացել: Յերբ կազմեցինք ՀեղՍ մատենադարանի «Աշխարհացոյց»-ների բիբլոգրաֆիան, համեմատեցինք նրանց տեքստերն ուժանութացանք կողմնակի այլ նյութերի հետ, յեկանք այն համոզման, վոր «Աշխարհացոյց»-ը վհչ թե Խորենացուն ե, այլ VII դարի հայ գիտնական Անանիա Շիրակացուն, ինչպես շատ ճիշտ, իր ժամանակին, յենթագրել ե պրոֆ. Բ. Պատկանյանը և նրան հետեղ այլ գիտնականներ: Ուսումնասիրության ընթացքում, այնուհետև, մեղ համար պարզ դարձավ, վոր Շիրակացին ծանոթ ե յեղել Խորենացու պատմության հետ և վորոշ տեղերում ոգտվել ե նրանից:

Ուսումնասիրության այլ թեմայի նյութ դարձնելով իրեն, Խորենացու ժամանակը, մենք մեր ներկա ուսումնասիրության մեջ աշխատել ենք պարզել «Աշխարհացոյց»-ի հեղինակը՝ պատելով Խորենացու ժամանակը «Աշխարհացոյց»-ի հիման վրա վորոշելու փորձերից: Առաջադրված խնդիրը լուծելու համար կազմել ենք մատենադարանի ձեռագրերում յեղած «Աշխարհացոյց»-ների բիբ-

լիոդրաֆիան, դասավորել ենք դրանք ժամանակագրական կարգով, հնարավորության սահմաններում ուղղել ենք «Աշխարհացոյց»-ում նկատված աղավաղումները, աշխատել ենք ազատել տեքստն ընդմիջարկություններից, վերջապես, փորձել ենք տեքստի վերլուծման հիման վրա վորոշել «Աշխարհացոյց»-ի գրելու ժամանակը, հեղինակը և նրա ոգտագործած աղբյուրները:

Ներկա ուսումնասիրության մեջ, վորոշ տեղերում, մենք դուրս ենք յեկել առաջադրած թեմայի շրջանակից և կանգ ենք առել աղբյուրագիտական այլ հարցերի վրա: Դա յեղել ե վհչ թե աննպատակ մի ցանկություն, այլ թեմայում շոշափված հիմնական հարցերը կողմնակի փաստերով ամրացնելու նպատակով միայն:

Ուսումնասիրության ընթացքում, հնարավորության սահմաններում, մենք աշխատել ենք խույս տալ պատմական գիտության մեջ լուծված հարցերի քննությունից: Մեր նպատակն ե յեղել, վորքան հնարավոր ե, բերել փաստական նոր նյութեր և շոշափել գլխավորապես այն հարցերը, վորոնք, մեր կարծիքով, լուծված չեն: Փաստական նոր նյութի հիման վրա յե գլխավորապես, վոր մենք հանել ենք այս կամ այն յեղրակացությունը կամ թե ամրացրել առանձին բանասերների մեզնից առաջ հայտնած կարծիքները:

Մեր ներկա աշխատության մեջ չնայած մենք հնարավորության սահմաններում ոգտագործել ենք ՀԽՍՀ մատենադարանի հայտնի գրեթե բոլոր «Աշխարհացոյց»-ները, սակայն կան մի շարք մատենադարաններ, վորոնք մատչելի չեն յեղել մեզ, ուստի ե մենք ներկա աշխատության վրա նայում ենք վորպես եսքիզե (նախնական ստվերագրի)՝ հետագայում «Աշխարհացոյց»-ի ավելի ընդարձակ ուսումնասիրության համար և նախնական մի քայլ նորենացու ժամանակի առեղծվածի լուծման ճանապարհում:

ԱՇ. ԱԲՐԱՀԱՄՑԱՆ

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ԶԵՌԱԴՐԵՌԸ

Հին հայկական մատենագրերից «Աշխարհացոյց»-ները, համեմատաբար, ամենից շատ փոփոխության յենթարկված տեքստերն են: Զկա գրեթե «Աշխարհացոյց»-ի այնպես մի ձեռագիր որինակ, վորը բառացի նմանվի մյուսին: Նրանք իրարից տարբերվում են կամ կառուցվածքով, կամ բովանդակությամբ և կամ գրչական ընթերցումով: Պատճառը միանդամայն հասկանալի յեւնդորինակող գրիչները, յերբեմն բավ չհասկանալով այս կամ այն իրենց անծանոթ հատուկ անունը, աղավաղել են, յերբեմն՝ ցանկանալով իրենց ժամանակի նոր անունով մեկնել աշխարհագրական հին անունը, ավելացրել են իրենց ժամանակի անունները, յերբեմն՝ ժամանակակից պահանջների համաձայն նախատակաղբած ձեռով ընդարձակել կամ կրծատել են «Աշխարհացոյց»-ի տեքստի այս կամ այն հատվածը և այլն: Բոլոր դեպքերումն ել, պարզ ե, տուժել ե «Աշխարհացոյց»-ի ավտոգրաֆ տեքստը և հեռացել իր նախնական բնագրից:

Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի տեքստում յեղած այդ աղավաղումների վրա, դժբախտաբար, չհաշված շատ քիչ բացառություններ, հարկ յեղած չափով կանգ չեն առել հայդիտությամբ զբաղվող մեր բանասիրներից շատերը: Նրանցից վոմանք հաշվի չեն առել այն կարևոր հանդամանքը, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստի քննության հիման վրա հնարավոր կլինի պարզել նրա հեղինակն ու գրելու ժամանակը միայն այն դեպքում, յեթե «Աշխարհացոյց»-ի տեքստը կազմավի ընդմիջարկություններից և կուղղվեն նրա մեջ յեղած աղավաղումները: Այս հանդամանքն անհրաժեշտ է շեշտել, վորովհետեւ այժմ, յերբ հարկ ելինում բացարել այս կամ այն խոշոր բանասիրի՝ «Աշխարհացոյց»-ի հարցում թույլ աված սխալի պատճառը, պարզվում ե, վոր մեծ մասամբ յեղել ե մատենադարանների

ձեռագրերը չոգտագործելու պատճառով: Բանասերների մեծ մասն իրենց ուսումնասիրությունների ժամանակ գերազանցապես ողտագործել են միայն «Աշխարհացոյց»-ի հրատարակված որինակները, զանց առնելով ձեռագրերը, հատկապես ՀԽՍՀ մատենադարանի «Աշխարհացոյց»-ի հնագույն վորոշ ձեռագրեր, վորոնք մեծ չափով ոգնում են հարցի պարզաբանմանը: Մատենադարանը, մինչև վերջերս, չի ունեցել ձեռագրերի անվանական բիբլիոգրաֆիա և հնարավորություն չի ստեղծել նրանց ուսումնասիրովների համար: Այնպիսի խոշոր մասնագետ, ինչպիսին ակադեմիկ է. Մանանդյանն ե, վերն զբաղվել ե Խորենացու առեղծվածի լուծումով, այդ նույն պատճառով հնարավորություն չի ունեցել ծանոթանալ ՀԽՍՀ մատենադարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների հետ: Որինակ՝ Ալիշանի «Շիրակ» աշխատության մեջ հայտնած այն տեղեկության առթիվ, վոր կան մատենադարական վորոշ տեղեկություններ, վորոնք ապացուցում են «Մզոնաչափք»-ի և «Աշխարհացոյց»-ի կապը, ակադեմիկ Մանանդյանը դժվարանում է հավատալ դրան և իրավացիորեն պահանջում ե ապացուցել նոր փաստերով (տես «Խորենացու առեղծվածի լուծումը», էջ 89), այժմ արդեն պարզվում ե, վոր ՀԽՍՀ Մատենադարանում հայտնի 36 «Աշխարհացոյց» ձեռագրերի մեծ մասը պահել են և ունեն մատենադարական այդ տեղեկություննը: Մատենադարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրություններից ներկայումս պարզվում ե, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստում ավելցած հենց այդ աղավաղված նախադասություններն են հիմք ծառայել հայութեալ պահապահի վորոշ քանասերների՝ ամեն տեսակ հնարավոր յինթաղբություններ համար, վորոնք, վերջին հաշվով, վերջին թե նպաստել են վիճելի հարցի լուծմանը, այլ ավելի յեն ինձնել այն:

Խորենացու «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների գործն այսուհետև դյուրացնելու համար, անհրաժեշտ ենք համարում տալ այստեղ մեր Մատենադարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների բիբլիոգրաֆիան՝ դասավորված ժամանակագրական կարգով.

1. Մաղկաքաղ հատված «Աշխարհացոյց»-ի առաջաբանից Գրագած ե 12-րդ զարում Մարգիս գրչի կողմից: Զունի վերնագիր: Տեղագրագած ե պատմա-գիտական բնույթ ունեցող նյութերից

ժողովածվի մեջ: Նյութը—թուղթ և: Գրված և միասյուն, բոլոր
գրով (տես թիվ 4166, թերթ 165 բ.):

2. «Աշխարհագիր»: Գրված և 13-րդ դարի վերջերում կամ
14-րդ դարի սկզբներում: Յենթաղրվում և՝ Հեթում թագավորի
յեղբոր ավատգրավիլ լինի: «Աշխարհացոյց»-ի տեքստը լրիվ և,
սակայն առաջարանը տեղակորված և վերջարանի փոխարեն:
Սկսվում և «Աշխարհագիր հատուած բ»-ից: Զունի հեղինակի ա-
նունը: Գրված և մագաղաթի վրա, միասյուն, բոլոր գրով: Վեր-
ջում չունի «Մղոնաշափք»-ը (տես թիվ 1898, թերթ 256 բ—
269 բ): Այս «Աշխարհացոյց»-ի գրչական տարբերությունները
հրատարակել են „Zeitschrift für armenische Philologie“-ի մեջ:

3. «Մովսէսի Խորենացւոյ Աշխարհացոյց»: Գրված և 14-րդ
դարում Պետրոս գրչի կողմից: Աշխարհագրությունը սկզբնական
ընդորինակության ժամանակ չի ունեցել վերնագիր, սակայն,
հետագայում, ուշ շրջանի գրչի կողմից (հավանական և 19-րդ
դարում) ավելացվել և: Գրված և թղթի վրա, յերկսյուն, բոլոր
գրով: Գրիչը գրադեստ անձնավորություն և: Վերջում ունի «Մղո-
նաշափք»-ը և հեղինակի ընծայական վերջարանը (տես թիվ
1267, թերթ 355 ա—363 բ):

4. «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ»: Գրված և 14-րդ
դարում Վարդանի վորդի Դավթի կողմից: «Աշխարհացոյց»-ի
այս տեքստը չի Սկզբանակարանի լավագույն որինակներից ե:
Գրչական տարբերություններից յերեսում և, վոր արտագրված
յերկաթագիր հին որինակներից («այլ» բառը գրված և «այլ»
ձևով, «հյուսիսը», «հիւսիւս» և այլն): Վերջում ունի «Մղոնա-
շափք»-ը, «Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը և հեղինակի
վերջարանը: Գրված և միասյուն, բոլոր գրով: Նյութը—թուղթ և
(տես թիվ 582, թերթ 165 ա—183 բ):

5. «Տեսակի աշխարհաց և հանգամանք երկրի»: Գրված և
1589 թվին: Գրիչն անհայտ և: «Աշխարհացոյց»-ի տեքստը լրիվ
չի: Սկսվում և «Ասիս»-յի հատվածի «Ասորիք»-ից ու վերջանում
Զինաստանի նկարագրությամբ: Թերթ 88 առում, «Իշխանութիւն
աշխարհին մեծաց Հայոց» հատվածում ավելացված և Կիլիկիայի
աշխարհագրությունը՝ տնտեսության մանրամասն նկարագրու-
թյամբ: «Աշխարհացոյց»-ը գրված և թղթի վրա, միասյուն, բո-
լոր գրով (տես թիվ 1770, թերթ 86 բ—116 բ):

6. «Տեսակի աշխարհաց և հանգամանք երկրի»: Գրված և 1594 թվին, Ամերում, Ստեփաննոս գրչի կողմից: Իր բովանդակությամբ համապատասխանում ե նախորդ «Աշխարհացոյց»-ի բովանդակությանը: Գրված ե թղթի վրա, յերկսյուն, բոլոր գրով (տես թիվ 1518, թերթ 163 ա—164 բ):

7. [Աշխարհացոյց]: Վերնագրի տեղը բաց և մնացած: Գըրված և 1597 թվին Ղազար Բաբերդցու կողմից, հավանական ե Բաբերում: Տեքստն սկսվում է անմիջապես առաջարանից («Յաղագա աշխարհագրութեան յաստուածային գիրս ոչ ուրէք գտանեմք ոճով ասացեալ...»), ընդգծելով առաջին յերկու բառերը վորպես վերնագիր: Վերջում ունի «Մղոնաչափք»-ն ու հեղինակի վերջաբանը: Իր բովանդակությամբ համապատասխանում ե 14-րդ դարում գրված Պետրոս գրչի «Աշխարհացոյց»-ին: Գրված ե թղթի վրա, յերկսյուն, նոտր գրով (տես թիվ 1686, թերթ 95 ա—104 ա):

8. «Վասն աշխարհագրութեան»: Գրված ե 16-րդ դարում Գրիգորիս գրչի կողմից: Չունի հեղինակի անունը: Տեքստն ընդհատվում և «Յելրոպա»-յի աշխարհագրության վերջում: Գրված ե թղթի վրա, միասյուն, բոլոր գրով (տես թիվ 2613, թերթ 255 բ—260 ա):

9. «Մովսէսի Խորենացւոյն»: Գրված ե 1600 թվին Հին Զուդայում, Յերեմիա գրչի կողմից: Վերնագիր չունի: Ամենահին ձեռագիրն ե, ուր «Աշխարհացոյց»-ի վերնագրում, ընդորինակող գրչի կողմից, հանդիպում ենք հիշատակված Խորենացու անվանը: Շարունակության մեջ ունի «Մղոնաչափք»-ը և հեղինակի ընձայական վերջաբանը: Գրված ե թղթի վրա, յերկսյուն, նոտր գրով (տես թիվ 2019 (2049), թերթ 257 ա—291 ա):

10. «Վասն աշխարհագրութեան»: Գրված ե 1600 թվին Խիւդանում, Ավետիս Թաղուցու կողմից: Չունի հեղինակի անունը: Տեքստը լրիվ չի—հասցված ե մինչև Յելրոպայի աշխարհամասի Թրակացոց աշխարհի սկիզբը և Սարմատացոց աշխարհի վերջը: Գրված ե թղթի վրա, յերկսյուն, նոտր գրով (տես թիվ 1903, թերթ 275 ա—280 ա):

11. «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ և նշմարիտ Մովսէսի Խորենացւոյն»: Գրված ե 1608 թվին, Պոլսում, Պետրոս գրչի կողմից: Իր բովանդակությամբ համապատասխանում ե 14-րդ

Դարում գրված Դավիթ գրչի որինակին՝ խմբագրական վորոշ փոփոխություններով։ Վերնագրում ավելացված ե Մովսես Խորենացու անունը։ Տեքստի վորոշ տեղերում մտել են ընդմիջարկություններ։ «Աշխարհացոյց»-ը վերջում ունի «Մղոնաչափք»-ը, «Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը և հեղինակի վերջաբանը։ Գրված ե թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 5613, թերթ 277 ա—299 ա)։

12. «Յաղագս աշխարհագրութեան»։ Գրված ե 1625 թվին Մադաթիա արեղայի կողմից։ Տեքստը թերի յեւ—վերջանում ե Վենետիկյան հրատարակության եջ 586 տող 21-ով («Երրորդն ընդ Աղեքսանդրիա, կիսաժամաւ յառաջ մատուցեալ որպէս և ամենհեքեանքն չորրորդն ընդ Ռոգոս, որ է միջին նահանդացըն...»)։ Գրված ե թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 2292, թերթ 91 ա—92 բ)։

13. «Յաղագս աշխարհագրութեան Մովսէսի Խորենացոյն»։ Գրված ե 1624 թվին Աստվածատուր վարդապետի կողմից։ Իր բովանդակությամբ նմանվում ե 14-րդ դարում գրված Պետրոս գրչի որինակին։ Վերջում ունի «Մղոնաչափք»-ը և ընծայական վերջաբանը։ Առաջին անգամ գործ ե ածված «Խրիմ» բառը և պըռփ. Ք. Պատկանյանի կողմից նշված մյուս ընդմիջարկությունները։ Գրված ե թղթի վրա, յերկայուն, նոտր գրով (տես թիվ 2748 (1380), եջ 216 բ—230 ա)։

14. [«Աշխարհացոյց»]։ Գրված ե Պողոս Տյուրիկեցու կողմից 1624 թվին Պոլսում, բովանդակությամբ նմանվում ե Պետրոս գրչի որինակին։ Գրված ե միասյուն, նոտր գրով (տես թիվ 2370 (2373), թերթ 243 բ—261 բ)։

15. «Մովսէս Խորենացոյ ասացեալ է»։ «Աշխարհացոյ»-ի լավագույն տեքստերից մեկն ե։ Գրված ե 1639 թվին Մարտիրոս վարդապետի վորդի Կարապետի կողմից Մովսէս Սուրբ գյուղում։ Մտացողն ե իր հայրը, Մարտիրոս վարդապետը։ Գրված ե թղթի վրա, յերկայուն, բոլոր գրով։ Տեղակորված ե Խորենացու պատմությունից հետո։ Գրչի արած առանձին հիշատակագրություններից յերեսում ե, վոր նա արտագրել ե հին ձեռագրից։ Այսպես մի տեղ նա զբում ե. «Ով սուրբ ընթերցողք, անմեղաղիք լերուք վասն անզրիլ տեղաներուն, զի աւրինակն հին էր ու օսլայ էր ձգած և զօւլէն ոչ էր գրած՝ զայլ աւրինակ չի գտաք որ գրէ <ինք>»։

Վայ ինձ հազար բերան» (թերթ 149 ա): «Աւրինակ մի այլ գտնիք զմացեալ (ն) զբեցէք, այս աւրինակս էնց էր զբած» (156 ա): «Վայ գծաւղիս» թէ ինչ համար տի տամ ստեղծուղիս, որ մեղօք կորուսի զիմ հոգիս և իջէ բաժին գեհենին» (148 ը) (տես թիվ 1883 (1663), թերթ 145 ա—177 ա):

16. «Յաղագս աշխարհագրութեան»: Գրված և 1634 թվին: Գրիչն անհայտ ե: Իր բովանդակությամբ համեմատվում և Պետքուս գրչի «Աշխարհացոյց»-ին: Տեքստը թերի յի: Վերջանում և «Երջանիկ Արաբիայ»-ի նկարագրությամբ: Գրված և թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 4284, թերթ 13 ա—43 ա):

17. «Մավսէսի Խորենացւոյ ասացեալ է, երկրաշափ յաղագս աշխարհագրութեան տիեզերաց»: Գրված և 1639—1652 թվերի ժամանակամիջոցում Ներսես գրչի կողմից՝ Լոռի Ազուր գյուղում: Արտագրված և 1639 թվին գրված Կարսապետ գրչի որինակից: Կարսապետ գրչի պակաս տեղերը պակասում են նաև այստեղ: Զեռագրի ժողովածվում բացի Խորենացու պատմությունից, ավելացվել են նաև Ստեփաննոս Տարոնցու և Արիստակիս Լաստիվերացու պատմությունները: Գրված և մագաղաթի վրա, յերկայուն, բոլոր գրով (տես թիվ 3160, թերթ 596 ը—616 ը):

18. «Յաղագս աշխարհագրութեան»: Գրված և Պողոս երեցի կողմից 1640 թվին: Սա փոքրիկ հատված և «Աշխարհացոյց»-ի առաջաբանից: Վերջանում և Վենետիկյան հրատարակության եջ 587, տող 1-ով («...երբորդն ընդ Ազեքսանդրիս, կիսաժամաւ յառաջ մատուցեալ որպէս և ամենայնքն. Դ ընդ Ռողոս, որ է միշտն նահանգացնն...»): Գրված և թղթի վրա, միասյուն, բոլոր գրով (տես թիվ 1109, թերթ 211 ա—212 ը): Համեմատվում և Մատթեոս աբեղայի որինակին:

19. «Յաղագս աշխարհագրութեան ասացեալում»: Գրված և 1661 թվին: Գրիչն անհայտ ե: Փոքրիկ հատված և «Աշխարհացոյց»-ի առաջաբանից: Գրված և թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 2492 (11), թերթ 56 ա):

20. («Աշխարհացոյց»)—վերնագիր չունի: Գրված և 1663 թվին Յերեվանում Գրիգոր գրչի կողմից: Արտագրված և Լոռի Ազուր գյուղում գրված Ներսես գրչի ձեռագրից: Առաջաբանից պակասում և 11 տող (սկսած՝ «Քանզի որ ի վերայ այրեցածին...», վերջացրած՝ «իսկ Ազանիս ընդ մէջ նաւելով...»): Պակասում են նաև

Տուրուբերանի աշխարհագրության վերջից թերթեր, վորի համար թողած և սպիտակ տեղ՝ պակասը հետագայում լրացնելու համար: Արևելքի աշխարհագրության մեջ պակասում են՝ «Արարիա», «Բաբելոն» և «Միջագետք» հատվածները: Գրված ե թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 3502, թերթ 202 ա—220 թ):

21. «Յաղագս աշխարհագրաբիշան ստոյգ և նշմարիտ Մովսէսի Խորենացոյց»: Գրված ե 1664 թվին: Գրիչն անհայտ է: Արտագրված ե թիվ 5613 ձեռագրից: Վերջում ունի «Մղոնաչափք»-ը, «Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը և հեղինակի ընծայական վերջաբանը: Գրված ե թղթի վրա, յերկսյուն, նոտր գրով (տես թիվ 1717, թերթ 155 ա—170 ա):

22. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյն»: Գրված ե 1665 թվին Յեփրեմ Տաթևացու կողմից: Իր բովանդակությամբ համապատասխանում է Վենետիկյան հրատարակված որինակին: Վերջում ունի «Մղոնաչափք»-ը, ընծայական վերջաբանը և «Այս է քաղաքաց անունքն» աշխարհագրական հատվածը: Գրված ե թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 2291, թերթ 79 ա—105 թ):

23. «Աշխարհացոյց»: Գրված ե 1672 թվին Նահապետ Շոռառթեցու կողմից: Սկզբից թերի յե, սկսվում է «Բ հատուած»-ից: Զունի վերնագիր: Գրված ե թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 3941, թերթ 366 ա—380 ա):

24. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյց»: Գրված ե 1676 թվին Գրիգոր Յերեվանցու կողմից, հավանական է Յերեվանում: Իր բովանդակությամբ համապատասխանում է «Աղվէսագրքի» խմբի «Աշխարհացոյց»-ի որինակներին և ունի նրա մեջ նկատված ընդմիջարկությունները: Վերջում ունի «Մղոնաչափք»-ը: Շարունակվում ե՝ «Չորս գետք են», «Գհեք և գնացք նոցա», և «Անուանք քաղաքաց հնդկաց և պարսից» աշխարհագրական հատվածներով: Սկզբում ունի գեղեցիկ զարգագրություն: Գրված ե թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 1864 (1669), թերթ 269 ա—285 թ):

25. «Տեսակի աշխարհաց և հանգամանք երկրի»: Գրված ե 1678 թվին Ալիփուշարում Գրիգոր գրչի կողմից: Բնովանդակությամբ համեմատվում ե թիվ 1518 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի բովանդակությանը: Գրված ե թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 1482, թերթ 466 թ—467 թ):

26. [«Աշխարհացոյց»]: Գրված ե 1687—97 թվերի ընթացքում Մերդինում Իգնատիոս գրչի կողմից: Զունի վերնագիր: Սկսվում է «Յաղագս աշխարհագրութեան յաստուածային գիրս ոչ ուրէք գտանիմք ոճով ասացեալ...»՝ ընդգծելով առաջին յերկու բառերը վրապես վերնագիր: Արտագրված ե խառն թերթեր ունեցող ձեռագրից: Սովորական առաջարանը չվերջացրած անցնում և Փոքր Ասիայի, ապա՝ Յելլոպայի, Լիբիայի, Հայաստանի և Արևելքի աշխարհագրությանը: Վերջին թերթերը ջնջվել են ու չեն կարդացվում: Գրված ե գեղին թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 2191, թերթ 95 ա—111 ա):

27. «Յաղագս աշխարհացրութեան»: Գրված ե 1691 թվին Ներսես սարկավագի կողմից: Նմանվում է «Աղվէսագրքում» լույս տեսած «Աշխարհացոյց»-ի տեքստին: Շարունակության մեջ ունի «Մղոնաչափք»-ը և ընծայական վերջարանը: Գրված ե թղթի վրա, յերկսյուն, նոտր գրով (տես թիվ 1459 (1665), թերթ 178 ա—190 ա):

28. [«Աշխարհացոյց»]: Գրված ե 17-րդ դարում Խաչատուր քահանայի կողմից: Վերնագիր չունի: Տեքստը թերի յեւ—սկսվում է «Լիբիա»-յից և վերջանում Հայաստանի աշխարհագրությամբ: Գրված ե թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 696, թերթ 88 բ—96 բ 109 բ—116 բ):

29. «Աշխարհացրութիւն»: Աշխարհագրական հատված «Աշխարհացոյց»-ի առաջարանից: Գրված ե 17-րդ դարում: Գրիչն անհայտ ե: Գրված ե թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 1724, թերթ 22 ա—23 բ):

30. Հատված «Աշխարհացոյց»-ի առաջարանից: Շարունակության մեջ ունի «Մղոնաչափք»-ը: Գրված ե 17-րդ դարում: Գրիչն անհայտ ե: Գրված ե թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 1737, թերթ 72 ա—73 ա):

31. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ»: Գրված ե 17-րդ դարում: Գրիչն անհայտ ե: Համեմատվում է «Աղվէսագրքի» տեքստին: Գրված ե թղթի վրա, միասյուն, նոտր գրով: Վերջում ունի «Մղոնաչափք»-ը (տես թիվ 5120, թերթ 78 ա—103 ա):

32. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ»: Գրված ե 18-րդ դարում: Գրիչն անհայտ ե: Բովանդակում ե «Աշխարհացոյց»-ի առաջին կես մասը՝ սկսած առաջարանից մինչև Սարմատացոց:

աշխարհը («Սարմատացոց, որոյ հասարակն յարեւելից...»): Գրված է թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 72 (152), թերթ 207 ա—214 ա): Սա համապատասխանում է «Աղվէսագրքի» խմբի «Աշխարհացոյց»-ներին: Գրված և 18-րդ դարում: Գրիչն անհայտ է:

33. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ»: Բովանդակությամբ համեմատվում է «Աղվէսագրքում» լույս տեսած «Աշխարհացոյց»-ի որինակին: Շարունակության մեջ ունի՝ «Մղնաչափք»-ը, «Չորս գետք են», «Գետք և զնացք նոցա» և «Անուանքքաղաքաց հնդկաց և պարսից»: Գրված և թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 3691 (լւ. 102), թերթ 1 ա—20 բ):

34. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ»: Գրված և 1722 թվին Ալեքսան գրչի կողմից: Բովանդակությամբ նմանվում է «Աղվէսագրքում» լույս տեսած «Աշխարհացոյց»-ի բովանդակությանը: Վերջում ունի «Մղնաչափք»-ն առանց գերջարանի: Գրված և թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 7993, (նախկին Յերեվանի ժողովածուի թիվ 822), թերթ 86 ա—100):

35. «Յաղագս աշխարհագրութեան»: Գրված և Ալեքսան գրչի կողմից 1722 թվին: Հատված և «Աշխարհացոյց»-ի առաջարանից: Վերջանում է Վենետիկյան հրատարակության եջ 587, տող 1-ով («...յերրորդն ընդ Աղեքսանդրիս, կիսաժամաւ յառաջ մատուցեալ որպէս և ամենեքին, չորրորդն ընդ Ռոդոս, որ է միջին նահանգացն...»): Գրված և նոտր գրով, յերկայուն, թղթի վրա (տես թիվ 7993(822), թերթ 135 ա—135 բ): Համեմատվում և 1624 թվին գրած Մատթեոս աբեղայի որինակի հետ:

36. «Յաղագս երկրի և աշխարհաց»: Գրված և 1724 թվին Ավետիս յերեցի կողմից Նոր-Զուղայում: Գրված և թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես թիվ 2271, թերթ 191 ա—192 բ):

Թվարկած «Աշխարհացոյց»-ները, հիմնականում, հինգ խմբի կարելի յերաժանել՝ 1. Կարապետ գրչի որինակի խումբ, 2. Հեթում գրչի որինակի խումբ, 3. Դավիթ գրչի որինակի խումբ, 4. Գետրոս գրչի որինակի խումբ և 5. «Աղվէսագրքում» հրատարակված «Աշխարհացոյց»-ի խումբ:

Կարապետ գրչի խմբին են պատկանում 1640—50-ական թվականներին որինակած ներսես գրչի ձեռագիրը և 1663 թվին որինակած Գրիգոր Յերեվանցու որինակը:

Հեթում գրչի որինակից խմբագրական մեծ վտափոխություն-ներով արտագրվել են յերեք ձեռագիրը—1589 թվի անհայտ գրչի ձեռագիրը, 1678 թվի Դրիգոր գրչի ձեռագիրը և 1594 թվի Ստեփաննոսի ձեռագիրը։ Այս յերեք ձեռագրերի վերնագիրը, ինչպես ասել ենք, «Տեսակ աշխարհաց և հանգամանք երկրի» ե։

Դավիթ գրչի խմբին պատկանում են յերկու ձեռագիր «Աշխարհացոյց»-ներ, վորոնցից մեկն որինակված և 1608 թվին Պետրոս գրչի կողմից, իսկ մյուսը՝ 1664 թվին անանուն գրչի կողմից։

Ամենից շատ որինակվածները Պետրոս գրչի խմբին պատկանող «Աշխարհացոյց»-ներն են։ Մենք ունենք այս խմբին պատկանող 14 որինակ «Աշխարհացոյց» ձեռագիր, վորոնք գրված են զանագան ժամանակներում։ Այս խմբին են պատկանում նաև վենետիկյան համառոտ համարված «Աշխարհացոյց»-ի հրատարակության համար գործածված ձեռագրերը։ Այս որինակից ե, ինչպես կտեսնենք հետո, խմբագրված նաև «Աղվեսագրքում» հրատարակած «Աշխարհացոյց»-ը։

Վերջապես, «Աղվեսագրք» խմբին պատկանող յոթ որինակ ձեռագրեր, վորոնցից գրելու թվականն ունեն միայն չորսը։ Այս խմբի հնագույնը—1665 թվի ընդորինակությունն ե, այսինքն՝ գրված ամենահին հրատարակությունից յերեք տարի առաջ։

Դավիթ գրչի խմբի «Աշխարհացոյց» որինակները, համեմատաբար, լրիվ են, վերջում ունեն «Մղոնաչափք»-ը, «Աստեղաբաշխական երկրաչափութիւն»-ը և հեղինակի ընծայական վերջաբանը։ Պետրոս գրչի խմբի «Աշխարհացոյց»-ում անդամակատվել է «Աստեղաբաշխական երկրաչափութիւն»-ը։ Հեթում և Կարապետ գրչի որինակները չեն պահել անգամ «Մղոնաչափք»-ը։

Բերված այս «Աշխարհացոյց»-ների, ինչպես և տպագիր «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրությունից պարզվում ե, վոր մեղ հասած ամենալավագույն և հնագույն որինակները կարապետ և Կարգան գրիների որինակներն են։ Այդ որինակները, ինչպես յերեսում և նրանց տեքստերի ուշադիր վերլուծությունից, մեր կարծիքով արտագրված են X—XI դարի ընդորինակություններից։ Նրանց նախագաղափար որինակում բառանձատում գեռ գոյություն չի ունեցել։ Զի գործածվել նաև վորոշ բառերում «Լ» տառը («այլ»-ը գրվել ե «այդ» ձեռվ և այն)։ Այս որինակների

ՆԱԽՎԱՐՄԱՓԱՐ
ՈՐՐԱՍԱ

?

ՄԵԶ ԶԴԱՍԱԾ
ԱՆԱՅՅ

1639 թ.
ԿԱՐՄԻՐ
ԳՐՈՒ

XII - 2
ՄԱՐԳԱՆ
ԳՐՈՒ

1640 - 52 թ.
ՆԵՐԱՏՍ
ԳՐՈՒ

XIII - 2 ՎԵՐԱԿ
ՀԵԹՈՒՄ

1589 թ.
ՎԵՐԱԿ

1594 թ.
ՄՏԵՎԱՆ

ՄԵԶ ԶԴԱՍԱԾ
ԱՆԱՅՅ

1663 թ.
ԳՐՈԳՈՐ

1678 թ.
ԳՐՈԳՈՐ

XV - 2
ՊԵՏՐՈՎ

1687 թ.
ԽԵՂԱՏ

XVII - 2
ԽԵՂԱՏ
ԳՈՒ

1792 թ.
ԽԵՂԱՏ
ԳՈՒ

1664 թ.

1597 թ.
ՂԱՅԱ
ՀՈՅԱՅ

1600 թ.
ՎԵՐԱԿ
ՀՈՅԱՅ

XVI - 2
ԳՐՈԳՈՐ

ԱԿԱՍԱԳՐՈՒ
ԱՇԽԱՉԱԿՈՒՐԵՑ
ՏԵՐՈՒ

XVII - 2

XVIII - 2

1722 թ.
ՎԵՐԱԿ
ՀՈՅԱՅ

XVII - 2

1621 թ.
ՆԵՐԱՏՍ

1624 թ.
ՎԱՐԱՎԱՏՍ
ՎԱՐԱՎԱՏ

1634 թ.
ՎՈՐՈՎ
ՅԵՐՈՎ

ՆԱԽՎԱՐՄԱ
ԸՆԹԱՐԱԾՄԱՐ

1661 թ.

1600 թ.
ՎԵՐԱԿ
ՀՈՅԱՅ

1672 թ.

1665 թ.
ՅԵՒԹԵՄ
ՏԱՐԱՎՈՐ

XVII - 2

1724 թ.
ՎԵՐԱԿ
ՀՈՅԱՅ

XVII - 2

1676 թ.
ԳՐՈԳՈՐ
ՅԵՐԱՎՈՒ

1722 թ.
ՎԵՐԱԿ
ՀՈՅԱՅ

ՀԽՍՀ մատ. «Աշխարհացոյց»-ների մոտավոր ճյուղագրությունը՝ մեզ չհասած
նախագաղաքար որինակների համեմատությամբ. Ճյուղագրությունը կազմված
մոտավոր ձևով. Ձեռագրերի մեջ յեղած կապի մասին չկան կոնկրետ
հիշատակություններ.

համեմատությամբ, մյուս խմբի «Աշխարհացոյց»-ների մեջ մտել են ընդմիջարկություններ, վորոնց վրա մանրամասն կանգ կառնենք համապատասխան գլխում: Յեվ, վերջապես, Կարապետ և Վարդան գրիչների «Աշխարհացոյց»-ները՝ մյուսների համեմատությամբ՝ ունեն ընտիր ընթերցումներ: Այս ձեռագրերի հիման վրա հնարավոր ե դառնում Վենետիկյան համեմատական հրատարակություն «Աշխարհացոյց»-ի տեքստում կատարել գրչական վորոշ ուղղումներ:

Մեզ հասած «Աշխարհացոյց»-ների հնագույն և լավագույն որինակների նախագաղաժար որինակի հետ ունեցած հարաբերությունը, ինչպես և մյուս որինակների իրարից ունեցած կախումը ավելի պարզ դարձնելու համար, անհրաժեշտ ենք համարում տալ «Աշխարհացոյց»-ների մոտավոր հյուղագրությունը (տես Էջ 19):

ՍՈՒԲՐՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՅ»-Ի ՀՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ

ՅԵՐԵ և գրված «Աշխարհացոյց»-ը—ահա հետեւյալ կարևոր հարցը, վորի ճիշտ լուծումը հնարավորություն կոտա ճիշտ ձևով լուծել նաև նրա հեղինակի հարցը: Դժբախտությունը նրանումն է, վոր մեր հին հայկական մատենագրերը կոնկրետ վոչինչ չեն ասում «Աշխարհացոյց»-ի գրելու ժամանակի վերաբերյալ: Գիտենք միայն, վոր Թովմա Արծրունին ոգտվել է «Աշխարհացոյց»-ից: Դրա հիման վրա համոզված կարող ենք ասել մի բան, վոր «Աշխարհացոյց»-ը Խ դարից առաջ գրված մի աշխատություն է: Խ դարից առաջ, բայց յերբ, այստեղ արդեն մատենագրերը չեն ոգնում մեզ լուծելու առեղծվածը: Հարցի լուծման միայն հնարավոր միջոցը մնում է իրեն «Աշխարհացոյց»-ի տեքստի վերլուծությունը: Բայց այստեղ մեղ հանդիպում է մի այլ գժվարություն—«Աշխարհացոյց»-ը մեզ չի հասել իր ավտոգրաֆ որինակով: Մեզ հասած «Աշխարհացոյց»-ները ընդորինակություններ են. նրանք արտագրվել են միջնադարյան գրիչների կողմից, յենթարկվել են խոշոր փոփոխությունների և այժմ բավականաշափ տարբերվում են իրարից:

Մեզ հասած ու հրատարակված «Աշխարհացոյց»-ներից զգալի չափով տարբերվում են մանավանդ Վենետիկյան միարանու-

Թյան հրատարակած «Աշխարհացոյց»-ը Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստերից։ Այդ յերկուսի մեջ յեղած տարբերություններն այնքան մեծ են, վոր ընդունված ե առաջինին ասել համառոտ խմբագրություն, իսկ յերկրորդին՝ ընդարձակ խմբագրություն։

«Աշխարհացոյց»-ի այս տեքստերի վերաբերյալ մեր աղբյուրագիտության մեջ գոյություն ե ունեցել յերկու տարբեր տեսակետ։ Գերմանացի գիտնական պրոֆ. Հ. Մարկվարտն իր նշանավոր «Eransahr nach d. Geographie des Ps. Moses Xorenaci» աշխատության մեջ համեմատելով ընդարձակ և համառոտ համարված «Աշխարհացոյց»-ների Արևելքի հատվածները, յեկել ե այն յեղրակացության, վոր Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ը հեղինակի նախնական տեքստն ե, իսկ վենետիկցիների համեմատական «Աշխարհացոյց»-ը առաջինի վատագույն համառոտումը։ «Der Abschnitt über Iran,—ասում ե նա,— würde zu dem Beweise genügen dass die vollständigen Rezension (A) den ursprünglichen Text des Werkchens enthält... wogegen die abgekürzte Rezension (3) ein dürttigen und schlechter Auszug daraus ist»¹.

Տարբեր յեղրակացության ե հանգել այդ նույն հարցում ակադ. Հ. Մանանդյանը։ Նա իր «Խորենացու առեղծվածի լուծումը» աշխատության մեջ համեմատելով վնչ միայն «Աշխարհացոյց»-ների Արևելքին վերաբերվող հատվածները, այլ և «Աշխարհացոյց»-ի մյուս մասերը, յեկել ե հետեւյալ յեղրակացության։ «Սուքրյանի հրատարակած բնագրի համեմատությունը համառոտի հետ պարզ ցույց ե տալիս, վոր տպագրված յերկու հրատարակությունն ել համառոտված են «Աշխարհացոյց»-ի նախնական ընդարձակ բնագրից, վորոնք ծագում են հնագույն մայր բնապերից»²։

Պրոֆ. Մարկվարտի և ակադ. Հ. Մանանդյանի յեղրակացությունների հիմքը վենետիկյան և Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ների տեքստերի համեմատությունն ե հանդիսացել Այլ պատկեր ենք մենք ունենում, յերբ համեմատության

1 I. Markwart, Eransahr nach d. Geographie des Ps. Moses Xorenaci, Berlin, p. 4.

2 Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածի լուծումը, եջ 15:

ժամանակ չենք սահմանափակվում միայն հրատարակված «Աշխարհացոյց»-ներով, այլ համեմատում ենք նաև հրատարակության մեջ չոգտագործված գրչագրերը։ Փորձելով նման համեմատություն կատարել, մենք յեկել ենք այն վճռական համոզման, վոր Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ը վոչ միայն եղեալական տեքստ չե և Վենետիկյան «Աշխարհացոյց»-ում վոչ միայն կան մի շարք հատվածներ, վորոնք նախագաղափար որի նակում յեղել և կրծատված են Սուքրյանի «Աշխարհացոյց»-ում, ինչպես շատ ճիշտ նկատել և ակադ. Հ. Մանանդյանը, այլ և Սուքրյանի «Աշխարհացոյց»-ը յենթարկվել և ուշ շրջանում մեծ խմբագրության: Նրա մեջ կատարվել են գգալի փոփոխություններ: Սուքրյանի «Աշխարհացոյց»-ում նկատվող աղավաղումների և խմբագրման փաստը ցույց տալու համար մենք անհրաժեշտ ենք համարում նշել մի շարք փաստեր:

1. Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի տեքստում միևնույն գաղափաները հիշված են յերկու տարբեր տեղերում, վորոնցից մեկը, մեր կարծիքով, «Աշխարհացոյց»-ի նախնական բնագրից ոգտըզվածն ե, իսկ մյուսը—ուշ շրջանի խմբագրի կողմից այլ աղբյուրներից ոգտված և ավելացրած։ Այդպիսի կրկնողություններ են հանդիսանում։

ա) «Առէ», «Գիղան», «Դլմունք»—Քուստի Կապկոնի աշխարհագրության մեջ (եջ 40, տող 22), «Առէ», «Գիլք», «Դիլմունք»—Մարաց յերկրում (եջ 41, տող 3):

բ) «Խուժաստան»—Քուստի Նմոռջի աշխարհագրության մեջ (եջ 40, տող 7), «Խուժաստան»—Ելամացոց աշխարհում (եջ 41, տող 5):

գ) «Կոշմ», «Վարկան», «Ապրշահը», «Մըլ», «Մոստ», «Հրա», «Կատաշան», «Գողկան»—Քուստի Խորասանում (եջ 40, տող 14), «Կոշմայ», «Վրական», «Ապրշահ», «Ամը», «Մոստ», «Հրեւ», «Գաղշան», «Փողկան»—Արյաց աշխարհում (եջ 42, տող 2—3):

Այս կրկնողությանը մենք չենք հանդիպում «Աշխարհացոյց»-ի համառոտ համարված որինակում։ Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի տեքստում, պարզ ե, վոր այդպիսի կրկնողություններ կարող են առաջ գալ վոչ թե նախնական բնագրի կրծատման, այլ նախկին տեքստի նոր աղբյուրի հիման վրա խմբագրման դեպքում։

2. Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի իրանի հատվածի «Քուսափի կապկոհ»-ում հիշվում են «Հայք»-ը, «Վիրք»-ը և «Աղվանք»-ը: Այս ամբողջ հատվածը, պարզ ե, վոր հետագա հեղինակի գործ ե, վորովհետև «Աշխարհացոյց»-ի նախնական բնադրի հեղինակը, վորը մանրամասնաբար տվել ե այդ յերկրների աշխարհագրությունը, կարիք չեր զգա դրանք նորից կրկնել իրանի աշխարհագրության մեջ և տալ այնպիսի ընդհանուր տեղեկություններ, ինչպիսին՝ «Արմն (որ է) Հայք», «Վարչան», որ է «Վիրք», «Ռան», որ է Աղուանք», «Բաւասական», «Ծիսական» և այլն (տես եջ 40, տող 20—22):

3. «Աշխարհացոյց»-ի վենետիկյան համառոտ համարված որինակի տեքստից յերկում ե, վոր նա գրվել ե այն ժամանակ, յերբ Արարիայում պետական միավորում գետ չեր կատարված— «Ապառաժ», «Երջանիկ» և «Անապատ» Արարիաները հիշատակված են առանձին-առանձին, չի հանդիպում նաև մեզ վորեն հիշատակություն, վորը հիմք տար յենթադրել, վոր արարները արշաված լինեցին դեպի Անդրկովկաս և Պարսկաստան: Իսկ Ոռվագրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստից յերկում ե, վոր նրա տեքստը յենթարկվել ե զգալի փոփոխության ուշ շրջանի խմբագրի կողմից: Վերջինս ավելացրել ե մի շարք այնպիսի փաստերի: հիշատակություն, վորոնք վկայում են, վոր արարները վոչ միայն դուրս են յեկել իրենց բուն յերկրից, այլ և նվաճելով Հայաստանը, արդեն կարողացել են թողնել իրենց լեզվական վորոշ ազգեցությունները: Սյսպես՝ Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի խմբագրի խոսելով Աղձնիքի Քաղիքիթ գետի մասին, ասում ե, վոր նրան «Շիթմա կոչեն տաճիկք» (եջ 30, տող 28), Նկարագրելով Ապառաժ Արարիայի շրջանները, նրանցից մեկում, Փամանիտում, հիշում ե Փառան ավանը արարական անունով («զոր կարծեմ ի տաճկաց Մաքա կոչել») (եջ 37, տող 4):

4. Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի տեքստը կազմվել ե այնքան ուշ, վոր նրա խմբագրող հեղինակին արդեն ծանոթ ե յեղել Վոլգայի ափերում, խաղարների տեղում թուրքերի գտնվելը: Սյսպես՝ Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի խմբագրող հեղինակն ասում ե. «Հստ հիւսիսոյ են ազգ թուրքաց և բուլղարաց» (եջ 25, տող 22):

Հիմք կա անգամ յենթադրելու, վոր Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի խմբագրող հեղինակն ոգտագործել ե

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության սխալաշատ մի որի-նակ, վորից համառոտվել և առաջինը և յերկրորդը: Այդ յերեսում ե վենահամար կյանք իմբի «Աշխարհացոյց»-ի տեքստում յեղած գրչա-կան այն սխալներից, վորոնք կրկնվում են նաև Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի տեքստում: Այդ առթիվ կարելի յե նշել հետևյալ փաստերը:

ա) «Աշխարհացոյց»-ի նախնական բնագրում հիշվել ե այն մասին, վոր Տուքրութերանում կա «մաշ կարմիր և սպիտակ», վորը ձիշտ ձեռվ պահել են մեր Մատենադարանի «Աշխարհացոյց»-ների հնագոյն գրչագրերը: «Աշխարհացոյց»-ի արտագրիչներից մեկը «Աշխարհացոյց»-ում սա աղավաղել և դարձրել ե «մաշկամիրգ»: Վենահամար կյանք և Սուքրյանի հրատարակած խմբի «Աշխարհացոյց»-ների ընդորինակող գրիչներն ոգտվելով սխալաշատ որինակից, թույլ են տվել նույն սխալները (տես Վենետ. հրատ. եջ 608, տող 3 և Սուքր. հրատ. եջ 31, տող 27):

բ) «Աշխարհացոյց»-ի նախնական բնագրում հիշվում ե այն մասին, վոր Բարձր Հայքում կա «ջերմուկս և աղս և զամենայն պարարտութիւն» ինչպես մեր մատենադարանի լավագույն գըր-չագրերումն ե: Համառոտ և ընդարձակ համարված «Աշխարհա-ցոյց»-ների ընդորինակողները ոգտվելով սխալաշատ որինակից, «աղը» ընդորինակել են «աղտս» ձեռվ («ջերմուկս և աղս և զամենայն պարարտութիւն») (տես Վենետ. հրատ. եջ 607, տող 16, Սուքրյանի հրատ. եջ 30, տող 5):

գ) «Աշխարհացոյց»-ի նախնական բնագրում հեղինակը խո-սելով յերկրագնդի գոտիների մասին, հիշում ե, վոր այդ գոտի-ներից յերկուսը գտնվում են հարավում, իսկ «զայլ և փեցն ի նմանէ յառաջնային կոյս», ինչպես մեր Մատենադարանի «Աշ-խարհացոյց»-ի լավագույն գրչագրերն են: Համառոտ և ընդար-ձակ «Աշխարհացոյց»-ների ընդորինակող գրիչներն ոգտվելով սխալաշատ որինակներից «յառաջնայինը»-ը աղավաղել են «յար-ջային կոյս» (տես Վենետ. հրատ., 586, տող 19), «յարջն կոյս» (տես Սուքր. հրատ. եջ 6, տող 11):

Նման սխալներ տասնյակներով կարելի յե թվել: Այսպիսով պարզվում ե, վոր Սուքրյանի հրատարակած տեքստը ևս իդեա-լական տեքստ չի, նա վոչ միայն կրծատվել ե, այլ և խմբագրվել ե ուշ շրջանում: Ընդորինակությունների ժամանակ կատարված են բավականաշատ գրչական աղավաղումներ:

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅԵ»-ի ՎԵՐՆԱԳՐԻ ՀԱՐՅԸ

«Աշխարհացոյե»-ի վերնագրի պարզաբանման հարցն եյական նշանակություն ունի հեղինակի հարցի լուծման խնդրում։ Նրա ճիշտ լուծումը մեծ չափով կոգնի մեզ աղատվելու «Աշխարհացոյե»-ի Խորենացուն վերագրելու կանխակալ տրագիցիոն կարծիքից։

Վենետիկյան և նախորդ հրատարակություններում «Աշխարհացոյե»-ը, ինչպես հայտնի յե, վերնագրված ե յեղել «Աշխարհացոյե Մովսէսի Խորենացւոյ», Սեն-Մարտենի հրատարակած որինակը — «Աշխարհացոյե ստոյ Մովսիսի Խորենացւոյ», իսկ Սուբրյանի հրատարակածը — «Աշխարհացոյե» (վերջինիս Փրանսերեն թարգմանության վերնագիրն ե՝ «Geographie de Moïse Coréne d'aprés Ptolémée»)։

Տպագրված «Աշխարհացոյե»-ների այս վերնագրերը, պիտի խոսովվանել, քիչ են ոգնում մեզ պարզելու սկզբնական բնագրի վերնագիրը, վորովինետե այդ վերնագրերը, ինչպես կտեսնենք քիչ հետո, XVII դարից դենը չեն անցնում։ Հարցի լուծման ավելի վստահելի աղբյուրները մնում են ձեռագիր «Աշխարհացոյե»-ների վերնագրերը։ Պիտի խոսովվանել սակայն, զոր այսուղ մեզ հանդիպում ե մի մեծ դժվարություն — գրչագիր «Աշխարհացոյե»-ների վերնագրերը խիստ տարբերվում են իրարից։ ՀԽՍՀ մատենադարանի գրչագրերն ունեն հետեւ հետեւ վերնագրերը։

1. «Աշխարհագիր»,
2. «Տեսակք աշխարհաց և հանգամանք երկրի»,
3. «Աշխարհացոյե»,
4. «Յաղագս աշխարհագրութեան»,
5. «Յաղագս աշխարհագրութեան ստույգ»,
6. «Յաղագս աշխարհագրութեան ստույգ և ճշմարիտ Մովսէսի Խորենացւոյ»,

և 7. «Մովսէսի Խորենացւոյ ասացեալ է, երկրաչափ յաղագս աշխարհագրութեան»։

Յեթե տպագիր «Աշխարհացոյե»-ների վերնագրերը համեմատելու լինենք ձեռագիր «Աշխարհացոյե»-ների վերնագրերի հետ, ապա կտեսնենք, զոր Վենետիկյան համեմատական համարգած «Աշխարհացոյե»-ի վերնագիրը նմանվում ե յերկրորդ խմբի

վերնագրին, այն տարբերությամբ միայն, վոր այսակա տվելաւ ցած և Մովսես Խորենացու անունը:

ԵՇԻՐՏԵՑՈՅՑ

0803

ՄԱԿԱԴՄԻ ՊԵՐԵԿԱՑԽԱՅ:

Յաղացո աշխարհադրսովէ՝ յածային զիրս ոչ ուժք գտանուեմք ոձով ասացնալ, այլ դոյջն ինչ գուն ուրեք, և այս դժուարահաս, և ատամնելի, առդ մի զի անհասը դոցա եղեալ մեզ, յարտաքինսն հարկաւորիմք ձեռնարկել, որով զաշխարհագրութիւն յարմատեցն ՚ի ճանապարհորդութէ, և ՚ի նաև արկութէ, և սուսուդեցն յերկրաշափութէ: Այս նույն Երկրաշափութիւն գտամ յասուն զարաշխութէ: Ի, անզի ու եղենալ առաջինքն, խոհային, թէ որք առզիւ Երկրի ըստ որովք են կացեալը մասամբ Երկրայսոյ բոլորամին: և զմեծութիւն տունցեան, և զիշերոց, և զոր ՚ի վր երկրի, և զոր ՚ի սերբոյ Երկրից միւս շերելով, յայտնեն և զբակութիւն մարդկան, ՚ի միջօրական կծ են զդին առնելով, առաջարիզական չափու, ըստ ճանապարհորդութէ: և ըստ ճամարկութէ: իմացնալ զիայցանն, և զիստորիին, զոր ակու և այսակն Երեւանը: Վահազի ՚ի վր սյունած ին բերեն կնուզ անառեսակը: մոտանեն, և ծագին: Ռազմ փուր

ՍԵՆ-ՄԱՐՏԻՆԻ հրատարակած «Աշխարհացոյց»-ի առաջին եջը, վորը վերնագրված և «Աշխարհացոյց ստոյ Մովսիսի Խորենացոյց»:

Հայութ աշխարհապետ
Հանոյի և Հայութի մայ
Եփ իսկէն այս յ

աղաւու աղաւու
պիս գրութիւն ան
աղել զիր ոչուքեւ
գոմենէն անու առաջեւ
ուշուակ ինչ որու որեւ
անց որեւուր հաւ և
աղաւու աղաւու
Հարվան պահ հասաւ
պահ եղեաւ Առ հարվ
աւորին այրուած ին
աղել որեւ որութիւն
ու հարութիւն այրութիւն
և համարական ու դուս և
նութեաւորին Առ հարվ
եղել արքա Համ ու Թիւ
ինչ երես ըստութիւն գում
առաւել բայց անութիւն
անութիւն անութիւն
մեն խորիս Առ ու սեղիս
եղել մատ որու հարութիւն
համարակ արքա գում

**Մատենադարանի թիվ 1717 ձեռագրի «Աշխարհացոյց»-ը, գորի կերնագրում
Խորենացին հիշատակագրվում է «Ստոյք և Հմարիա»—«Յաղաք
աշխարհագրութեան ստոյք և Հմարիա Մոլուեսի Խորենացոյց»:**

Սես-Մարտենի հրատարակած «Աշխարհացոյց»-ի վերնագիրը նմանվում է V խմբին, դարձյալ այն տարբերությամբ, վոր այստեղ ևս ավելացած է Խորենացու անունը և «ստոյգ» բառն աղավաղվել, «ստոյց» ձեն և առել*: Գրչական աղավաղման այս փոքրիկ փաստը հարկավոր է մատնացույց անել վորպիսղի պարզ լինի՝ թե մի տասի սխալի պատճառով ինչպիսի մեծ թյուրիմացություններ կարող են առաջանալ: Մի գեղքում «Աշխարհացոյց»-ը հասկացվում է վորպես ստույգ Խորենացու գործ, իսկ մյուս գեղքում—սուլտ Խորենացու (տես էջ 26 և 27 նկարները):


«Յաղագս աշխարհագրութեան ստոյգ Մովսէսի Խորենացոյց»
«Յաղագս աշխարհագրութեան ստոյ Մովսէսի Խորենացոյց»:

Վոր այդ խմբի «Աշխարհացոյց»-ների նախագաղափար որինակում «ստոյգ» ե յեղել—դա կասկածից դուրս ե: Այդ խմբին պատկանող Հինչ մատնաղարանի հնագույն ձեռագիրը (թիվ 582) պահել ե «ստոյգ» ձեւը: Ընդորինակող գրչի անուշագրության պիտի վերագրել, վոր նա «գ» տառը մոռացել, բաց և թողել: Այս փաստը վորոշ չափով ե հիմք ե հանդիսացել վորոշ բանասերների մոտ յենթագրելու, վոր կա յերկու Խորենացի—ճիշտ Խորենացի և սուլտ Խորենացի: Գրչական այս փոքրիկ փաստը ցույց է տալիս, թե վորքան զգույշ պիտի լինել հետևությունների մեջ, յերբ այդ արվում է վորեն տեքստի հիման վրա: Ցերպեմ տառակերությունը կարող է մեծ վնասներ հասցնել հնագույն մեր մատնաղրին:

Ուշագրության արժանի փաստը, վորն անմիջապես աշքի յե գարնում «Աշխարհացոյց»-ների հնագույն զրչագրերի վերնագրերն ուսումնասիրելիս—դա Խորենացու անվան բացակայությունն է 1600 թվականից առաջ զրած «Աշխարհացոյց»-ների վերնագրերում: Նա չի հիշատակված վահա Տարչիս գրչի «Աշխարհացոյց»-ի ծաղկաքաղ հատվածում (թիվ 4066, թերթ 165 բ.), վոչ XIII դարի վերջում Հեթում թագավորի յեղբոր կողմից ընդորինակված «Աշխարհացոյց»-ի որինակում (տես Zeitschrift für armenische Philologie, 1902, էջ 104), վահա XIII դարում ընդորինակված Վարդան գրչի որինակում (տես թիվ 582, թերթ 165) և վահա էլ XV—XVI դարերում ընդորինակված մյուս «Աշխարհացոյց»-ների վորեն մեկի վերնագրում: Բացառություն

* Անկառած, վերնագիրը հնարովի չե, այլ ոգտված է ձեռագրելց:

Ե կազմում միայն XV դարում Պետրոս գրչի ընդորինակած «Աշխարհացոյց»-ը, վորը վերնագրված և «Մովսէսի Խորենացոյ աշխարհացոյց»։ Սակայն այս վերնագրի պալեոգրաֆիկ ուսումնասիրությունից յերեսում ե, վոր Խորենացու անունն ուշ շրջանումն և ավելացված։ Խորենացու անունը գրված է վոչ թե տեքստի հետ, XV դարում, այլ ավելացված և ուշ շրջանում, հավանական և XVIII—XIX դարերում։



Մատենադարանի Պետրոս գրչի «Աշխարհացոյց»-ի վերնագիրը, ուր Խորենացու անունը ավելացված և ուշ շրջանի գրչի կողմէց։

Պետական Մատենադարանի ամենահին ձեռագիրը, ուր հանդիպում ենք առաջին անգամ Խորենացու անվան հիշատակությանը «Աշխարհացոյց»-ի վերնագրում—դա 2029 թվակիր ձեռագիրն է, գրված Զուղայում 1600 թ. Յերեմիա գրչի կողմից (տես թերթ 257 ա)։ Նրանից հետո գրված բոլոր «Աշխարհացոյց»-ների վերնագրերում սկսում ե հիշատակվել Խորենացու անունը։

Ինչու պիտի բացատրել 1600 թվականից առաջ գրված «Աշխարհացոյց»-ների վերնագրերում Խորենացու անվան բացակայությունը։ Ցեղե Խորենացու անվան չհիշատակվելու այդ փաստը մեզ հանդիպելիս լիներ «Աշխարհացոյց»-ի հնագույն գորոշ որինակներում, գուցե հնարավոր լիներ այդ բացատրել ընդուրինակող գրչի անփութությամբ, չնայած վերնագրում այնքան

Ել հավանական չեւ այդպիսի անփութությունը: Բայց այստեղ բացառությունների մասին չեւ խոսքը, այլ համատարած մի յերևություն: Մնում ե, ուրեմն, մի հնարավոր յեզրակացություն, վոր հին ձեռագիր «Աշխարհացոյց»-ների ընդորինակությունների վերնագրում չի հիշատակվել Խորենացու անունը: Մինչև XVI դարը «Աշխարհացոյց»-ը դեռ չի հանաչվել Խորենացու հեղինակությամբ: XVI դարում ե, վոր ստեղծվում ե այդ կարծիքը, ընդհանրականանում և այնուհետև սկսում ե հիշվել բոլոր ընդորինակողների մոտ: Այդ տեսակետից հետաքրքիր փաստ կարող ե հանդիսանալ ՀԽՍՀ մատենադարանի թիվ 1267 ձևուագրի «Աշխարհացոյց»-ի վերնագիրը, վորը գրված ե XIV դարում: Ձեռադիրն ընդորինակող Պետրոս գրիչը չի հիշատակում «Աշխարհացոյց»-ի հեղինակին, բայց XVIII դարում մի այլ գրիչ, վորն արդեն ծանոթ ե յեղել «Աշխարհացոյց»-ի Խորենացուն վերագրվելու փաստի հետ, անհրաժեշտ ե գտել ավելացնել Խորենացու անունը:

XVI—XVII դարերում, յերբ աշխարժանում ե առևտրական կապիտալը և սկսում ե համեմատարար ավելի ուշադրություն գարձնել գրական գիտությունների, մասնավորապես աշխարհագրություններ գրելու և ընդորինակելու գործի վրա, հավանական ե՝ ընդորինակող գրիչներից մեկն անհրաժեշտ ե գտել նշանակել «Աշխարհացոյց»-ի հեղինակը: Բայց ոչ եր այդ խոշոր գիտնական հեղինակը, վորին կարելի յեր վերագրել «Աշխարհացոյց»-ը և ահա ընդորինակող գրիչը փորոշում ե հոգուտ Խորենացուն, վորովհետև նա յեր ամենամեծ հեղինակություն վայելողը: Այսուհետև սկսում ե աշխարհագրությունը ճանաչվել Խորենացու հեղինակությամբ և գործ ե ածվել վերնագրում նրա անունը:

Հարց ե առաջ գալիս՝ չունե՞ք արդյոք «Աշխարհացոյց»-ի նախագաղափար որինակը վորենք վերնագիր, և յեթե ունե՞՝ ինչպես եր նա վերնագրված:

Փորձենք քննել այդ հարցը:

Ձեռագրի մեր բերած «Աշխարհացոյց»-ների վերնագրերից առաջին խմբի վերնագիրն ե «Աշխարհագիր»: Այս վերնագիրն առաջին անգամ գործ ե ածված Հեթում թագավորի յեղոր ձեռագրում: Այսուղի, սակայն, ինչպիս մենք ասել ենք «Աշխարհացոյց»-ի բիբլիոգրաֆիայի բաժնում, «Աշխարհացոյց»-ի առաջաբանը տեղափորված ե վերջարանի փոխարեն, իսկ «Աշխարհա-

ցոյց»-ը սկսվում ե «Բ հատածից», իսկ վորովհետև մենք գիտենք, վոր այդ հատվածը, սովորաբար «Աշխարհացոյց»-ներում ունի «Աշխարհագիր» վերնագիրը, ուրեմն՝ այդ վերնագիրը վհչ թե «Աշխարհացոյց»-ի ընդհանուր վերնագիրն ե, այլ նրա մի հատվածի: «Բ հատած»-ի վերնագրի մասին խոսք կլինի հետո:

Զեռագրի յերկրորդ խմբի վերնագիրն ե «Տեսակ աշխարհաց և հանգամանք երկրի»: «Աշխարհացոյց»-ների այս խումբը խմբագրվել ե Կիլիկյան շրջանում, վոչ շուտ XIII դարից: Այս խմբի «Աշխարհացոյց»-ի տեքստերում ավելացված ե Կիլիկիայի տնտեսական աշխարհագրությունը, վորը բացակայում է «Աշխարհացոյց»-ի մյուս որինակներում և կատարված փոփոխությունների համաձայն փոփոխվել ե նաև վերնագիրը: Այս վերնագիրը սկսում է դործ ածվել կիլիկյան շրջանում և նախկին «Աշխարհացոյց»-ի վերնագիրը չե:

Յերրորդ, չորրորդ և հինգերորդ խմբի «Աշխարհացոյց»-ների վերնագիրը փաստորեն միենույն խմբին են՝ պատկանում: Զեռագրերի ուսումնասիրությունից յերևում ե, վոր այդ խմբի «Աշխարհացոյց»-ների վերնագիրը սկզբում յեղել և «Յաղագս աշխարհագրութեան», հետագայում՝ սրա վրա ավելացվել ե «ստոյգ» բառը և դառել և «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ», իսկ ավելի ուշ՝ «ավելացվել ե «ճշմարիտ» ու «Մովսէս Խորենացի» բառերը և դառել «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ» և ճշմարիտ Մովսէսի Խորենացւոյ»:

«Յաղագս աշխարհագրութեան ստոյգ» վերնագիրը, պիտի առել, մեզ հայտնի վերնագրերից ամենահինն ե, սակայն այս ևս կասկածի յե, վոր «Աշխարհացոյց»-ի վերնագիրը լինի: Այսուղ, հագանական ե, վերցվել ու գործ են ածվել «Աշխարհացոյց»-ի տեքստի առաջին յերեք բառերը: «Աշխարհացոյց»-ը, ինչպես հայտնի յե, սկսվում է «Յաղագս աշխարհագրութեան <ստոյգ> յաստուածային գիրս ոչ ուրեք գտանեմք ոճով տատեալ այլ դոյզն ինչ դուն ուրեք, և այն դժուարահաս և տաժանելի» նախադասությամբ (տես Վեհակ, հրատ. եջ 585): Էնդորինակող գրիչներից մեկը, վորը, հավանական ե, ձեռքի տակ եռւնեցել հնացած այնպիսի մի նախագաղափար որինակ, վորի վերնագիրը չնշված կամ պատռված ե յեղել, վերցրել և «Աշխարհացոյց»-ի տեքստի յերեք բառերը («Յաղագս աշխարհագրութեան ստոյգ») և դրել վերնագիր: Նման

աղավաղումը մեր հայկական ձեռագրերում մի բացառիկ յերեւփոյթ չեն: Անալոգիկ փաստերի մենք շատ ենք հանդիպում հայկական ձեռագրերում—վերնագիր չունեցող տեքստերի համար հաճախ վերցնում և վերնագիր են նշանակում տեքստի առաջին բառերը: Ճիշտ նման ձևով ել վարվել են «Աշխարհացոյց»-ի վերնագիրի հետ:

«Աշխարհացոյց»-ի վերնագրի ճշտման հարցում խոշոր չափով մեզ ոգնում եւ այն աղբյուրների վերնագրերի քննությունը, վորից ոգտվել եւ «Աշխարհացոյց»-ի հեղինակը: Պապկոս Աղեքանդրացու աշխատությունը, ինչպես հայոնի յեւ, վերնագրված է յեղել «Խարօշրափառ օնչությանի», իսկ Պաղոմնոսինը—«Եացրագոյն նվազնականություն»: Մեզ համար այստեղ կարեոր եւ հատկապես Պապկոս Աղեքանդրացու աշխատության վերնագիրը, վորից «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակն ոգտվել եւ մեծ չափով: Նրա վերնագրից Խարօշրափառ բառը—«երկրագրություն» են թարգմանում: Սակայն հնում այդ թարգմանվել եւ վճռ թե յերկրագրություն, այլ «երկրաշափութիւն» (տես Վատիկանի մատենադարանի հայկական ձեռագրաց Փոնդի թիվ 8 ձեռագիր, թերթ 303^ա: Հմ. «Հանդէս ամսօրեայ» 1892 թ., եջ 246):

Հետաքրքիրն այն եւ, վոր դրան նմանվող վերնագրեր ունեն մեր մատենադարանի կարապետ գրչի ձեռագիր «Աշխարհացոյց»-ը (ինչպես և նրանից ընդորինակլած Լոռիի Աղուր գյուղի գրչագիրը) և նա մեծ չափով ոգնում եւ մեզ վերնագրի պարզաբանման հարցում: Նրա վերնագրին եւ՝ «Մոլսէսի Խորենացոյ ասացեալ երկրաշափ յաղագս աշխարհագրութեան տիեզերաց», իսկ տեքստն սկսվում եւ «Զաստուածային գիրս ոչ ուրեք գտանիւթ ոճով ասացեալ» բառերով: Վերնագրում Մովսես Խորենացոյ անունը, մենք արդեն ցույց ենք տվել, վոր ուշ ըրջանում են սկսել գործ ածել, իսկ «Յաղագս աշխարհագրութեան տիեզերաց» տեքստի հետ պիտի վնի, այլապես տեքստի առաջին նախադասությունը չի ունենա եր յենթական: Այդպիսի ուղղում կատարելու գեաքրում, տեքստը կկարգացվի. «Յաղագս աշխարհագրութեան տիեզերաց յաստուածային գիրս (և վճռ թե «զաստուածային» գիրս) ոչ ուրեք գտանեմք ոճով ասացեալ», այսինքն՝ կրոնական գրքերում վոչինչ չգտանք աշխարհագրության մասին հանդամանորեն ասված: Այսպիսի ուղղումներ կատարելուց հետո, մենք վերնագրում կու-

Նենայնը միայն «Երկրաչափ» բառը: Սա հենց, մեր կարծիքով, «Աշխարհացոյց»-ի նախնական որինակի վերնագիրն և հանդիպացել:

unquam dicitur. Quod velut in tempore
hunc. In genitivoque genitivoque
dicitur quod quis vellet latenter
vellet latenter organum latenter
vellet. velut invenit organum. Et
organum in tempore genitivoque
organum. et in tempore latenter
organum. et in tempore organo
organum.

Մատենադարանի «Աշխարհացոյց»-ի ընսիթը այն որինակը, վորե վերնագրում հիշատակված և «Երկրաշափ».

«Աշխարհացոյց»-ի նախնական վերնագիրը «Երկրաչափ» լինելու փաստը հաստատվում է մեր մատենադարանի մի այլ ձեռագրով: Մեր 4166 թվակիր գրչոցգիրը, ընդորինակված XIII դարում, պարզունակում ե մղոնների չափը՝ «Մղոնահամարք երկրաչափութեան» վերնագրով (տես թ. 209): «Մղոնաչափք»-ը, ինչպես ճիշտ նկատել և ակագի. Հ. Մանանդյանը, «Աշխարհացոյց»-ի հավելվածն և հանդիսացել Այսքան, զորքան մննք գիտենք, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակը «Մղոնաչափք»-ով ցանկացել ե «Աշխարհացոյց»-ում արգեն հիշված քաղաքների տարածությունը տաէ մղոնական չափով, հետևապես նա «Երկրաչափութիւն» ե հասկացել նաև «Աշխարհացոյց»-ի առաջին հատվածը, ուր նույնպես պատմվում ե, թե ով ե չափել յերկիրը, չափելու համար ինչ գործիքներ են հարկավոր և այլն: Այսուղ կարող ե այսպիսի մի

առարկություն լինել վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակը, ինչպես և հին հայկական մյուս մատենագիրները շատ լավ տարբերել են աշխարհագրությունը յերկրաչափությունից: Շատ ճիշտ ե, ըայց այստեղ «Երկրաչափ» վերնագիրը յեղել և վճռ թե ամբողջ աշխատության վերնագիրը, այլ միայն նրա առաջին գլխի: Անանիա Շիրակացին, վորի հեղինակ հանդիսանալու մասին մենք կխոսենք իր տեղում, իր վճռ մի աշխատության համար չի գրել ընդհանուր վերնագիր: Նրա աշխատությունների առաջին գլուխը ավյալ աշխատության վերնագիրն ե: Այսպես՝ նրա թվարանության վերնագիրն ե «Խոստումն աշխատացն», տիեզերագիտության՝ «Առ խոստացեալսն» և այլն: Նույն ձևով ել նա վարփել ե նաև «Աշխարհացոյց»-ի հետ: Նրա առաջին գլխի վերնագիրն ե յեղել «Երկրաչափ», յերկրորդ գլխինը՝ «Աշխարհագիր», և այլն: Ի միջի այլոց, յերկրորդ գլխում «Հատած բ»-ն, յեթե միայն ուշ շրջանում մտցված գլխակարգություն չի, պիտի լինի վերնագրից առաջ «Հատած բ—աշխարհագիր», ինչպես Շիրակացու մյուս աշխատությունների գլխակարգությունն ե:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, վոր «Աշխարհացոյց»-ի վերնագիրը դարերի ընթացքում խոշոր փոփոխությունների յի յենթարկվել: Նրա նախնական տեքստի վերնագրում չի հիշատակվել Խորենացու անունը: Այդ անունը դրվել է «Աշխարհացոյց»-ի վերնագրում հետագայում: Միակ հնարավոր վերնագիրը վոր ունեցել է «Աշխարհացոյց»-ի առաջին գլուխը—«Երկրաչափ»-ն ե:

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՅ»-Ի ՏԵՔՍՏՈՒՄ ՆԿԱՏՎՈՂ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐԸ

«Աշխարհացոյց»-ի տեքստում նկատվող կրամառումների և այլ տիպի աղավաղութեարի վրա, Սուրբյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի կապակցությամբ, մասամբ մենք կանու ենք առել մեր ներկա աշխատության առաջին գլխում: Մենք այնտեղ նշել ենք տեքստում նկատվող այն փոփոխությունները, վորոնք, մեր կարծիքով, կատարվել են նախնական տեքստի համեմատությամբ: Դժբախտաբար, ՀԽՍՀ Պետ. մատենադարանում չգտնվեցավ Սուրբյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի խմբին պատկանող մի այլ ձեռագիր, վորպեսզի հնարավոր լիներ նրա հիման վրա վորոշ համեմատություն կատարել: Նման աշխա-

տանք այժմ հնարավոր եւ կատարել համառոտ համարված «Աշխարհացոյց»-ի տեքստի նկատմամբ, վորի խմբին պատկանող ընտիր ընթերցումներ ունեցող մի շարք ձեռագրեր ունենք ՀԽՍՀ Պետ. մատենադարանում։ Մենք ի նկատի ունենք հատկապես Կարապետ և Վարդան գրիչների ընդորինակած ձեռագրերը, վորոնք մի շարք տեղերում եյական փոփոխություններ են մտցընում «Աշխարհացոյց»-ի համառոտ համարված տեքստում։

Համեմատական նման աշխատանքը, մեր կարծիքով, անհրաժեշտ եւ այն պատճառով, վոր գրա շնորհիլ նախ՝ վորոշ չափով կճշտվի «Աշխարհացոյց»-ի տեքստը և ապա՝ դա զգալի չափով կողնի մեզ ամելի վստահ մտանալ տեքստի վերըւծմանը՝ նրա հեղինակը գտնելու հարցում։

«Աշխարհացոյց»-ի տեքստում նկատվող աղավաղումները, մեր կարծիքով, յերեք հիմնական խմբի կարելի յերաժանել— ընդմիջարկություններ, կրծատություններ և տերմինների ու նախադասության փոփոխություններ։ Ընդմիջարկությունները և հապալումները մենք դիտավորյալ կերպով ենք աղավաղումների շարքը դասում, վորովհետեւ ուշ շրջանում նախնական տեքստում կատարած ամեն մի ավելացում կամ կրծատում, ինչպիսի նպատակ ել հետապնդելիս լինեն, փոփոխություն և նախնական տեքստում, հետեւապես աղավաղում ե։

Վենետիկյան Միիթարյանների հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստը համեմատելով ՀԽՍՀ Պետ. մատենադարանի ընտիր գրչագրերի հետ, նկատվում են հետեւյալ ավելացված բառերն ու նախադասությունները¹⁾, վորոնց վորոշ մասը հավանական ե, ընդմիջարկություններ են։

Եջ 591. «Իսկ Ովկիանոս երթեալ ընդ հիւսիսի և դարձեալ ընդ արևելս, առնէ երկու կղզիս մեծամեծուոր կոչին Բրիտանացւոց աշխարհը, և զԹուլիս [մեծ] կղզի՝ որոյ հասարակն յանձնանօթ երկիր համարեալ է» (Հմմ. Պետ. մատ. թիվ 582 ձեռ., թերթ 168թ):

Եջ 596. «ԺԲ. Ելլադա առ երի կալով Մակեդոնիոյ ի մէջ պեղագոսացն, ունի փոքր աշխարհն վեց՝ զԵպիռոս, զԱքայիա, զԱստիկէ, զԵւրիա ապառաժ, [և զԿրիտ մեծ կղզի] և զԿեղոպոնեսոս ցամաք կղզի» (Հմմ. Պետ. մատ. թիվ 582 ձեռ., թերթ 172ա):

1) Ավելացված բառերը և նախադասությունները մենք վերցնում ենք քառակութի փակագծերի մէջ։

Եջ 600. «Ա. Բիւթանիա, յելից կալով թագաւորական քաղաքին կոստանդինուպոլսի: Ունի Բիւթանիա լիբինս և զետս, լզզիս և լիճս, և մայրաքաղաքս երիս, զերկիս, գթաղիկողոն, զնիկոմիլիիա. որք ունին ընդ ինքեանս քաղաքս չորեքտասասն, և զեղաքաղաքս ծովեղերեայս, և վաճառատեղիս: [Լինի ի Բիւթանիա հող սպիտակ, զոր մանր աղացեալ և ցանեալ ի քանդուկս ի վերայ ցորենոյ՝ ճճի չուտէ]» (հմմ. Պետ. մատ. թիվ 1883 ձեռ.):

Եջ 600. «Ե. Փոխեզիս յելից կալով առանձնակ Ասիոյ և յերի Լիկոյ, ունի յինքեան աշխարհս երիս, զՊիսիդիա՝ որ ունի մայրաքաղաք զԱնտիոքիա, [ուր ասեն շինեալ զտապանն նոյի]...» (հմմ. Պետ. մատ. թիվ 582 ձեռ., թերթ 174թ):

Եջ 601. «Զ. Ռնորիա յելից կալով Բիւթանիոյ առ երի Փոխեզիոյ մինչև զՊոնտոս ծովս... և գետ ունի զՊարթենիոս երեքվտակեանն. [յայսմ աղբեւը երգնուուին գերքն վասն անչափ ցրառւթեանն]» (հմմ. Պետ. մատ. և 582 ձեռ., թերթ 175ա):

Եջ 608. «Կորճայք յելից կայ Մոկաց առ ասորեստանիւ. դաւառս ունի մետասանն. զԿորդուս [զԿորդիս վերին, զԿորդիս միջին, զԿորդիս սերքինս], զԱյտուանս...» (հմմ. Վենետ. հրատ. ծանոթ. և թիվ 582 ձեռ.):

Եջ 611. «Լ. Միջագետք յելից կալով Ասորւոց և Եփրատ գետոյ, Ասորեստանիւ առ Դկղաթ գետով... և քաղաքս բազումն [յորոց մի է Ռւռա՞ուր անձեռագործ պատկերն է փրկչին]» (հմմ. Պետ. մատ. թիվ 1883 ձեռ.):

Եջ 614. «Լ. Արիք, որ կոչին Քուստի Խորասանք, յելից կալով Մարաց և Պարսից մինչև ի հնդիկս և յերի Վրկանի ծովուն... Լինի հրամուշկ չպէտ և ոչ ազնիւ [Եւ կղզի մի է հանդէպ Արեաց ի հնդկաց ծովուն, յորում թղուկք լինին երեքթղէան հասակաւ, որք պատերազմին ընդ խորդուց հաւուց վասն ճարակելոյ նոցա զանդաստանս թղկացն]» (հմմ. Պետ. ձեռ., 1883):

Եջ 614. «Հնդկաստան յելից կալով Արեաց աշխարհին և յերի Սկիւթիոյ, և են հնդիկք բաժանեալ յերկուս աշխարհս զոր բաժանէ Գանգէս գետ՝ [որ է Փիսոն]...» (հմմ. Պետ. մատ. 582 ձեռ., թերթ 182թ):

Յեվ, վերջապես, Առւքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ում կան մի քանի բացահայտ, տեքստի հետ բոլորովին չկապվող ընդմիջարկություններ, վորոնք դարձյալ աղացուցում են յերրորդ ձեռքի գործողության փաստն այդ տեքստում: Այդպիսի ընդմիջարկություններից կարելի յե նշել.

Եջ 23—24. Սավրիայի նկարագրությունից հետո. [«Եւ զիտւնկ-սըն ոչ է պարտ միայն ծխել զի ոչ տայ ազնիւ հոտ. այլ խառնեալ ընդ այլ՝ յոյժ անուշէ. եւ արժէ լիարն դահեկան մի. բայց զազ-նիւն ժողովին օձք եւ գնեն ի բոյնո, ի կտապս իւրեանց, զոր սովանեալ առնուն. եւ ծառք ուստի ծորին՝ բարակը են. ստուարն լինի որպէս լուծ, ընդ որ մտեալ ճճին ընդ տակն, երթայ ուտե-լով մինչև ցծայրն՝ գտանէ, եւ ապա մեռանի, եւ թափին խունդքն ի խնամոցն Աստուծոյ]:

Եջ 41. Պարսկաստանի նկարագրությունից հետո. [«Լինի տան գոհարք. Ա. աղար որ վեցդանկեան է, արժէ գրամ քա-ռասուն. Բ. ոռմիա. Գ. մէշիա. Դ. անքա. Ե. պարմուշա որ է ան-դոյն. Զ. պարմուշիտ. Է. հաւթաղրամ. Ը. շաշտաղրամ. Թ. նոյ-նաղրամ. Ժ. գասաղրամաքարթա, զոր մեք անիծ կոչեմք»]:

Հետաքրքիր ե, զոր Արարիայի աշխարհագրության մասում Սուրբյանի խմբի տեքստն ընդունել ե մի ընդմիջարկություն, զորն ունեն նաև համառոտ տեքստի ուշ շրջանում ընդորինակ-ված որինակները: Այդ ընդմիջարկությունը հետեւալն ե. «Եւ աղբիւր մի, յոր աղբիւր դիքն երդնուին վասն անչափ ցրտու-թեան» (Եջ 39): Համառոտ «Աշխարհացոյց»-ի հնագույն ընդո-րինակությաները չունեն այս ընդմիջարկությունը:

Մրանով, իհարկե, չի սահմանափակվում ընդմիջարկություն-ների քանակը: Ընդմիջարկություններ են ընդունել իրենց մեջ, անկասկած, մեզ չհասած «Աշխարհացոյց»-ի այն գրչագրերը, վո-րոնք մայր են հանդիսացել մեզ հասած գրչագրերի: Բերված ընդ-միջարկությունները հնարավոր ե լինում մատնացույց անել նույն խմբին պատկանող «Աշխարհացոյց»-ի մեզ հասած հնագույն գրչա-գրի համեմատության հիման վրա: Ցույց տալու համար, թե ինչ խոշոր չափով չափով ընդմիջարկություններ են ընդունում իրենց մեջ աշխարհագրական բովանդակություն ունեցող ձեռագրերը, մենք անհրաժեշտ ենք համարում համեմատել իրար հետ Պետ. մատ. թիվ 5613 ձեռագրերը թիվ 582 ձեռագրի հետ, վորոնք պարունա-կում են «Աշխարհացոյց»-ի միենույն խմբի տեքստերը: Թիվ 5613 ձեռագրերը, մոտավորապես յերկու հարյուր տարի ուշ ե ընդորի-նակված թիվ 582-ից: Այդ յերկու ձեռագրերի մի խմբի պատկա-նող մայրից արտագրվելու փաստն անկասկած ե:

«Երկրորդ. Մաւրատանիա կես-
առնի սեան. յելից կալով Տին-
գրնեան տարածի ի հիւսիւ(ս)իւ
հարաւ կոյս առ շեղ զելիւք. եւ
գետա ունի ժէ, և փոքր լիճն Գ, և
լերինս ե, բաղաքս բաղում, և
գաւառս ին, զ(պ)ղնձ փողանոցս
երկրին. Լինի յանս (!) Կինաբա-
ռիս, այսինք(ն) դեղ կարմիր»:

(Թիվ 582, թերթ 183ը)

«Երերորդ. Սկիւթիա է, որ են
Ալպակաստարք, այսինքն թուրք, որք
սկսանին Յաղթ (յԱթլ?) գետ(ս)յ
մինչև ց՛նեն և Էմաւան լետոն»:

(Թիվ 582, թերթ 182ը)

«Ե՞րերորդ. Ճենաստան է, յելից
կալով Սկիթիայ մինչև յԱնձանօթ
երկրին. եւ է Ճենաստան ընդար-
ձակ լեր դաշտ տարածեալ.. արքայն
կոչի Ճենբակուր, որ նստի ի քա-
ղաքին Սիսիայ, առ անձանօթ երկ-
րւա»:

(Թիվ 582, թերթ 183ը)

¹ Հետաքրքիր և այստեղ Տկետ առնի սեան, վորը «Կենաբինիա»-յի
աղավաղութիւն եւ:

«Երկրորդ. Մաւրիան(ի)ա է.
կետ առնի սեան¹ յելից կալով
Տինգրնեան, տարածի ի հարաւայ-
կոյս առ ի շեղ զելիւք. եւ գետա ունի
ժէ, և փոքրայ լիճն Գ, և լերինս եւ
քաղաքս բաղում, և գաւառս Ին, և
զ(պ)ղնձ փողանոցս երկրին լե-
րինս յանս (!) և ընտիր կինաբա-
ռիս, այսինքն դեղ կարմիր»:

[Մակ, որ ելանէ քամի ի հան-
գինդոց մեծ և ահագին որոս, զոր
լսիմք ի պարզոց ձայն և որոտ յա-
մառնային ժամանակին]:

(Թիվ 5613, թերթ 285ա)

«Երերորդ. Սկիւթիա է, որ են
ախապտարք, այսինքն թուրք [որ
է Սըմըրդանդ, վասն զի թուրքն
և թուրք լեզուն ամէնն ի Սըմըր-
դանդէ տարածէր ի բոլոր աշխարհս,
վասն զի Մահմադն արաբացի էր,
որ է յարաբն, թուրք(ք)ն շուտով
հաւատացին նորա կրօնքն և զաշ-
խարհն հեշտ և մոլար խրտիւ տի-
ւեցին և բաղմացան], եւ Սկիթա-
ցոց աշխարհ սկսանի Յաղտ գետոց
[մինչև ի Ճենաստան, որ է Խը-
թայիստան, որ է Հին եւ Էմաւան
լետոն է բարձր և երկայն քան
զամենայն լերունս]:

(Թիվ 5613, թերթ 287ա)

«Ե՞րերորդ. Ճենաստան է յե-
լից կալով Սկիթացոց մինչև յԱն-
ձանօթ երկրին. եւ է Ճենաստան
ընդարձակալեր դաշտս տարա-
ծեալ.. արքայն նոցա կոչի Ճենբա-
կուր, որ նստի ի քաղաքին Սիսիայ
(առ) անձանօթ երկրաւ (Եւ է Ճե-
նաստան, որ է Խըթայիստան, որ է

չին, անչափելի վայելուչ աշխարհ, գոր բերանովք ոչ կարէ պատմիլ, վասն զի ամրդիք աշխարհին բազմացկ(ե)ացը և խաղաղութե, հաւատարիմ արծաթ և ոսկի անբաւ. և անչափելի բաղմայտարած աշխարհք»]:

(Թիվ 5613, թերթ 298)

«Եղելորդ. Սիւնացւոցն է, առ երի կալով ճենաց, մինչև ցանձանօթ երկիր»:

(Թիվ 582, թերթ 183ը)

ԽԴ ելորդ. Սիւնացւոցն է [որ տոի ծայր աշխարհիս և բուն արևելք, որ ի վերոյ է քանց Խթայնան և մաւա է զբախտին]. սա է առեալ ի ճենաց առ երի կալով մինչև ցանձանօթ երկիր»:

(Թիվ 5613, թերթ 288ը)

Յեթե մինք չունենայինք «Աշխարհացոյց»-ի ավելի հնագույն գրչագիր, քան թիվ 5613 ձեռագիրն եւ և չկարողանայինք ճանաչել այդ տեքստում յեղած ընդմիջարկությունները, հավանական ե, այդ ընդմիջարկությունները կովան դարձրած, պիտի վիճեյինք այն մասին, թե «Աշխարհացոյց»-ը XIII—XIV դարերում չի գրված արդյոք:

Թիվ 5613 ձեռագիրն ընդմիջարկություն ընդունելու տեսակետից մի ինչ-վոր բացառություն չե: Մենք հատկապես նրա վրա կանգ առանք այն պատճառով, վոր նա արաագիված և թիվ 582 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի խմբին պատկանող որինակից, հետևապես հեշտ և ճանաչել տեքստում յեղած ընդմիջարկությունները: Պետական մատենադարանում կան «Աշխարհացոյց»-ի այնպիսի գրչագրեր, վորոնք ընդմիջարկություն ունեն իրենց մեջ ամբողջ հատվածներով և գլուխներով: Հատկանշական ե, վոր նախնական տեքստի վրա ուշ շրջանում ավելացրած հատվածների մեծ մասը սննդի ապաշտական բնույթ ունեն: «Աշխարհացոյց»-ի հեղինակն իր աշխարհայացքով և մտավոր պատրաստությամբ անհամեմատ բարձր է կանգնած յեղել, քան նրա աշխատությունն արտագրող ու իրենց կողմից վորոշ հատվածներ ավելացնող ուշ շրջանի միջնադարյան նախապաշտարված գրիչները:

«Աշխարհացոյց»-ի տեքստում կատարված յերկրորդ ափակ աղավաղումները—կրծատումներն են: Սուքը յանի տեքստի, ինչպես և Պետ. մատենադարանի ընտիր գրչագրերի՝ Վենետ. Միսիթա-

բյանների հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստի հետ կատարած համեմատությունը ցույց է տալիս, վոր նախնական բնագրից կը բառված են բազմաթիվ հատվածներ: Վորպեսդի պարզ լինի կրատված այդ մասի արժեքը պատմական գիտության համար, մենք կը երենք այսուղ Պետ. մտանագարանի թիվ 582 ձեռագրից վրաստանի և Աղվանքի աշխարհագրության մասը՝ վեճետ. Միիթարյանների հրատարակած «Աշխարհացոյց»-ի համապատասխան հատվածների հետ համեմատելով:

Թիվ 582 գրչագիր

«Եներորդ. Վիոլիայ է, այսինքն) վիրք, յելից կարով ենքոր առ երի Արմատիոյ, առ Կաւկասաւ մինչև ցԱղուանից սահմանն ի հայոց սահմանն առ Կուրք գետով: Եւ գաւառք են ի Վիրա այսորիկ՝ Կաղարջք, Արտահանք, Շաւշեթ, Զաւաղք, Սամոցիւ, Աճարա, Թորոնք, Աթիսիս, Տառնիսիս Մանոկեղացիոր, [Քուիշափոր], Բաղափոր, Թունդք, Կանաքառք, Տաշիրք, և Աշտակ, և Դուան: Նորիսի, Թուղիթ, Կաւկաս, Սացխումիթ, Խանիսիս, Եթրաս, Շմա, Բալգաւէթ, Կիուէթ, Երծոն, Խերկ, Թիանէթ, Ծուփար, Զելթ, Վեղիս, Ցիխէու, Ելզա, Շուշեթ, Պարուար, Ծոբփոր, Չորոփիոր]: Եւ բաղաք վրաց Տիփխիք, Մամշուկէ, Մասիթիթա, ուը սուրբ խաչն է: Ունի և բերդս և զետս [և ծովս] լի ձկամբք:

Ի՞Զ. Ալիքան է, այսինքն Աղուանք, յելից կալով վրաց, յելից Մ(մ)արմատիոյ առ Կաւկասաւ մինչև ի Կասրից ծով և ցհայոց սահմանն առ Կուրք գետով: Եւ ունի Աղուանք գաշտս արգավանդս, և զետս բազում, և եղեգունս հզաւրս, և քաղաքս, և բերդ, և գեւլզաքաղաք: Եւ գաւառք են այսորիկ՝ Եխնի, Բիխ, Քամբէձան, [Հողմազ], Շաքէ, [Գիշաւու,] Ոստան, [Խաբանդի], Մարձ,

Վենետ, հրատ.

«Են. Վիրա, այսինքն է Վիրք, յելից կարով Եգերայ առ Մարմատեա, առ Կուրք գետով: Եւ զաւոք են ի Վիրք այսորիկ Կղարջք, Արտահանք, Շաւշեթ, Զաւաղք, Սամցիւ, Աճարա, Գորովաթիսիս, Տառնիսիս Մանոկեղացիոր, Թունդք, Քուիշափոր, Թունդք, Կանաքառք, Տաշիրք, Եթրաս, Շմա, Բալգաւէթ, Կիուէթ, Երծոն, Խերկ, Թիանէթ, Ծուփար, Զելթ, Վեղիս, Ցիխէու, Ելզա, Շուշեթ, Պարուար, Ծոբփոր, Չորոփիոր]: Եւ բաղաք վրաց Տիփխիք, Մամշուկէ, Մասիթիթա, ուը սուրբ խաչն է: Ունի և բերդս և զետս [և ծովս] լի ձկամբք:

Ի՞Զ. Աղբանիա, այսինքն է Աղուանք, յելից կալով Վրաց առ երի Արմատիոյ առ Կաւկասաւ մինչև ցԿասրից ծովն և ցհայոց սահմանն առ Կուրք գետով: Ունի զաշտս արգաշտս, քաղաքս և բերդս և գեղաքաղաքս, զետս բազում, Եղեգունս հզօրս Եւ գաւառք են այսորիկ Եխնի, Բիխ, Քամբէձան, Շաքէ, Ոստան, Բմարձապան, զաշտ ի Բալզական, և այլ գաւառս ի հայոց հա-

Գանան, Քաղաց դաշտ, Իլաղական,
և այլ գուառք, զոր ի հայոց հա-
նեալ է՝ Շակաշէն, Գարդմանք, [ուս-
տի Փառնեսո] Կողք, Աղուէ, [Թուչ-
քասակ], Ոտրոստակ, Ռոտպաէակ,
Մեծ Կուանք, Մեծ իրանք, Պիանք,
Հանանք, Պածանք, Մոխանք, Վա-
կունիք, Փոքը Հարանք, Սիսախան,
Բոտաստակ, Բերձորոտ], Աստոտ,
մինչեւ ի խառնումն երասխայ ի
Կուր գետ։

(Թիվ 582, թիրթ 177ը—178ա., հմմ.
Վենետ. հրատ. ծանօթությունը):

Տվյալ հատվածներում կատարված այս հապավումները,
անկասկած, մեծ արժեք են ներկայացնում մեր յերայրակից
Վրաստանի և Աղրբեջանի պատմության համար։ Նման բազմա-
թիվ հապավումներ կան նաև «Աշխարհացոյց»-ի մյուս հատված-
ներում։

Բացի ընդմիջարկություններից ու կատարված հապավումնե-
րեց, «Աշխարհացոյց»-ում կատարվել են մեծ չափով Կակ այլ տիպի
աղավաղումներ ու աղճատումներ։ Մենք ցանկանում ենք բերել
այստեղ մի քանի որինակ այդ տիպի աղավաղումներից և ցույց
տալ, թե վարքան անհրաժեշտություն և այժմ «Աշխարհացոյց»-ի
գիտական հրատարակություն կատարելը, վարի հարցը շատ ճիշտ
ձեռվ առաջ ե քաշել ակադ. Հ. Մանանդյանը. Բերված առաջին
այսունյակում տալիս ենք Վենետ. Միխթարյանների հրատարա-
կությունից, իսկ յերկորբը—Պետ. մատենադ. Թիվ 582 կամ 1883
ձեռագրերից։

Վենետ. Միխիք. տեխստում
տպված է

«Արդ վասն զի անհասք գոցա
նդեալ մեր՝ յարտաքինոն հարկաւո-
րիմք ձեռնարկել, որով զաշխար-
հագրությունն յարմարեցին ի հա-
նապարհորդութենէ...»¹

(Եջ 585, տող 5—9)

1 Այն բողոք հատվածները, վորոնց վրա աստղանիշ և դրված, նրանց
մասին նշումներ կան Վենետ. հրատ. ներքին լուսանցքի ծանոթագրություն-
ներում։

նեալ է, Շիլաշէն, Գարդման, Կողք,
Զաւէ, և այլ քասն զաւառ մինչեւ
յիսարնումն երասխայ ի Կուր գետ։
(Վենետ. հրատ., Եջ 605—606)

(Վենետ. հրատ., Եջ 605—606)

Թիվ 582 և 1883 գրչա-

գրերում

«Այս վասն զի անհասք եղեալ
մեր գոցա՝ հարկաւորիմք ի յարտա-
րինս ձեռնարկել, որ զաշխարհա-
գրութիւնն յարմարեցին ի հանա-
պարհորդութենէ...»

(Թիվ 1883, թիրթ 145ա)

«... Գիոդորոս սամէացի պատմէ:
մեզ զհնդկաց՝ թէ ի կմեռիկոնն
նաւելով յերկիբըն՝ ունելով զաւառն
միջերկնեայ և զպղայիդա ընդ մէջ
կ ե ռ ե ա յօ:

(Եջ 586, տող 7—10)

«ԺԱ. Մակեդոնիա յելից կալով
յունական պեղագոսին, առ երի Դադո-
մատիոյ և Թրակիոյ, ի հարաւ թո-
ղլով զելլագաւ Ունի լերինս վեց,
զեսս տասն, գեղս և երեսուն,
քաղաքն վեշտասան, ծովս վեց, կըդ-
զիս երից:

(Եջ 596, տող 12—16)

«ԵՅ. Ունի Հայք լերինս անուա-
նիս և զետս մեծամեծս և մանունս,
և ծովս կս գեց ։»

(Եջ 607, տող 1—2)

«... Բարձր Հայք... Ունի և լե-
րինս երիս, էրէս բաղրումս, և հաւս
պիտանիս և չերմուկո և աղտ սա՞,
և զամենայն պարաբռոթիւն, և քա-
ղաք զթէողուազօլիս։»

(Եջ 607, տող 10—17)

«Տուբուբերանս... Ունի և զազմէն
և մեղք և մաշկամիրդ, և սովի-
տակ նաւելթ, և երկաթ։»

(Եջ 608, տող 2—3)

«ԻՒ. Ասորիք... ունի... զրունս եր-
կու, և վայրս ընդարձակս և բա-
րիս սա:

(Եջ 611, տող 12—13)

«ԵՅ. և Պասը ամենալից պըտ-
գաճառոք, և ելք նաւաց ի հընդ-
կաց և յամենայն կողմանց արհելից։»

(Եջ 612, տող 6—8)

«... Դէսդորոս Սամէացի պատմէ:
զհնդկաց՝ թէ Կմեռիկոնն նաւե-
լով յերկիբըն՝ ունելով զՏաւոռնն
միջերկնեաց և զ(Պ)ղայիզա ընդ մէջ
կեսեայ։»

(Զ. թ. 582, թերթ 165թ)

«ԺԱ. Երորդ.. Մակեդոնիա յելից
կալով յունական պեղագոսին առ
երի Դադմատիա և Թրակիա ի հա-
րաւ թողլով զելլագաւ կու ունի Մա-
կեդոնիա և Երինս Զ, և զետս ժ,
և գտէասս լ, քաղաքս ժԶ, ծովս
Զ և կղզիս Դ։»

(Զ. թ. 582, թերթ 171թ)

Եւ ունի Հայք լերունս անուա-
նիս և զետս մեծամեծս մասուն և
ծովս կակս երիս։»

(Զ. թ. 582, թերթ 178ա)

«Բարձր Հայք... Ունի և լերունս-
երէս բաղրումս և հաւս պիտանիս և
չերմուկո և աղտ և զայլ պարա-
բռութիւնս և քաղաք Կարնոյն։»

(Զ. թ. 582, թերթ 178բ)

«Տուբուբերանս... Ունի և զազմէն
և մեղք և մաշկամիրդ և սովի-
տակ նաւելթ և երկաթ։»

(Զ. թ. 1883, թերթ 153թ)

«ԻՒ. Ասորիք.. ունի... զդրունս
երկունս և վայրս ընդարձակս և
բարիս սա:

(Զ. թ. 582, թերթ 180թ)

«ԵՅ. Բասը ամենալից պըտ-
գաճառոք և ելք հաւաց Հնդկաց և հա-
մենայն կողմանց արհելից։»

(Զ. թ. 1883, թերթ 155ա)

«Ղ. Արիք, որ կոչեն Քուստի
Խորասանք... լինի հրամուշել չպէտ
և ոչ ազնիւա»:

(Եջ 614, տող 10)

«Ա. Սպանիա... Բովանդակի ի նմա
չորս* աշխարհս գի ո քու նս, որք
և ունին գտառս բազումն և քա-
ղաքս, զորս անուամբ յայտնել աշ-
խատութիւն անշահ համարեցաք»:

(Եջ 593, տող 23—26)

«Եւ անուն արևմտեան կղզւոյն
իրենիա, և է զարեհատաձև ճղճը դ-
կէն»:

(Եջ 594, տող 3—5)

«Եւ ունի Թրակիա փոքր աշ-
խարհս հինգ, և մի մեծ՝ յորում
են, ո կլաւային ազգք՝ քսան և
հինգ...»:

(Եջ 596, տող 7—9)

«Դ. Կիւռենականն... ունի... զան-
գուժտաբեր երկիրն, և տեղիս ինչ
նորա կերպ գոզանուասս...»:
(Եջ 597, տող 23—25)

«Եւ ունի Եգիպտոս լերինս եր-
կոտասան, և զուբս երկու շին-
ուածոյս, և լիճս երիս ինք-
նեղս...»:

(Եջ 597, տող 29—31)

«... և մի այլ առանձնակ, որ Տը ա-
պօլիս անուանի»:

(Եջ 597, տող 11)

«Քանդի և յեւթնէ նահանգէն
զառաջինն տուեալ է հարստային մի-
ջօրէական գծին, և զայլ ևս զիեցն
ի նմանէ յարջային կոյս...»:

(Եջ 586, տող 16—19)

«Ղ. Արիք են, որ կոչեն Քուստի
Խորասանք... լինի (ի) նոսս հրամուշել
թէպէտ քեւ բայց ազնիւա»:

(Զ. Բ. 1883, թերթ 156ա).

«Ա. Սպանիա... և բաժանի նա
ի փոքր աշխարհս երիս, որք ունին
գաւառս բազումն և քաղաքս, զոր
անուամբ յիշատակ կել աշխա-
տութեամբ անշահ համարեցաք»:

(Զ. Բ. 1883, թերթ 148ա)

«Անուն արևմտյան կղզոյն Ու-
բառիա, և նա է զարեհատաձև
ճնճի կէն»:

(Զ. Բ. 1883, թերթ 148ա)

«Եւ ունի Թրակիա փոքր աշ-
խարհս ե, և մի մեծ՝ յորում են
ո կլաւային ազգն ի՞Զ»:

(Զ. Բ. 1883, թերթ 149ա)

«Դ. Կիւռենականն... ունի... զան-
գուժտաբեր է երկիրն այն. և տեղի
կայ նորա անապատս և գա-
զանուասս»:

(Զ. Բ. 1883, թերթ 150ա)

«Եւ ունի Եգիպտոս լերինս թիւ-
զուբս Բ շինածոյն Պ ինքն են
եղս»:

(Զ. Բ. 1883, թերթ 150ա)

«... և մի այլ առանձնական, որ
Տը իպօլիս անուանի»:

(Զ. Բ. 582, թերթ 172բ)

«Քանդի յեւթնէ նահանգացն
զմինն տուեալ է հարստեայ միջաւ-
րէական գծին և զայլ ևս զիեցն ի
նմանէ յառաջնային կոյս...»:

(Զ. Բ. 582, թերթ 165բ)

«Դ. Գերմանիս յելլց կալոր Գաղղ-
դիոյ առ հիւսիսային Ովկիսանոսին
մինչև ցատրմատացւոց լերինսն և
գ Դ ա ն ո բ գ ե տ ա ւ»:

(b) 594, page 18-20)

Նույն հատվածը թ. 1717 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի տեքստից:

«Ունի Բիւթանիա լերինս և գետո,
կղզիս և լիճն, և մայրաքաղաքն
երիս». որը ունին ընդ ինքեանն
քաղաքն չորեցասաման, և գեղա-
քաղաքն ծովեցասաման, և գեղա-
քաղաքն առաջապես գեղաքաղաքն»:

(Fig. 600, *map* 8-11)

«Հ. Սարգսնիս... Ունի գետո հինգ,
և լեռինս դժուարանունս
և փոքրնս, և ամուը տեղիսց:

(b) 595, ann 15-16)

«Պ. Գերմանացոցն է, յելից կալով Գաղղիոյ առ հիւսիսային ովկիանուի մինչև ցՄարմատացօց լերինսն և ցԴանուբ գետ»:

(*Q. J. 1883, Pl. 148*)

«Ունի Բիւրան(լիա) լերինս և գետա
և լիճո և կղզիս Ունի և մայրաքա-
ղաք(ս) երիս.. որը (ունին) ընդ-
ինքեանս քաղաքս ԺԴ, և գեղա-
քաղաքս ծովեղ լուսայինս վա-
ճառաւեղիս (ձօրցւօլօց):

(2. J. 582, Blatt 174w)

«Ե. Սառդոնիա... ունի և գետս և
լերունս դժուարունս և ամուր
տեղիս»:

(Q. p. 582, Pl. 171w)

«Հ. Ներքին եթովպիա... Առ որով
վատթարակեանք եթովպացիք... Որոց
ըստ հիւսիսոյ փր փը եղջեւը
եթովպաց իք...»:

(Եջ 599, տող 3—5)

«Եւ սոցա ի հարաւոյ աշխարհ մի
առ անծանօթ երկրաւ, յորում է
գաղան ինչ՝ կանացի ունելով
դլուխ և ձեռս...»:

(Եջ 599, տող 12—14)

«... և ի ներքոյ սոցա մարդակեր
եթովպացիք. յորում գաղան ինչ հրա-
շունչ վարազանման. և սաղամանդը
գաղան՝ որ նման է կովդի եցի,
անցանէ ընդ հուր և զիջուցանէ»:

(Եջ 599, տող 19—22)

«Ժ. Պամիւղիա... լինի ի նմա
խունկ ստիւրակ ի թփոյ ի փո-
րոյ ի կերուածէ ճայց»:

(Եջ 602, տող 2—3)

«Եւ բնակին ի Սարմատիա ազգը
բազումք... Փուլք, Շը ու անք, Խա-
րանք...»:

(Եջ 604, տող 11—24)

«... և ունի եգեր փոքր աշխարհս
չորս. զՄիւնիւս, զԵռեւի,
զԽազիւ, զՃանեթ...»:

(Եջ 605, տող 11—12)

«Աւանդեն զԹուլիս կղզի՝ որ
մեկնէ զհիւսիսականացն և ծանու-
ցելոյ երկրի երրկ զգետ ըստ լայ-
նութեանն չափ վաթսուն և երեք...»

(Եջ 585, տող 23—24,

Եջ 586, տող 1—2)

«Քանզի և յեւթնէ նահանգէն
զառաջինն տուեալ է հարաւային

«Հ. Ներքին ե եթովպիա է... Առ
որով վատթարակեանք եթովպացիք...
որոց ըստ հիւս(ի)սոյ փոքր եղ-
ջեւը եթովպաց իք աւ»:

(Զ. թ. 1883, թերթ 150թ)

«... ի հարաւոյ աշխարհ մի առ
անծանօթ երկրաւ, յորում գաղան
ինչ՝ կանացի ունելով ձեռս:

(Զ. թ. 1883, թերթ 150թ)

«... և ի ներքոյ սոցա մարդակեր
եթովպացիք, որ լինի առ նոսս գա-
ղան հրաշունչ վարազանման, և սա-
ղամանդը գաղան, որ նման է կո-
վոյ, որ եր թայ մտան է և ան-
ցանէ ի հուրն և անցուցանէ կերակն»:

(Զ. թ. 1883, թերթ 151ա)

«Ժերորդ. Պանփիւլիա է... Լի-
նի(ի)նմա խունկ ստիւրակ թփոյ
միոյ՝ ի կերուածէ ճայց»:

(Զ. թ. 582, թերթ 175թ)

«Եւ բնակին ի Սարմատիա ալգս
բազումք... Փուլք, Զը ու անք, Խա-
րանք...»:

(Զ. թ. 1883, թերթ 152թ)

«... և ունի եգեր փոքր աշխարհս
Դ զՄ առնի զիս, զԵռգը եւի կի
(Երդյառակ), զՂազիւ (Աճշու)
և զՃանեթ...»:

(Զ. թ. 582, թերթ 177ա)

«Աւանդեն զԹուլիս կղզի, որ
մեկնէ զհիւսիսականացն և ծանու-
ցելոյ երկրի երրկ զգետ զԵռ ըստ լայ-
նութեանն չափ վաթսուն և երեք...»

(Զ. թ. 582, թերթ 165թ)

«Քանզի յեւթնէ նահանգացն
զմինն տուեալ է հարաւայի մի ջ-

«Եկ ջօրէ ական գծին...»

(Եջ 586, տող 16—17)

«...ի ձեռն երկելոյ աստողաբոն և սկիթառն գործ աւանաց...»:

(Եջ 587, տող 12—13)

«...զանծանօթ երկրէ ասէ շրջապատեալ զբնակութեամբ մարդկային բնութեանա...»:

(Եջ 589, տող 22—24)

«Բայց թէ և է զանծանօթ երկրավ ծով, կամ շուրջ զանծանօթ ծովու երկիր, մեք որպէս անհասնդեալ մեծ ութեան լուեմք...»:

(Եջ 590, տող 20—23)

«...և դոցա ըստ հիւսիսոյ են չորս կղզիք հանդէպ Մաւրիտանեայ. և միջոցն որ կոչի Սեփակ...»:

(Եջ 591, տող 16—18)

«Չորրորդ Հայք... Ունի բերդս և գետս և լեռինս և ըլւընից»:

(Եջ 607, տող 20)

«Վասպուրական... ի նմա գաւառք են... Անձաւցիք, Ատրպատակնիք, Երիթթունիք, Մարդաստան, Արտազ, Ակէ... Ճուաշ, Ռոտկը ճուաշիք...»:

(Եջ 608, տող 22—24, Եջ 609,

տող 1—2)

«Այրարատ... և գաւառք են ի նմա քսան.. Վարաժնունիք, ոստանն Դընայ՝ մինչև ցդաշտն Շարուր»:

(Եջ 610, տող 26—28)

«Կերին եթովալիտ... Ունի և դմուխն Երկիրն և զինկարեր և

աւըէ ական գծին...»:

(Զ. թ. 582, թերթ 165)

...ի ձեռն երկելեացն աստոնից ու գործն և զոկի աթեռոն գործականացն»:

(Զ. թ. 1883, թերթ 145թ)

«...Զանծանօթ երկրէ շրջապատեալ զբնակութիւն մարդկային բնակութեանա...»:

(Զ. թ. 1883, թերթ 146ա)

«Բայց թէ և է զանծանօթ երկրավ ծով և կամ շուրջ զանծանօթ ծովաւն երկիր՝ մեք որպէս անհասնդեալ մաս ութեան լուեմք...»:

(Զ. թ. 1883, թերթ 146թ)

«...և դոցա ի հիւսիսոյ են Դկղզիք հանդէպ Մաւրիտանիոյ. և մին եղուցն որ կոչի Սեփակ...»:

(Զ. թ. 1883, թերթ 147ա)

«Չորրորդ Հայք... Ունի Չորրորդ Հայք բերդս և գետս, (և) լեռինս և ըլւընից»:

(Զ. թ. 1883, թերթ 153թ)

«Վասպուրական... ի նմա գաւառք են՝ Անձաւցիք, Ատրպատակնիք Երիթթունիք, Մարդաստանիք, Արտազ, Ակէ... Ճուաշ Ճուաշիք, ի գաւառն Շարուր»:

(Զ. թ. 1883, թերթ 147ա)

«Այրարատ... և գաւառք են նմա... Վարաժնունիք, Ոստանն, Դընայ Քաղաքն, Արածանիք, մինչև կողման Շարուր»:

(Զ. թ. 1883, թերթ 154թ)

«Կերին եթովալիտ... (Հ նո՞ Ալշուրոց Աթուուց) ունի և զըմ-

գկին ամոմոնաբեր գաւառուց:
(Եջ 598, տող 22—24)

«Բայց է յիտալիա և այլ աշ-
խարհն Կորսիկա անուն ի Կիւռ-
նոս կղզունցն, չորս հարիւր մղոնաւ
շրջապատելով...»:

(Եջ 595, տող 7—8)

«...և ունի Ասիա փոքր աշխարհն
Հորս, զիկուդիա, զեւողիա,
զՅոյնս, զԿառիա»:

(Եջ 600, տող 20—22)

«Խ. Սկիւթիա, որք են Ապախտարք,
այս Ենքն Թուրք...»:

(Եջ 614, տող 15—16)

բեր երկիր և զինկարեր և զկին ա-
մոնաբեր գաւառուց:

(Զ. թ. 582, թերթ 173ա)

«Բայց է յիտալիա համար և
այլ աշխարհն մի Կաւ(ր) սիկա
անուն ի Խոնիոս կղզո՞ն՝ Ն
մղոնաւ շրջապատելով...»:

(Զ. թ. 582, թերթ 171ա)

«...և ունի Ասիա փոքր աշխարհն
Ք զիկուդիա, զեւողիա, եսնիա
(Պանչ), զԿառիա»:

(Զ. թ. 582, թերթ 174բ)

«Խ. Սկիւթիայ, որք են ապախ-
տարք, այսինքն Թուրք աս-
տան...»:

(Զ. թ. 1883, թերթ 156ա)

Կան նաև բազմաթիվ հատուկ անուններ, վորոնք ճիշտ են
պահված ՀԽՍՀ Մատենադարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների
հնագույն որինակներում: Այսպիսի բառերից են որինակ՝ Թանհիս
(=Տաշէ վոչ թի Տոնաւիս), Լուկիա (=Լուչիա և վոչ թի Լիկիա),
Տաղրորանիա (=Տարօթանյուն և վոչ թի Տափորանիա), Իռեւրնիա
(=Իսւըրյա և վոչ թի Իրեւնիա), Պիւրիոն-Պետիոն (=Պուրծոն-Պէծոն)
և վոչ թի Պիւռն-Պեղիոն), Ներս (հնագույն ձեռլ) և այլն:

Բերված այս աղավաղութենքից պարզ յերեսմ ե, վոր մեզ
հասած «Աշխարհացոյց»-ի տեքստերից վճէ մեկն ել իդեալական
տեքստ չի: Նրանք զգալի փոփոխությունների յեն յենթարկվել
ուշ շրջանում, ընդորինակվել են բազմաթիվ անգամ տար-
բեր գրիչների կողմից, և ամեն մի գրիչ իրավունք և համարել
մացնել իր փոփոխությունները: Իսկ այդպիսի փոփոխու-
թյուններ կատարվել են վճէ թի մի տեղում և հնագույն շրջա-
նում միայն, այլ բազմաթիվ տեղերում և բոլոր ժամանակներում:
Այս բոլոր աղավաղութենքը մտել են «Աշխարհացոյց»-ի տեքստի
մեջ, արտադրվել են ավելի ուշ շրջանում իրենց համապատաս-
խան տեղերում և շատ շուտ «Աշխարհացոյց»-ի որգանական մաս
գառնալու քաղաքացիություն են ձեռք բերել: Հետեապիս, «Աշ-
խարհացոյց»-ի այս կամ այն անունը կամ հատվածն անվիճելի

Հեղինակի գործ համարելը և այդ մոտեցմամբ «Աշխարհացոյց»-ի տեքստը քննության առնելը կարող է տանել սխալ յեղակացության։ Անհրաժեշտ են նախ զտել, գուրս հանել հետագայում մտցված բոլոր հավելումները, հնարավորության սահմաններում լրացնել կրամատված մասերը, ջշտել աղավաղումները և հետո միայն ուսումնասիրության յենթարկել «Աշխարհացոյց»-ի բուն տեքստը։

«Աշխարհացոյց»-ով զբաղվող բանասերների վորոշ մասի հիմնական թերությունը, մեր կարծիքով, հենց այն ե յեղել, վոր նրանք այդ տեսանկյունով չեն մոտեցել «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրությանը։ Հետևանքը յեղել ե այն, վոր յերբեմն հասարակ բանի համար սկսվել են հակայտական վեճեր, կատարվել են անչափ հնարավոր յեղակացություններ, վորից պարզ ե, տուժել ե առաջին հերթին «Աշխարհացոյց»-ի հեղինակը։

«ԱՆԽՐՃԱՑՈՅՑ»-Ի ԳՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

«Աշխարհացոյց»-ի գրելու ժամանակի վերաբերյալ բանասերները հայտնել են իրարից տարբեր չորս հիմնական կարծիք։ 1) Միխթարյաններն «Աշխարհացոյց»-ը համարել են Մովսես Խորենացու աշխատություն՝ Խորենացուն համարելով V դարի հեղինակ. 2) Սեն-Մարտենն «Աշխարհացոյց»-ը համարել ե կեղծ (սուտ) Մովսեսի գործ՝ գրված IX դ. վերջերում կամ X դարի սկզբներում. 3) ակադ. Զ. Մանանդյանն «Աշխարհացոյց»-ը համարել ե Խորենացու աշխատություն՝ Խորենացուն բերելով IX դար և, վերջապես, պլոփ. Բ. Պատկանյանն «Աշխարհացոյց»-ը համարել ե Անանիա Շիրակացու գործ՝ գրված VII դարում։ Ժամանակի տարբերությունը, ինչպես տեսնում ենք, բավականին մեծ ե—Վ-ից մինչև X դ.: «Աշխարհացոյց»-ի գրելու ժամանակը պարզելու նպատակով փորձենք քննել վերոհիշյալ գիտնականների յուրաքանչյուրի կավանները։ Սկսենք Սեն-Մարտենից։

Սեն-Մարտենն «Աշխարհացոյց»-ի ժամանակի և հեղինակի հարցը մանրամասն քննության և առել իր «Աշխարհացոյց»-ի հրատարակության և ֆրանսերեն թարգմանության առաջարանում (տե՛ս Mémoire sur l'époque de la composition de la

Géographie, attribuée à Moyse de Khoren, II, № 301—317): Նա «Աշխարհացոյց»-ը, ինչպես վերևում ասացինք, համարում է կեղծ Մովսեսի գործ: Այդ կեղծ Մովսեսը, նրա կարծիքով, ապրած պիտի լինի IX դ. վերջում կամ X դարի սկզբներում: Իր աշխատության առաջարանում Սեն-Մարտենը թվում են մի շարք փաստեր, վորոնք, նրա կարծիքով, թույլ չեն տալիս «Աշխարհացոյց»-ը համարել Վ դարում ապրող Մովսես Խորենացու գործ: Նրա բերած այդ փաստերից վորոշ մասը հիմք են ավել նրան «Աշխարհացոյց»-ի դրելու ժամանակն անգամ հասցնել մինչև X դար: «Եառւզա» գետի, Խերսոնեսի «Խրիմ» և «Շաղախ»-ի հիշատակության փաստերը, Սեն-Մարտենի կարծիքով, X դարից առաջ հիշատակվել չելին կարող:

Սեն-Մարտենի կովանները քննության են առնված մի շարք հայագետ բանասերների կողմից (Ինձիճյան, պրոֆ. Պատկանյան, ակադ. Հ. Մանանդյան և ուրիշները): Նրանք ցույց են տըվել, վոր Սեն-Մարտենի հրատարակած «Աշխարհացոյց»-ի ձեռագիրը սխալաշատ մի ձեռագիր և հանդիսացել և նրա բերած կովանների զգալի մասը հանդիսացել են ընդմիջարկություններ: Կոնկրետ այդ նշված և «Եառւզա», «Խրիմ» և «Շաղախ» բառերի նկատմամբ: Յեղած կասկածանքներին այսուհետ վերջ տալու համար, մենք անհրաժեշտ ենք համարում Սեն-Մարտենի կովան հանդիսացող վերոհիշյալ յերեք հատվածները համեմատել ՀնոՍՀ մատենադարանի լավագույն գրչագրերից մեկի հետ և ցույց տալ, վոր իրոք նրանք հանդիսացել են ընդմիջարկություններ:

Ս ե ն - Մ ա ր տ ե ն ի հ ր ա տ.

«Գերմանիա, յելից կալով Գաղղիոյ, առ հիւսիսային Ովկիանոսի, մինչև յարմատացոց լերին, և յանուր զետ, [որ է Յօնու Բուսաց: Գայ և մատանէ՝ ի Պոնտոս ծովը, և սա մեծ է քան զծնաւիսի: Ունի Գերմանիա աղջու հօթն...»:

(Saint-Martin, № 336)

«Եւ ունի Սարմատիա աշխարհս փոքրուն՝ և ի Քրիստոնէից դՔեռոսն [Խրիմ, որ է] ցամաք կղղի, և ի հեթանոսաց բազումու»:

(Saint-Martin, № 338)

Հենչ մ ա տ. գ ը չ տ գ ի ր.

«Դ-Գերմանիացոցն է՝ յելից կալով Գալլոյ առ հիւսիսային Ովկիանոսիւ մինչև յարմատացոց լերինսն և յանուր զետ և ունի Գերմանիաց աղջու հօթն...»:

(Թիվ 1883 ձեռ., թերթ 148բ)

«Եւ ունի Սարմատիա աշխարհս փոքրուն և ի Քրիստոնէից դՔեռոսն ցամաք կղղի, և ի հեթանոսաց բազումու...»:

(Թիվ 1883 ձեռ., թերթ 149ա)

«Զորբորդ Հայք, յերի կայ Բարձր
Հայոց. և գաւառք ին ի նմա ութն.
Խորձէն, Հաշտեանք, Բաղնատուն,
Բաղանօվիսաք, Ծոփք, [Շաղախ], Հան-
ձիթ, Գորեք, Դէզիկ:

(M. Saint-Martin, Էջ 360)

«Զորբորդ Հայք յերի կայ Բարձր
Հայոց... և գաւառք ևն ի նմա Բ՝ Հաշ-
տեանք, Խորձէն, Պաղնատունն, Բա-
ղանօվիս, Ծոփք, Հանձիթ, Գորեկ,
Դէզիկ»:

(Թիվ 1883 ձեռ., թիվ 153ը)

Քառակուսի չակերտները, Սեն-Մարտենի տեքստում, մենք
ենք դրել ցույց տալու համար նրանց մեջ առնված բառերի ընդ-
միջարկություն լինելու փաստը: Այդ ընդմիջարկություններից
առաջին յերկուսը մեկնողական բնույթ ունեն: Ուշ շրջանի ըն-
դորինակող զրիչները՝ ցանկանալով հասկանալի դարձնել իրենց
ժամանակի ընթերցողներին նախկին անունները՝ անհրաժեշտ են
համարել մեկնել նրանք, ցանկանալով ասել, վոր Դանուբ գետը—դա
«Յօգու ոռւսաց»-ն ե, իսկ Խերսոնը—«Խրիմ»-ը: Վերջին ընդմի-
ջարկությունը, ինչպես պարզվում ե, լրացում ե:

Հետաքրքիր ե այն, վոր ՀԽՍՀ մատենադարանի հին գրչա-
ռիք «Աշխարհացոյց»-ներից վճչ մեկը չունեն վերսիցալ ընդմի-
ջարկությունները: ՀԽՍՀ մատենադարանի ամենավաղ զրված զըր-
չագիր «Աշխարհացոյց»-ը, ուր հանդիպում են մեզ այդ ընդ-
միջարկությունները, 1624 թ. Աստվածատուր զըրչի ընդորի-
նակած ձեռագիրն ե: Մատենադարանում դանված դրանից առաջ
ընդորինակած վճչ մի ձեռագիր չունի այդ ընդմիջարկություն-
ները:

Այսպիսով, Սեն-Մարտենի կովանները՝ «Աշխարհացոյց»-ը
IX դարի վերջը կամ X դարի սկզբներում ապրող հեղինակի գործ
համարելու խնդրում՝ չեն հաստատվում: Նրա՝ X դարու հասցնելու
հարցում բերած կովանները բացահայտ ընդմիջարկություններ են:

* *

«Աշխարհացոյց»-ի ժամանակի հարցով լուրջ զրադշիլ ե
ակադ. Հ. Մանանդյանը: Նա՝ ի տարբերություն այդ հարցով
զրադշիլ այլ զիտնականներից, ուսումնասիրել ե «Աշխարհա-
ցոյց»-ի վճչ թե մեկ, այլ հրատարակված բոլոր տեքստերը, և իր
յեզրակացությունները, մեծ մասամբ, աշխատել ե հիմնավորել
նրանց համեմատական ուսումնասիրության վրա: Ցավալի յի սա-
կայն, վոր ակադ. Հ. Մանանդյանը ծանոթ չի յեղել ՀԽՍՀ մա-

աենադարանի հնագույն գրչագիր «Աշխարհացոյց»-ների տեքըս-
տերի հետ, վորոնք մեծ չափով ոգնում են պարզելու «Աշխար-
հացոյց»ի հեղինակը, ժամանակը և ոգտագործած աղբյուրները:
Այդ բացի համար, անկասկած, մեղավոր և վոչ թե ակադ. Հ. Մա-
նանդյանը, այլ աղբյուրագիտությամբ զբաղվող մասնագետներն
ընդհանրապես, վոր վոչ մի տեղեկություն մինչև այժմ չեն հրա-
տարակել մատենադարանում յեղած 36 գրչագիր «Աշխարհացոյց»-
ների մասին ու չեն կազմել բանասիրության համար այնքան
կարեռություն ունեցող յերկի համեմատական տեքստը:

Ակադ. Հ. Մանանդյանը ուսումնասիրելով «Աշխարհացոյց»-ը,
դիմագորապես Խորենացու ժամանակի պարզաբանման կապակ-
ցությամբ, յեղել և այն յեղբակացության, վոր «Աշխարհացոյց»-ը
Խորենացու աշխատությունն ե, և «Աշխարհացոյց»-ի տեքստում
յեղած վորոշ տվյալներ ցույց են տալիս, վոր «Աշխարհացոյց»-ի
հեղինակը, Խորենացին, IX դարի հեղինակ և, Զաքարիա կաթո-
ղիկոսի ժամանակակից անձնագործություն: Փորձենք քննել ակադ.
Հ. Մանանդյանի կովանները՝ «Աշխարհացոյց»-ի ժամանակի վո-
րոշման հարցում:

1. Ակադ. Հ. Մանանդյանի յեղբակացության հիմք հանդի-
սացող կովաններից մեկի մասին մանրամասն խոսել և պրոֆեսոր
Մարկվարտն իր Eranschicht աշխատության մեջ: Վերջինս սիսա-
մամբ կարծել է, թե Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի
տեքստը նախնական բնագիրն է, ու քննության առնելով Խո-
րասանի շրջանների ցուցակում հիշված «Գճակստան» անունը,
յեղել և այն յեղբակացության, թե այդ անունն աղավաղվել է:
Նա առաջարկել է այդ ուղղել «Գճակ» և «Ռատան» ձևով: Ապա
նա այդ անունների հիման վրա հանել և այն յեղբակացությունը,
թե այդ անունների հետ ծանոթ հեղինակը պիտի վոր ապրած
լիներ 737 թվից հետո Խաքանատի և արևմտա-թուրքերի միջև այդ
նույն տերիտորիայում տեղի ունեցած կովից հետո (!): Յեվ պրոֆ.
Մարկվարտի բերած ահա այս յենթադրությունը հիմք և ծառա-
յել ակադ. Հ. Մանանդյանի համար: Պրոֆ. Մարկվարտի այս յեղ-
բակացությունը ակադ. Հ. Մանանդյանը համարում և «ուշա-
գրավ» ու «կարեռ փաստ» «Աշխարհացոյց»-ի ժամանակի վո-
րոշման հարցում:

«Աշխարհացոյց»-ի հնագույն որինակների ուսումնասիրու-

թյունից պարզվում է, վոր «Քուստի Խորասան»-ում հիշվել են վահ թե «Մաշան Գճակստան» շրջանները, վորոնք սխալ համարելով պրոփ. Մարկվարտը ուղղում է «Մանսան, Գճակ, Ասան» ձևով, այլ «Ման, Շանջակստան»։ «Ման»-շրջանը—դա Մանսանն է, իստար-իու հիշած մուսան շնորհած է, իսկ «Շանջակստան»-ը—դա Շանջանն է, պարսկական:

شیر جان سان من

Սեբեռոսի հիշած «Զրէջան»-ը (տես «Սեբե-
ռոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Արմֆանի հրատարակություն,
Էջ 61):

Մարկվարտի յեզրակացությունը, ինչպես տեսնում ենք, չեն հիմնավորվում «Աշխարհացոյց»-ի հնագույն տեքստի տվյալնե-
րով։ Մատենագրական նոր փաստերով, յեթե անգամ հակառակը
պարզվեր, այսինքն հաստատվեր Մարկվարտի առաջարկած ուղ-
ղումը «Գճակ» և «Ասան» ձևով և այդ շրջանների թվարկումը մեզ
հանդիպեր «Աշխարհացոյց»-ի «Քուստի Խորասան»-ի շրջանների
շարքում, այսուամենայնիվ, Մարկվարտի յենթադրությունը կմը-
նար բռնաձիղ մի յենթադրություն, վորովհետև Մարկվարտը չեր
կարող վոչ մի փաստով ապացուցել, վոր այդ շրջաններն իրենց
հին անուններով 737 թվից, այսինքն Խաքանատի և արևմտա-
թուրքերի միջև տեղի ունեցած կռվից առաջ չեյին կարող հիշա-
տակելու ու 737 թվից հետո ապրող հեղինակը միայն պիտի ծա-
նոթ լիներ գրան։ Այսպիսով, ակագ. Հ. Մանանդյանի՝ պրոփ.
Մարկվարտից վերցրած այս կռվանը, հնագույն ձեռագրերի տե-
քստով չի հաստատվում։

2. Վենետիկյան համեմատական հրատարակության մեջ,
Յեփրոպայի աշխարհագրության բաժնում, Փրանսիացիների մա-
սին կա հետեւյալ հիշատակությունը. «Գաղղիուս... Ունի քաղաքս
և ազգս բազում և հօրս, և դազգն Փուանգաց։ Լինի ի նմա գոմէշ
սպիտակ և սպանող» (Վենետ. հրատ. Էջ 594, տող 15—18)։ Ակագ.
Հ. Մանանդյանը հիմնված Փրանկների մասին յեղած այս հիշա-
տակության վրա, յենթադրում է, վոր Փրանկները վորպես հզոր
ազգ կարող եյին հիշատակվել Խ դ. Կարլոս Սեծի ժամանակ։ «Ժը-
րանկները, ինչպես հայտնի յե, — գրում ե ակագ. Հ. Մանան-
դյանը, — արաբների դեմ հաղթական կռիվներ եյին մղել Սպանիա-

յում Կարլոս Մեծի ժամանակ (768—814 թ.): Նույն այս կարլոս Մեծը բարեկամական հարաբերություններ և ունեցել Հարուն ալ-Ռաշիդի հետ: Հավանական ե ըստ այսմ, վոր «Աշխարհացոյց»-ը գրված պիտի լինի հենց այս ժամանակաշրջանից հետո, այսինքն՝ իններորդ դարում» (տես «Խորենացու առեղծվածի լուծումը», էջ 83):

Ֆրանկների մասին յեղած այս հիշտակությունը, մեր կարծիքով, ճիշտ չի մեկնաբանված ակադ. Հ. Մանադյանի կողմից: Այդ հիշտատակության մեջ վնչ թե քրանկներն են «հզօր» հիշտատակված, այլ Գալլիայի ժողովուրդներն ընդհանրապես: Այդ տեքստը պիտի հասկանալ այն ձեռվ, վոր Գալլիայում կան բազմաթիվ և հզօր ազգեր, Գալլիայում ապրում են նաև քրանկները: Ֆրանկները նման ձեռվ են հիշտատակված նաև Հիւշ մատենադարանի հնագույն «Աշխարհացոյց»-ներում: Որինակ՝ թիվ 2748 ձեռագրում կարդում ենք. «Գալլիա... Ունի քաղաքս և ազգս բազում և հզաւրս. և զազդն փռանգաց: Լինի ի նմա գոմէշ սպիտակ և սպանող» (թերթ 223ա): Այսուղի, ինչպես տեսնում ենք, Գալլիայի «հզօր» ազգերի հիշտատակությունը միջակետով բաժանվում և քրանկների հիշտատակությունից: Մատենադարանի «Աշխարհացոյց»-ների վորոշ որինակներում հանդիպում ենք այնպիսի ձեռկերպումների, յերբ «հզօր» են հիշտատակված վնչ թե Գալլիայի ժողովուրդներն ընդհանրապես, կամ քրանկները, այլ—գոմէշները (տես 54 եջի նկարը): Այսպես, թիվ 582 ձեռագրի «Աշխարհացոյց»-ում կարդում ենք. «Եւդ. Գաղղիուս... ունի և քաղաքս, և ազգս բազումս. ազգն փռանկ լինի նմա, և հզօրս գոմէշ սպիտակ և սպանող» (տես թիվ 582, թերթ 170ը): Նախադասության այս կառուցվածքն ուղղելով Հիւշ մատենադարանի թիվ 1883՝ ձեռագրի «Աշխարհացոյց»-ի համապատասխան հատվածով, ստանում ենք հետեւյալը. «Գաղղիուս ունի քաղաքս և ազգս բազումս և ազգն փռանգաց. լինի ի ն[մ]ա գոմէշս հզօրս, <որ է> սպիտակ և սպանող գաղան»: «Սպիտակ ցուլ» ասելով («Աշխարհացոյց»-ի հեղինակն ի նկատի յե ունեցել վայրի ցուլը, չցօք-ը): Դժվար ե, իհարկե, համողված պնդել՝ թե այս նախադասություններից վնրն ե նախնականը, սակայն կասկած լինել չի կարող, վոր յերկու գեպօրմ ել քրանկները չեն, վոր «հզօր» են հիշտատակված, ուստի և ակադ. Հ. Մանանդյանի այս կովանը ևս չի հիմնավորվում:

Մատենադարանի Աշխարհացոյցը՝ ի այն սրբնակը, ուր Գալլիայում հիշված են՝ վոչ թե «Փրանկն հզօրս», այլ «գոմեցն հզօրս»:


Յ. Ակադ. Հ. Մանանդյանը վիճելով պլոտի, Պատկանյանի հետ արաքների նվաճումների հարցի շուրջ, պնդում է, վոր «Աշխարհացոյց»-ը գրելու ժամանակ արաքների նվաճումների հետևանքով Առաջավոր Աստիայի վիճակում արդեն կատարվել ելին տերիտորիալ փոփոխություններ: «Աշխարհացոյց»-ի մեջ,—ասում ենա,—կան ակների նշաններ այն փոփոխությունների, վոր առաջելին յեկել արաբական տիրապետության ժամանակ. որինակ՝ «Աշխարհացոյց»-ում հիշատակված ե Բասրա քաղաքն «ամենալից վաճառք» (Վ. 612,7), Կուֆո կամ Ակողա քաղաքը՝ իբր: «բնակեալ բանակ տուժկաց» (Տ. 38,16), «Արուաստան, որ կոչի Ասորիստան՝ այսինքն Մուծդ» (=Մոսուլ, տես V. 613,8 և այլն): (տես «Խոր. առեղծվածի լուծումը», եջ 78—79):

Ակադ. Հ. Մանանդյանի բերած այս կովանները նույնազես մատենագրանի հնագույն «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրությամբ չեն հաստատվում: Ամենից առաջ պարզվում է, վոր Բասրա քաղաքը հիշատակված ե յեղելվոնց թե «ամենալից վաճառք», այլ «ամենալից պաղովք»: Ոյսպես, թիվ 1883 ձեռագրի «Աշխարհացոյց»-ում գրված ե. «եւ է Բասրա ամենալից պաղովք» (թերթ 155ա): Ուրեմն Բասրա քաղաքը վորպես վաճառատեղի «Աշխարհացոյց»-ում չի հիշատակվել, հետևապես ակադ. Հ. Մանանդյանի այս կովանը ևս չի թնալովում:

Մուքրյանի տեքստից բերված հիշատակությունների վրա մենք կանգ չենք առնի, վորովհետև չկան այնտեղ այնպիսի փառակը, վորոնք VII դարի յերկրորդ կեսից ուշ շրջան բերելու իհաստեր հանգիստանային: Ինչ վերաբերում ե Ասորիստանի «Մուծդ» կոչելուն, մենք կարծում ենք, այս ես ընդմիջարկություն պիտի լինի: Նախնական տեքստում, հավանական ե, յեղել ե «Արուաստան», վոր կոչի Ասորիստան», իսկ հետագայում ընդորինակող գըրիչը ցանկանալով մեկնել աշխարհագրական հին անունը նորով, ավելացրել ե իր ժամանակի անունը—«Արուաստան, որ կոչի Ասորիստան՝ [այս ինքն Մուծդ]»:

4. Ակադ. Հ. Մանանդյանը ցանկանալով ապացուցել «Աշխարհացոյց»-ի արաբական շրջանում գրվելը, բերում ե մի շարք բառեր, վորոնք, յենթաղբում ե, թե արաբերեն բառեր են և ապացուցում են այն մասին, վոր «Աշխարհացոյց»-ը գրվել ե այն ժամանակ, յերբ Հայաստանը նվաճվել եր արաքների կողմից և

արաբական լեզվական կուլտուրան կարողացել եթ թողնել իր
ազգեցությունը։ Նա թվում է հետեւյալ բառերը՝ «Աղխունա»
(V. 612, 26), «Դուռնաղհունար» (V. 612), «Մաղապ» (V. 612, 25.
Տ. 39, 29), «բալասան» (V. 612, 27) (տես «Խորենացու առեղծ.
լուծումը», հջ 82):



Մատենաղարանի ընտիր «Աշխարհացոյց»-ի ակտորի այն եջը, ուր
Բարրան հիշատակված է վհշ թի ամենալից վաճառքը, այլ
չամենալից պաղովք:

Ակադ. Հ. Մանանդյանի բերված այդ բառերի քննությունից պարզվում է, վոր գրանցից վոչ մեկն ել արարական բառ չե: «Մաղապ» բառը (հնագույն ձևով «Մալապ») — դա հունական բալաֆթօնոցն է (տես Պատկան, Արմ. Գեոգրաֆիա, стр. 57): «Բալասան»-ը — թալազարոցն է (տես Պատկան, Արմ. գեոգրաֆիա, стр. 57): Ինչ վերաբերում է «Աղխունա» և «գուլսաղհունար» բառերին, ապա գրանք առանձին բառեր չեն, այլ յերկրորդը առաջինի աղավաղպած ձևն է (տես Վենետիկյան հրատարակության «Աշխարհացոյց»-ի եջ 612) և նրանց ճիշտ նշանակությունը կամ ինչ լեզվով լինելը պարզված չե: Պատկանյանը և այլ բանակերներ կարծում ենին, թե այդ բառը աղավաղպած և «Աղխունա» բարից, սակայն մեր ստուգումից պարզվեց, վոր հին «Աշխարհացոյց»-ներում գործ ե ածված դարձյալ նախկին «ալխունա» ձևով վորը, կարծում ենք, արարական չե: Այսպիսով, պարզվում է, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստից ակադ. Հ. Մանանդյանի կողմից մատնացույց արված բառերից վահ մեկն ել արարելեն չե ու «Աշխարհացոյց»-ն ուշ շրջան բերելու հարցում նրան արգումենտ ծառայել չեն կարող:

5. Վերջապես, մի այլ կարևոր փաստ, վորը կովան է հանդիսացել ակադ. Հ. Մանանդյանին «Աշխարհացոյց»-ի ժամանակը վորոշելու հարցում — զա Բասրա և Ակողա քաղաքների հիշատակությունն և «Մղոնաչափք»-ում:

Հնագույն «Աշխարհացոյց»-ներին կից պահված «Մղոնաչափք»-երի ուսումնասիրությունից պարզվում է սակայն, վոր Բասրա և Ակողա քաղաքների հիշատակությունն ընդմիջարկություն ե: Այդ շատ պարզ յերեսում ե հատկապես ՀԽՍՀ մատենադարանի թիվ 582 ձեռագրի «Մղոնաչափք»-ից, վորի վրա դեռ մենք կանգ կառնենք իր տեղում: Ակադ. Հ. Մանանդյանի՝ ՀԽՍՀ մատենադարանից ստացած 971 թիվ գրչությամբ «Մղոնաչափք»-ը չնայած ՀԽՍՀ մատենադարանի հնագույն գրչագրերից ե, բայց խմբագրված տեքստ ե: Այդ տեքստում ավելացվել են արաբական շրջանում գործող առևտրական մագիստրալի այնպիսի նոր ուղղություններ, վորոնք չեն յեղել հնում և նշված չեն յեղել նախական տեքստում:

Այսպիսով, քննությունը պարզում է, վոր «Աշխարհացոյց»-ն IX դ. յերկրորդ կիսում գրելու վերաբերյալ ակադ. Հ. Մանանդյանի մեջ բերած կովանները չեն հիմնավորվում:

Հարց. և առաջ գալիս, ապա յերբ և գրվել «Աշխարհացոյց»-ը: Զի՞ կարելի արդյոք գա հինգերորդ դարի աշխատությունն համարել ինչպես ընդունված և յեղել վենետիկցիների կողմից: Մատենադարանի ձեռագրերի ուսումնասիրությունից պարզվում է, վոր վհ, «Աշխարհացոյց»-ը 5-րդ դարի աշխատություն չե կարելի համարել: «Աշխարհացոյց»-ի հնագույն որինակների տեքուտում անգամ կան մի շարք այնպիսի փաստեր, վորոնք ցույց են տալիս, վոր «Աշխարհացոյց»-ը գրվել և ուշ շրջանում: Գլխավոր փաստը, վոր մատնացույց և արել պրոֆ. Պատկանյանը «Աշխարհացոյց»-ի V դարից հետո գրելու վերաբերյալ,—դա «Աշխարհացոյց»-ի առաջարանում, նրա հեղինակի կողմից յերկու տեղ, կոստանդին Անտիռքացու «Քրիստոնեական տեղագրություն» աշխատությունից վորպես աղբյուր ոգտվելու փաստն եւ: «Եւոչ միայն զայրեցեալ գօտեաւն ասեն զ՛ղվիանոս, այլ և զամենեայն իսկ երկրաւ շուրջ գոլ զոր և կոստանդինոս Անտիռքացի ի Քրիստոնէական տեղագրութեան ասէ յաղագս տապանին անցանելոց յարեւելեան երկրէն առ մեզի մէջս կոյս» (Վենետ. հրատ., եջ 589): Մեզ հայտնի յե, վոր հեղինակի հրշատակած կոստանդին Անտիռքացին (Կօսմա Ինդիկոլեվստ) ապրել և VI դարում պարզ ե, վոր V դարում ապրած հեղինակը չեր կարող վորպես աղբյուր ոգտագործել VI դարում ապրած հեղինակի աշխատություն: «Աշխարհացոյց»-ի տեքստում Արևմտյան Հայաստանը հիշվում է բաժանված չորս մասի—Առաջին Հայք, Յերկորդ Հայք, Յերրորդ Հայք և Չորրորդ Հայք: Այդ բաժանումը, ինչպես հայտնի յե, կատարված և VI դարի կեսերում Հռուտինիանոս կայսեր կողմից: Պարզ ե, վոր V դարում ապրած հեղինակը չեր կարող ծանոթ լինել և իր աշխատության մեջ արձանագրել այդ բաժանումը:

«Աշխարհացոյց»-ի տեքստում, Արևելքը նկարագրելիս, հեղինակն արարեներին հանգիստ ընակեցնում և իրենց յերկրում, իրարեց դեռ անջատված վիճակում գտնվող յերեք Արարիաներում՝ նշելով այդ Արարիաների յուրաքանչյուրի սահմանը. «Լ. Ապառաժ Արարիա յելից կալով Եգիպտոսի և արևմտեան ճղիւ Կարմիր ծովուն՝ ընդ որ անցն Իսրայէլ, յերի կալով Ասորւց և

Հըշաստանի» (Վեհնետ. հրատ., եջ 611), «Լ. Անապատ Արարիա յերի կայ միջազետաց ըստ հիւսիսոյ, յելից կաղով ապառաժ Արարիոյ և ի մտից Խուժաստանի» (Վեհնետ. հրատ., եջ 612), «Լ. Երշանիկն Արարիա յերի կարով անապատ և ապառաժ Արարիոյ՝ մտանէ ընդ մէջ խորչից Կարմիր ծովուն որպէս ցամաք կղզի» (Վեհնետ. հրատ., եջ 612): Հայաստանի և Մերձավոր Արևելքի շրջանները «Աշխարհացոյց»-ում նկարագրվում են նախարարական վարչական բաժանմամբ: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, պարզ է, փոր չի տեսել արաբական նվաճումները, ավելի ճիշտ, նա ապեկը և այն ժամանակ, յերբ արաբները նոր եցին դուրս յեկել իրենց յերկրից և նրանց գերիշխանությունը հաստատուն հիմքեր գեռ չեր ստեղծել դեռ մնում եր նախկին բաժանումը:

«Աշխարհացոյց»-ի ժամանակի վորոշման հարցում մենք անհրաժեշտ ենք համարում բանասերների ուշադրությունը հրամիւրել մի կարևոր փաստի վրա, վորը, մեր կարծիքով, եյական նշանակություն ունի «Աշխարհացոյց»-ը գրելու ժամանակի պարզման հարցում—դա Ղեվոնդի պատմիչի «Աշխարհացոյց»-ից ոգտվելու փաստն է: Ղեվոնդի պատմության մեջ կան հատվածներ, վորոնք պարզ ցույց են տալիս, վոր նա ոգտվել և «Աշխարհացոյց»-ից: Ղեվոնդի՝ «Աշխարհացոյց»-ից ոգտվելու այս փաստն ակնբախ և հատկապես «Լ.Ա.» (31) գլխում: Անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ Ղեվոնդի պատմությունից ու «Աշխարհացոյց»-ից համապատասխան այդ հատվածներն ու համեմատել իրար: «Աշխարհացոյց»-ի տեքստում յեղած շըջանների անունները մենք շատ անշան փոփոխությամբ դասավորում ենք այն կարգով, ինչպես Ղեվոնդի պատմության մեջ և:

Թ Ե Վ 582 Ճ Ե Ռ Ա Գ Ի Ր

«... Եւ թագաւորն հիւսիսոյ է Խականս, որ է Խաղբաց տէր, և Դշխոյն թագուէի է Խաթուն, որ է կին Խականսայ...»

ԻԶ.Աղբիան է, այսինքն Աղուանք... ունի Աղուանք՝ Քաղաց, Ուստան, Մարծ, Պահան, Խաբանդի, Գե-

Ղ Ե Վ Ա Ն Դ Ի Բ պ ա տ մ ո ւ թ յ ո ւ ն ի ց.

... Շեղիտ յդէր գեսական առ արքայն հիւսիսոյ, որում Խաքանն կոչէին... Եւ հաւանեալ արքայն Խաղբաց՝ տայր գրոյրն իւր նմա կնութեան, որում անունն էր Խաթուն...»

... առնուին բազում գաւառս զհէջար, զՔաղաց, զՈստանի, զՄարզպանեան, զՀարանդի, զԳեղաւու, զՇաքէ, զԲեկ-

գաւու Շաքէ, Բելխ, Եխնի, Քամբէ-
ճան, Հողմաղ, դաշտն Իբաղական»:

զնենի, զկամբեխճան, զնողմաղ, Այ-
քաւառք աշխարհին Աղու անից: Ասին
և զցանկալի դաշտն Բաղասական...:

Եւ գաւառը են ի Վիրս այսո-
քիկ՝ Շուշք, Քուէշփոր, Զելթ, Շու-
փա, Քեթ, Վեղիս Ցիխէքու, Թիանէթ,
Խերկ.

(Հ 528 թերթ 177_բ)

«...Առին և յաշխարհէ իշխանու-
թեանն Վրաց գաւառս եօթն, զՇուչք,
զՔուէշկափոր, զԶելդ, զՇուքէթ,
զՎէլիսցխէ, զԹիանէթ և զԵրկ:

(Դեկտնդ, եջ 131—132):

Տարբերությունները, ինչպես տեսնում ենք, աննշան են.

Քաղաց—Քաղա
Ոստան—Ոստանի
Մարծ, Պանան—Մարզպաննեան
Խարանդի—Հարանդ
Գեղաւու—Գեղաւու
Շաքէ—Շաքէ
Բեխ—Բեխ
Եխնի—Եխնի
Քամբէճան—Կամբեխճան
Հողմաղ—Խողմաղ

դաշտն Իբաղական — դաշտն
Բաղասական
Շուշք—Շուչք
Քուէշփոր—Քուէշկափոր
Զելթ—Զելթդ
Շուփա Քեթ—Շուքէթ
Վեղիս Ցիխէքու—Վէլիսցխէ
Թիանէթ—Թիանէթ
Խերկ—Երկ:

Նկատվող տարբերությունները գրչական բնույթ ունեն:
Քրչական նման աղավաղումները սովորական փաստ են բոլոր հնա-
գույն ձեռագրերում, լինեն այդ հին հայկական, հունական, արա-
բական, թե ուրիշ մեկը: Վերև բերքած բառերի համեմատությու-
նից պարզ յերեսում ե, վոր Ղեվոնդն ոգտվել ե «Աշխարհացոյց»-ից:
Ղեվոնդի՝ «Աշխարհացոյց»-ից ոգտվելու փաստն այնքան ե ակն-
բախ, վոր մենք ավելորդ ենք համարում բերել Ղեվոնդի պատ-
մության մեջ ոգտագործած «Աշխարհացոյց»-ի մյուս հատվածները:
Ղեվոնդի՝ «Աշխարհացոյց»-ից ոգտվելու այս փաստը պարզ
վկայում ե, վոր Ղեվոնդի ժամանակ «Աշխարհացոյց»-ն արդեն
գրած, պատրաստ մի աշխատություն եր, այլապես Ղեվոնդը
չեր կարող ոգտվել նրանից: Մեզ հայտնի յե, վոր Ղե-
վոնդն եր պատմությունը գրել ե Իազրատունիների նշանափոր
իշխանի, Շապուհի պատվերով (Տ-րդ դարի յերկրորդ կիսում), պարզ
ե ուրեմն, վոր «Աշխարհացոյց»-ը Տ-րդ դարից ուշ գրված լինել

չեր կարող այս փաստը միանգամայն հերքում և Խորենացուն, ինչպես և «Աշխարհացոյց»-ի հեղինակի 8-րդ դարից ուշ բերող բանասերների բոլոր կավանները: Պարզ եւ դառնում, վոր Ղեփոնդի ժամանակ (8-րդ դարի յերկրորդ կիսում) «Աշխարհացոյց»-ն արդեն գրված եր և Ղեփոնդն ոգտվել եւ այդ աշխատությունից:

Վերև բերված փաստերը մեզ հաստատուն հիմք են տալիս պնդելու, վոր «Աշխարհացոյց»-ը գրված և VII դարում, Հայաստանն արաբներից գեռ չնվաճված ժամանակ:

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՋ»-Ի ՅԵՎ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒԻՆ
ՀԱՅՈՅ-ի ԲՆՈՐՈՇ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ

«Աշխարհացոյց»-ը Խորենացուն վերագրող բանասերների մոտ ուշադրության հատուկ առարկա յեն հանդիսացել «Աշխարհացոյց»-ի և Խորենացու «Պատմութեան» տեքստերում նկատվող վորոշ բառերի և զարձվածքների նմանությունները: Դրա վրա հատկապես ծանրացել եւ ակադ. Հ. Մանանդյանն իր «Խորենացու առեղծվածի լուծումը» աշխատության մեջ: Նա քննելով Խորենացու «Պատմութեան» և «Աշխարհացոյց»-ի տեքստերում գործ ածված լեզվի ու շարադրման ձեր վորոշ առանձնահատկություններ, յեկել եւ հետեւյալ յեղբակացության: «Խորենացին իրեւ պատմագիր ունի, ինչպես հայտնի յե, հետաքրքիր առանձնահատկություններ, վորոնցից զուրկ են մյուս հայ պատմագիրները: Խորենացին հիշում ու քննադատում ե, սովորաբար, իր զործածած աղյուսըները: Պատմական անցքեր նկարագրելիս նա անտարբեր արձանագրող չե, այլ նաև այդ անցքերը լուսաբանող ու գնահատող» (եջ 67): Ակադ. Հ. Մանանդյանն այնուհետև թվում է այն բոլոր դարձվածքները, վորոնք հատուկ ե նա համարում վերև հիշված Խորենացուն և համոզված հայտարարում, վոր դրանք «գրեթե չեն հանդիպում մյուս մատենագիրների մոտ» (եջ 68): Այդ նմանություններն ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով այնքան կարևոր են և ծանրակշիռ «Աշխարհացոյց»-ը Խորենացու հեղինակությանը պատկանելու հարցում, վոր իր կատարած համեմատությունից հետո «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցը նա համարում է վերջնականապես լուծված: «Արդ՝ նոր այս դիտողություններն այնքան կարևոր են և ծանրակշիռ, վոր կարող ենք, ինձ թվում

և, «Աշխարհացոյց»-ի հեղինակի ինսդիբը համարել վերջնականապես պարզված: «Աշխարհացոյց»-ի հեղինակն և, անտարեկույս, Մովսես Խորենացին, և Վենետիկի Միսիթարյաններն այդ կետում կատարելապես իրավացի յեն» (եջ 74):

Հեղինակի վորոշման խնդրում, անկասկած, վորոշ նշանակություն ունեն բառերի և դարձվածքների նմանությունները: Բառեր ու դարձվածքներ կան, վորոնք հատուկ են այս կամ այն դարաշրջանին և այդ դարաշրջանում ապրող առանձին հեղինակների: Անձրածեցած և, անպայման, ուսումնասիրության մեջ ոգտագործել լեզվական համեմատության տվյալները: Նրանք խոշոր չափով ոգնում են մեզ պարզելու ուսումնասիրվող աշխատության հեղինակին: Սակայն լեզվական ուսումնասիրությունից ստացած ավլայները, մեր կարծիքով, անպայման պիտի կապակցվեն մատենագրական կոնկրետ հիշատակությունների հետ, կամ, գոնե, հիմնավորվեն կողմնակի փաստերով, այլապես լեզվական ուսումնասիրությունից միայն հանված յեզրակացությունները կարող են միակողմանի լինել: Լեզվական ուսումնասիրություն կատարելու ժամանակ չպիտի մոռանալ նաև մի կարևոր հանգամանք, վոր հնագույն շրջանում գրված մի շարք աշխատություններ, վորոնց թվում նաև «Աշխարհացոյց»-ը, գործ են ածվել վորպես դասգրքեր: Կրանց վրա դաստիարակվել և մի ամբողջ սերունդ, ստեղծվել և շկոլա, և միանդամայն հնարավոր եր, վոր այդ շկոլայով անցած այս կամ այն անձնավորություն ճիշտ նման բառերով ու դարձվածքներով կրկներ իր ուսուցչին: Զպիտի մոռանալ նաև այն հանգամանքը, վոր հնագույն շրջանից մեզ հասած հայկական մատենագրերի մեծ մասը խմբագրման և յենթարկվել ուշ միջնադարում՝ ժամանակակից սոցիալական պատվերի ու պահանջի համաձայն: Այդ յերեսում և՛ կորյունի, Ծիրակացու, Մովսեսի և այլ հեղինակների տեքստերից: Ուշ շրջանում ընդորինակող կամ խմբագրող հեղինակն իր բառերով ու դարձվածքներով ուղղումներ և մացրել հաճախ: Համանման կամ տարրեր մի շարք աշխատություններում, այնպես վոր, առանձին բառերի և դարձվածքների հիման վրա հանած յեզրակացությունները, վորոշ գեպքում, կարող են խարստանել լինել: Հայկական մատենագրությամբ դրադվող վորոշ ուսումնասիրողների հիմնական սխալը, մեր կարծիքով,

Նենց կայացել են նրանում, վոր նրանք իրենց յեզրակացությունների ծանրության կենաբոնը դարձել են հենց լեզվական փորձալ նմանությունները, վորոնք, անկասկած, պիտի բերելին և բերել են նրանց սխալ յեզրակացությունների: Մենք այստեղ նպատակ չունենք քննության առնել «Աշխարհացոյցի»-ի և Խորենացու բառապաշարը—դա մասնագիտական այլ թեմայի հարց է, սակայն ցույց տալու համար լեզվական նմանությունների հիման վրա «Աշխարհացոյց»-ի հեղինակի պարզման մեթոդի սխալ լինելը, ցանկանում ենք մի քանի խոսք առնել այդ մասին և ցույց տալ վոր բանասիրության կողմից «Աշխարհացոյց»-ի տեքստում մատնացույց արված դարձվածքները բոլորին ել բնորոշ չեն միայն Խորենացուն, այլ վոր այդ բոլոր դարձվածքները, առանց բացառության, գործ են ածված նաև Անանիա Շիրակացու կողմից:

«Աշխարհացոյց»-ի և Խորենացու «Պատմութեան» տեքստերում բանասիրության մեջ մատնացույց են արված հետեւյալ բառերը՝ «գիտեմ», «կարծեմ», «ինձ թուի», «հաւանեալ եմ», «ճշմարիտ է», «ասեմ», «գրեմ» և «սկսայց»: Զերկարացներու համար, մենք չենք բերի Խորենացու «Պատմութեան» համապատասխան հատվածները,—հետաքրքրվողն այդ կարող եք գտնել ակադ. Հ. Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը» աշխատության մեջ, այլ կհամեմատենք «Աշխարհացոյց»-ում մատնացույց արված «ընորոշ դարձվածքները» Անանիա Շիրակացու համապատասխան այն հատվածների հետ, վորոնք հանդիպում են մեզ նրա աշխատությունների մեջ.—

«Գիտեմ»:—

«Ասեն թէ նհանգ կայ յԱրածաւնի, սրակս յԵփրատ, զոր հաւասարի գիտեմք, կենդանի քարքաշամզ զուգեաւ...»:

(Տ., եջ 31, տող 27—30)

«Զայս երկու գետս գիտեմ Միջագետաց Ասորոց...»:

(Տ., եջ 37, տող. 17,
հմմ. նաև Տ., 27/12, Տ., 42/25)

«Գիտեմ սակաւս ի Յունաց որք զայտ տօնեին մինչեւ ի Յուստինիանոս թագաւոր...»:

(Շիր. Յայտ. ճառը, եջ 13)

«...երանելեացն ասեմ Բարսղի և Գրիգորի Անձիանձու. գիտեմ զնսա սա սուբբու...»:

(Շիր. Յայտ. ճառը, եջ 9,
հմմ. նաև Շիր. զատկի ճառը, եջ 23)

«Կարծեմ»:—

«... ասեն թէ գնաց Զոսիմոս
միայնակեացն, բայց կարծեմ թէ
զորյցն այլաբանութիւն է...»:

(Տ., եջ 20, տ. 14—15)

«Բայց կարծեմ դայս վտակ,
որ այժմ Քութայս անուանե, սա
կոչել Արքութեայս...»:

(Տ., եջ 38, տ. 17—18. Հմմ.
հմմ. Տ., 12/7, 22, 8/24, 19/16, 37/13)

«Ինձ քուի»:—

«... գետն Մառդիւ ի Մարգանի
աշխարհի, որ ինձ թուի՝ Մը և Կ
Մըլառու»:

(Տ., եջ 12, տ. 15—16)

«Եւ ասառածային գիրն դամե-
նայն Արեաց աշխարհն Պարթևք
կոչէ. ինձ թուի վասն թագաւորու-
թեան ի նոցանէ լինելոյ»:

(Տ., եջ 41, տ. 32—35
հմմ. նաև Տ. 18/8, Տ. 42/10)

«Հաւանինալ իմ»: «հաւատամ»:

«Եւ յաղագս մըջոցի աշխարհի
բնակութեան մարդկան, Պտղոմէոս
առէ զերջանիկն Արարիա... Բայց
ոչ հաւանիմ...»:

(Տ., եջ 13, տ. 10—13)

«Այլ հաւանեալ եմ Պտղո-
մէայ պատմութեանն...»:

(Վ., եջ 590, տ. 7—8)

«... բայց ես ոչ հաւատամ...»:

(Վ., եջ 592, տ. 24—28.
Հմմ. նաև Տ. 11/1, 13/12)

«... յումէ՞ այնչափ բիւրք լու-
սաւորեալք. կարծեմ թէ և ոչ լ-
որբոյն Պաւղոսէ»:

(Շիր. Յայտ. ճառը, եջ 7)

«Բայց ես կարծեմ դսա-
վեհագոյն քան զառաջինն, որպէս
ամենեցուն յայտնի է...»:

(Շիր. Յայտ. ճառը, եջ 7.
հմմ. նաև Շիր. «Յղ. Կրկրի», եջ 38)

«Այս են անմտութիւնը մեծ, և
աւելի թուին ինձ ի սոցանէ
ասացեալքն...»:

(Շիր. «Յաղագս երկրի», եջ 39)

«Եւ եթէ ոք կամեսցի օրինակ
տեսական զարտաքնոցն լսել... ինձ
ի դէպ թուի ասացեալն իբրև
զձու...»

(Շիր. «Յաղագս երկրի», եջ 38.
հմմ. նաև Շիր. Յայտ. ճառը, եջ 11)

«Արդ թէպէտ և արտաքինքն յա-
ղագս երկրի այսպէս ասացին... թէ-
պէտ և սակաւիկ ինչ մաքրագոյն.
Բայց ես ոչ հաւանիմ նոցան...»:

(Շիր. «Յաղագս երկրի», եջ 38)

«Արդ թէպէտ և հոդերք են և
սոքա, սակայն ես հաւանիալ եմ
... միաբանելոց»:

(Շիր. «Յաղագս արեգական» եջ 55)

«... և հաւատամ Մաղմոսին
որ ասէ...»:

(Շիր. «Յաղագս երկրի» եջ 40.
հմմ. նաև Շիր. եջ 22, 37, 39, 10)

«Եւ նշմարիտ»:—

«... զկասրիտականն՝ որ է Վրկա-
նին ծով, և երկիր ընակութիւն
մարդկան առէ շուրջ լինել զնոքօք.
և է ճշմարիտ»:

(Վ, հջ 589, տ. 25—28)

«Ասիմ»:—

«Բայց ասեմ թէ լսող զիվուտա-
ծոյ անցանէ անդ պասկուձ հաւ,
որում ոչ հաւատացաք...»:

(Տ, հջ 39, տ. 24—25)

Հմմ. նաև Տ. 23/9, 37/12, 17, 41/26)

«Գրիմ»:—

«... մեք որպէս անհաս եղեալ մե-
ծութեան լումք, և գրեմք զայս
միայն զոր կոփեաց սոն կամ ետես
ակն մարդոյ»:

(Վ, հջ 590, տ. 23—26)

«Եւ մեք հայեցեալ ի հեռաստանէ
չկարացեալք ճշմարտությամբ ի վե-
րայ իրացն հասանել հաստատու-
թեամբ, աստեղ թափելոյ նշան առ-
նեմք... որ է ճշմարիտ»:

(Շիր. «Առ խոստաց» ձեռ. ՀԽՍՀ
Պետ. մատ. № 2762, հջ 145)

«Արդ՝ ես այսպէս ասեմ՝ թէ
քաղդէացիք ոչ միայն վասն մեղացն
տան պատիժամ... այլ և վասն այնո-
ցիկ որ զկնի նոցա լինիցին...»
(Շիր. «Առ խոստաց», ձեռ. ՀԽՍՀ
Պետ. մատ. № 2180, թիրթ 490ա: Հմմ.
նաև նույն աշխատության վերջին
գլուխը):

«Գրեմ ճեղ և խրախնականս, յոր-
ժամ ի կերպակուրս և յըմբելիս զուար-
ճանայք...»

(Շիր. «Խրախնականք», տես իմ
«Շիրակացու թվաբ. զաստ-
գիրք»-ը, հրատ. Յերեկ. պետ. հա-
մալուարանի):

Դեպի առասպեկները և իր ոգտագործած աղբյուրները քննա-
դատական վերաբերմունք ունի վոչ միայն նորենացին, այլ և
Շիրակացին: Դրանում համոզվելու համար անհրաժեշտ ենք հա-
մարում բերել մի քանի փաստեր:

Շիրակացին տիեզերագիտական բովանդակություն ունեցող
իր «Առ խոստացեալսն» աշխատության «Յաղագս երկնային զար-
դուց» գլուխում, խոսելով քաղդեյական զբուցների մասին, քննա-
դատում և նրանց ու զայրացած բացականչում: «Եւ ես զարմա-
նամ թէ զիանք այնպիսի գատարկացեալք գործոյ են՝ միշտ զհետ
սնուեաց առանց ամօթոյ և պատկառութեան» (ՀԽՍՀ Մատ.
ձ. թ. 2180, թ. 493ա):

Շիրակացին խոսելով «Կաթին ծրի» մասին և մեջ բերելով

տարածված լեզենդաներից մի քանիսը, խորհուրդ և տալիս իր ընթերցողներին չլսել նման լեզենդաներ. «Թողէք ի բաց զայդ ով աստուածամէր լսօղը, և մի զայդպիսի բան լսէք...» (Շիր. «Յաղագս կաթին ծրոյ», եջ 48):

Շիրակացին խոսելով ծովի ջրի մասին ու բերելով մի շարք որինակներ, չի համաձայնում «արտաքին» կոչված գիտնական-ների տեսության հետ, չնայած նրանց բերած որինակները հավանական են յերեռմ Շիրակացուն. «Արդ թէպէտե օրինակս հաւանականս տան արտաքինքն, սակայն ինձ ոչ է հաճոյ»... (Շիր. «Յաղ. ծովու», եջ 42):

Մի այլ տեղ Շիրակացին նորից կանգ առնելով «արտաքին» գիտնականների տեսությունների վրա, դրանք համարում ե ծաղրի արժանի տեսություններ. «Թէպէտ և չարաց փիլիսոփայիցն ոչ թուեցան հաճոյ, քանզի կէսքն ի նոցանէ երկին բազում և աշխարհս անհամար ասացին... Բայց ինձ արդարե ծաղու և եպիրանաց արժանի թուին»... (տես Շիր. ՀԽՍՀ Պետ. մատ. ձեռ. թիվ 2762, եջ 106):

Յեվ, վերջապես, ճիշտ չե, թե Խորենացին ե միայն, վոր հատուկ ուշաղրություն ե դարձել առասպելների վրա: Հանրածանոթ ե Շիրակացու «Կաթին ծրոյ» գլխում հունական, քաղցեյական և հայկական առասպելները հիշատակելու փաստը:

Քաղցեյական առասպելների վրա Շիրակացին էրեկար կանգ և առել հատկապես իր տիեզերագիտական բովանդակություն ունեցող աշխատության՝ «Յաղագս երկնային զարդուց» գլխում: Շիրակացու բերած այդ զրույցները, դժբախտաբար, պլոփ. Պատկանյանի հրատարակած ձեռագրի տեքստում անդամահատվել ե: Դա իր ծավալով մոտ կես մամուլ նյութ ե և տեղավորված ե յեղել Պատկանյանի հրատարակած տեքստի 43-երրորդ եջի «աշխատութիւն անշահ համարիմ» նախադասությունից հետո: Շիրակացին այդպես սպանիչ քննադատության ե յենթարկում քաղցեյական զրույցները (տես ՀԽՍՀ մատ. ձ. թ. 2180, «Յաղագս երկնային զարդուց»):

«Աշխարհացոյց»-ը Խորենացու աշխատությունը հանգիստանալու առթիվ ակադ. Հ. Մանսանդյանը մատնացույց ե անում մի այլ փաստ — «Աշխարհացոյց»-ի և Խորենացու «Պատմութեան» տեքստերի բաժանումը լսատ «հատած»-ների: Նա յենթադրում ե, վոր Խորենացու «Պատմութեան» II և III մասերը ևս կոչվել են:

վոչ թե «զբքեր», այլ «հատած»-ներ, ինչպես «Աշխարհացոյց»-ի տեքստումն ե՝ «Աշխարհագիր. հատած երկրորդ» (V, եջ 590), «Լիքիքա. երկրորդ հատած աշխարհիս» (S, 18), «կատարեցաւ երկրորդ հատածն» (S, 21): Ակադ. Հ. Մանանդյանը տեքստերի նման բաժանումը հատուել է համարում միայն Խորենացուն և արտասովոր փաստ՝ մատենագրական մյուս հին յերկերում: «Արդ՝ ուշագրավ ե առանձնապես, վոր խորթ ու արտասովոր նույն «հատած» վերնագիրը, վոր չեն հանդիպում մատենագրական՝ մյուս հին յերկերում, ունի նաև «Աշխարհացոյց»-ը» («Խոր. առ. լուծումը», եջ 76):

Հին մատենագիրների յերկերի ուսումնասիրությունը պարզում է, վոր «հատած» բառը «կտրվածք», «մաս», «բաժին» իմաստով, գործ և ածված միշտ շարք տեքստերում, հատկապես հունարան դպրոցի քերթողների մոտ, ինչպես շատ ճիշտ նկատել ե հենց ինքը ակադ. Հ. Մանանդյանը: Կարելի յերեւ վորոշ որինակներ. «Յերիս հատած կենաց մերոց կամ ժամանակաց» («Ատենաբանութիւնն ժողովական՝ Յովիաննու իմաստասիրի»), «Յերիս հատած բաժանի առաջիկայ շարագրութիւնս» (Դաւիթի Մեկն. Պորփիրի), «Ուղիղ կարգեալ երկրի հատած առ ի բնակութիւն մարդկան: Երկրի հատածի անբաւ ցամաք, և կղզիք, և քէոռնէոս» (Փիլ. նիս. և լին), «Ոչ օր, և ոչ ժամ, և ոչ մասն հատածի» (Վարդ. Պատմ.), «Անորակի արփոյն հատածք՝ հոսմամբ որակացեալ» (Ան. Նարեկացի), «Այս իսկ հատած է առաջին միոյ յերկոտասան մասնէ: Գնայ արեգակն ի հատածն առաջին, յորժամ հաւասարի տիւ գիշէրոյն: Պատմութիւնս ժամանակացն, յոր յառաջն եղեալ է մեր՝ ի հատած հատած դրոշմեալ է մեր» (Եւսեբ. Պատմ.) (հմմ. այս բոլորը ՆՀԲ, II հատ., եջ 57): «Հատած» բառը բաժին իմաստով յերեք տեղ մեզ հանդիպել և գործածված նաև Անանիա Շիրակացու մոտ. «Բաժանեալ երից հատածաց ուղեղնացութեամբ ծովային ձանապարհաւն» (Շիր. «Յաղագս հիւս. աստեղաց», եջ 49), «Կենդանատեսակ բոլորակութիւն շարժի առշեղապէս՝ բաժանեալ ի հատած երկոտասան» (Շիր. «Յաղ. կենդանատեսակ բոլորակութեան», եջ 68), «... Բիւրեակն, որ լինի Դ հատածք» (Շիր. «Մակս բաց. թուրց»): Վերջինս, յենթագրվում է, վոր Շիրակացունն ե և տեքստը գեռ չի հրատարակված:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, վոր «Աշխարհացոյց»-ը Խորենացու աշխատությունը համարող բանասերների բերված դարձ-

վածքները բոլորովին ել «բնորոշ չեն» միայն Խորենացուն և «արտասովիոր չեն» հին հայ մատենապրության մեջ: Մատնացույց արված բոլոր բնորոշ գարձածքները գործ են ածված նաև Անանիս Շիրակացու աշխատություններում:

Շիրականը ՅԵՎ. «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-ի ՀԵՂԻՆԱԿԻ ՄԻԶԵՎ.
ՄԱՏՆԱՑՈՒՅՑ ԱՐՎԱԾ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՂՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ակադ. Հ. Մանանդյանն իր «Խորենացու առեղծվածի լու-
ծումը» աշխատության մեջ ցանկանալով ապացուցել «Աշխար-
հացոյց»-ը Շիրակացու աշխատություն չլինելը, բերում և մի
շարք այնպիսի փաստեր, վորոնք, նրա կարծիքով, ապացուցում
են Շիրակացու և «Աշխարհացոյց»-ի հեղինակի աշխարհագրա-
կան վորոշ տերմինների և աշխարհագրական հատուկ հայցքների
տարբերությունները: Կանգ առնենք նրանց վրա և քննինք դրանք:

1. Ակադ. Հ. Մանանդյանը մեջ բերելով պրոֆ. Բ. Պատկա-
նյանի «Աշխարհացոյց»-ի ոռւսիրեն թարգմանության ծանոթու-
թյունը («Наш автор употребляет одно и тоже слово միջօ-
րէկան զիդ для определения экватора и меридиана, между
тем как для первого существует выражение «հասարակած»,
«հասարակօրեայ») և համաձայնելով նրա հանած յեղակացության
հետ՝ այդ տերմինները եկվատորի նշանակությամբ գործ ածելու
խնդրում անհրաժեշտ և համարում նշել Շիրակացու աշխատու-
թյան այն եջերը, ուր գործ են ածված «հասարակած» և «հա-
սարակօրեայ» տերմինները: Նա այնուհետև պնդում է, վոր Շի-
րակացուն ծանոթ այդ տերմինները «ծանօթ չեն «Աշխարհա-
ցոյց»-ի հեղինակին» (Եջ 56):

Պրոֆ. Պատկանյանը, ինչպես և ակադ. Հ. Մանանդյանը
«հասարակած» և «հասարակօրեայ» տերմինները, մեզ թվում ե,
ներկայացնում են վնչ իրենց բուն իմաստով: Շիրակացին «հասա-
րակած» և «հասարակօրեայ» տերմինները գործ և ածում վնչ
թե եկվատորի, այլ յերկնային ծրի, գիշերը և ցերեկը հավա-
սարեցնող կետի (հունական Խորենի) նշանակությամբ: Դրա-
նում համոզվելու համար կարելի յերեկ այդ տերմինների գործ
ածված նախագասությունները: «Եւ գարձեալ յորժամ սկսանի
արեգակն աշտիճանել ի հարաւակողմանց՝ գալ հասանել ի հասա-

բակածն երկնից՝ գհաւասարութիւն տուընջեան և գիշերոյ կատարէ» (Շիր. «Մնաց. բանից», եջ 57), կամ «Եւ ոչ յորժամ ծագէ (արեգակն—Ա. Ա.) առ բնակչացն արեելեայց, և ոչ յորժամ գայ հասանէ ի հասարակածն երկնից, փոխի ինչ ի կերպարանացն զոր ունէր» (Շիր. «Մնաց. բանից», եջ 59), դարձյալ՝ «Արդէ ոկիզըն կենդանատեսակ բոլորակութեան Խոյն, արական, հասարակօրեայ՝ յեղանակ գարնանային...» (Շիր. «Մնաց. բանից», եջ 68): «Հասարակած» տերմինն այս նույն նշանակությամբ գործ և ածված ՀԽՍՀ Պետ. մատենադարանում գտնվող Շիրակացու տոմարական, չըրատարակված մի աշխատության մեջ: Յեթե հաջողվեր Շիրակացու աշխատության մեջ կոնկրետ ցույց տալ «հասարակած» տերմինի գործածության իրոք յերկրի հասարակածի իմաստով՝ գուցե հնարավոր լիներ խոսել «Աշխարհացոյց»-ի ձեղինակի և Շիրակացու գործ ածած աշխարհագրական տերմինների հականության մասին, բայց քանի վոր մատնացույց արված փաստերը յերկնային ծրին են վերաբերում, ուստի և այդ հականություն համարել չի կարելի:

2. «Շիրակացին և «Աշխարհացոյց»-ի հեղինակը,— գրում ե ակադ. Հ. Մանանդյանը,— միանդամայն տարբեր հասկացողություններ ունեն յերկրի ձեր մասին: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, համաձայն Պտուեմնոսի տեսության՝ յերկրը համարում ե գնդաձե, իսկ Անանիա Շիրակացին, վոր կանգնած ե քրիստոնեական մեկնիչների տեսակետի վրա՝ յենթագրում ե յերկրը «չորեքիուսի» (տե՛ս «Խոր. առեղծ. լուծ.», եջ 57—58):

Ճիշտ չե թե Շիրակացին յերկրագունդը կլոր չի պատկերացրել: Նրա աշխատությունների մեջ կան բազմաթիվ հատվածներ, վոր հակառակն են վկայում: Կարելի յե բերել մի քանի որինակներ. «Եւ իթէ ոք կամեսցի օրինակ տեսական զարտաքնոցն լնել իրը թէ զկայա երկրի նմանեցուցանել ինձ ի դէպ թուի ասացեան իրրե զնու, որպէս նորա գեղինն ի միջին գնդաձե կառուցեալ կայ և ապիտակն շուրջ զնովաւ, և խեճեպն պատ առեալ դամենայնիւ, նոյնպէս և երկիրս ի միջոցին կառուցեալ կայ և օդ¹ շուրջ զնովաւ և երկին պատ առեալ զամենայնիւ» (Շիր.

1 ՀԽՍՀ Պետ. մատենակարանի թիվ 2180 ձեռ. հիման վրա մենք ուղղակի ենք պրոֆ. Բ. Պատկանյանի հրատ. ակբանում «ապա» բառը «օդ» բառով

«Մնաց. բանից», եջ 38): Կամ՞ մի այլ տեղ՝ «Ճանճք խնձորով պատեալը, նույնպէս և մարդիկ երկրաւ»: Ճիշտ ե, Շիրակացին այդ նույն աշխատության մեջ խոսում ե նաև յերկրի չորեքկուսի միներու մասին («Եւ քանզի երկիր չորեքկուսի ի միջոցի երկնի կառուցաւ...» (եջ 37), սակայն նա այստեղ թվում ե գոյություն ունեցող տեսակետներից մեկը միայն: Շիրակացին իր աշխատության այդ գլխի հենց սկզբից հիշում ե գոյություն ունեցող մի շարք տեսակետներ: «Զերկիր ոմանք ի բարեաց փիլիսոփայիցն ասուցին թէ ձևացեալ է իշրկ սկուտեղ, և ոմանք ասացին իշրկ զգունս, և ոմանք իրբեկըուէս երկերեակ...» (Շիր. «Մնաց. բանից», եջ 37):

3. Շիրակացին, ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով, արեգակը մեծ ե համարում յերկրից, իսկ «Աշխարհացոյց»-ի հեղինակը, ընդհակառակը, յերկրին ե մեծ համարում արեգակից:

Շիրակացու և «Աշխարհացոյց»-ի հեղինակի մեջ այս հարցում ևս հակասություն չկա: «Աշխարհացոյց»-ի տեքստում յերկրի մեծության մասին խոսված ե հետեւյալ հատվածում: «Վասն որոյ ասացին զարեգակն շատ փոքր քան զերկիր. քանզի վաթսուն և վեց մասն ասեն զարեգակն, զերկուս նահանգս ասելով զբովանդակութիւն արեգական, այսինքն օթևանս քառասուն» (Սուր. եջ 7), (... ասացին զարեգակն շատ փոքրագոյն քան զերկիրս լինել...) (եջ 588): Յերկու տեքստում ել «Աշխարհացոյց»-ի հեղինակը, ինչպես տեսնում ենք, գարճյալ թվում ե տեսակետներ, նա անգամ շեշտում ե, վոր «ասացին» թե այսպիս և: Զայխոփ մոռանալ, վոր գիտության այն ժամանակվա զարդացման աստիճանում այնքան ել հեշտ չեր նման հարցեր համոզված, վճռականորեն պնդել, ուստի և Շիրակացին անհրաժեշտ ե համարում թվել այս հարցում առարկեր գիտնականների տեսակետները միայն:

4. «Անանիս Շիրակացին իրարից տարբեր ե համարում թյուրիմացաբար «Հիւրկանիս» և «Ասպիս» ծովերը (=ըստ յերեկութին Կատուն) ծովերը, իսկ «Աշխարհացոյց»-ի հեղինակը գիտե, վոր այդ յերկու անունն ել վերաբերում են Կասպից ծովին» շարունակում ե ակադ. Հ. Մանանդյանը (անս «Խոր. առեղծ. լուծումը», եջ 57):

Պրոֆ. Ք. Պատկանյանի Շիրակացու «Մնացորդք բանից» աշխատության «Յաղագս ծովու» գլխում իրոք վոր Կասպից ծովը տարբերվում ե Հյուրկանս ծովից: «Թէպէտ և ասեն ոմանք

(Պատ. տեքստում—«ամանք») զծովէն որ անուանեալ կոչի Հիւրականիա, և զնորուն ընկեր է որ կոչի Ասպիս եթէ զատեալ մեկնեալ են ի բուն ծովէն, այլ որ փոյթ յանձին կալան զաշխարհ ամենայն ի գիր առնուլ... ասեն թէ ծակը են ի միմեանս ծովք, և երթան կցին ի միմեանս...» (Ծիր. «Մնաց. բանից», եջ 41): Հեղէ Պետ. մատենադարանում յեղած Շիրակացու տիեզերագիտության ընդարձակ տեքստի համապատասխան հատվածի համեմատությունը հիմք ե տալիս յենթագրելու, վոր այլ պարբերություն «և զնորուն ընկեր է որ կոչի Ասպիս» նախադասությունն, ընդմիջարկություն պիտի լինի: Մատենադարանի այդ ձեռագրում, վորը կրում ե 2180 համարը, վերև բերված նախադասությունը գրված ե աստղանիշով ներքին լուսանցքում տարբեր թանաքով: Այնքան, վորքան վոր Պատղեմեոսի և Պապոսի աշխատություններին մոտից ծանոթ Շիրակացին յերբեք ել կասպից ծովին «Ասպիս» չեր ասի, նախադասությունը դրված ե քերականական սխալ ձեր տակ և չի կապակցում ընդհանուր մտքի հետ, ուստի և հաստատվում ե այդ նախադասության ընդմիջարկություն լինելը: Հավանական ե, թիվ 2180 ձեռագրի ընդորինակող գրիչը (գուցե և հետագայում ուրիշ մեկը, վորովհետև ավելացած նախադասության գրչությունը բուն ձեռագրի գրչությունից տարբերվում ե) համեմատելով այլ ձեռագրի հետ, կարծել ե, թե իր ձեռագրիրը թերի յե և կատարել ե իր կարծիքով անհրաժեշտ լրացումը ներքին լուսանցքում:

5. Շիրակացին ծովը տարբերում ե ծովակից, ասում է ակադ. Հ. Մանանդյանը, նա անգամ դատապարտում ե շփոթողներին, իսկ «Աշխարհացոյց»-ի հեղինակն այդպիսի տարբերություն չգիտե (տես «Խոր. առեղծ. լուծումը», եջ 56):

Ճիշտ չե, թե «Աշխարհացոյց»-ի հեղինակը ծովակը և ծովը չի տարբերում իրարից: Այսպես, նա Հայաստանի աշխարհագրության բաժնում հիշում է. «Եւ ունի Այրարատ լերինս և դաշտս, և դամենայն պարարտութիւն, և ծովակն Թալլատոյ...» (եջ 610—611), կամ դարձյալ «Լե. Մարք, որ կոչին Քուստիկ Քապկողք... Ունի լերինս և գետս, և ծովակն որ կոչի Կապուտան՝ ուր զքուռամդիզն գործեն» (եջ 613): Իսկ ծով բառը նա «Աշխարհացոյց»-ում գործ ե ածել բազմաթիվ տեղերում: Ինչ վերաբերում ե «Աշխարհացոյց»-ում Բզնունյաց ծովակի ծով անվանվելը, այդ, մեզ թվում ե, աղավաղված ե: Սկզբնական տեքս-

տում յեղել և «ծովակ», սակայն հետագա ընդուրինակություն-ները գարձրել են ծով։ Այդ անհավանական մի բան չե, վորովհետեւ Բնաւույաց լիճը մեղ մոտ, սովորաբար, ծով և անվանվել, և դրա

2. Հիմք կամ ինչպուտ վեց ու մեռ
էլ կոչ

Մատենադարանի թիվ 2180 ձևուագիր Շիբակացու «Տիեզերագիտություն»
տեքստի այս հջույնը ուր չէկիւրկանինիա» ծովու աղելացված և ներքեւում:

համար ել հենց Շիրակացին զգուշացնում եւ. «... ոչ է պարտ զծովակսն ծովս կոչել... Եւ ոչ մեր աշխարհիս ծովակս զոր կոչեմք Բղնունեաց, և ոչ այլք որ յարելեմ են որ կոչին նոյնանանք. զի սոքա զոր ասացաք՝ ծովակք են և ոչ ծովք» (Շիր. «Մասրանից», եջ 41): Շիրակացին դատապարտում եւ Բղնունյաց ծովակի ծով անվանելու տրադիցիոն սովորությունը:

Այսպիսով, ալադ. Հ. Մանաղյանի կովանների քննությունը ցույց եւ տալիս, վոր Շիրակացու և «Աշխարհացոյց»-ի հեղինակի միջև աշխարհագրական անունների և հակացողությունների վճռ մի հակասություն չկա: Ընդհակառակը, հնագույն ձեռագրերի հիման վրա ուղղելով Շիրակացու հրատարակված աշխատությունները և համեմատելով նրանք «Աշխարհացոյց»-ի տեքստի հետ, մենք բազմաթիվ նմանություններ ենք տեսնում հենց այդ նույն հակասող համարված հատվածներում: Յերկու տեքստում ել մեր առջև կանգնում են հայ խոշոր մաթեմատիկոս և աշխարհագրագետ Շիրակացին՝ իր հին հունական գիտության մեծ պատրաստությամբ:

ՓԱՍՏԵՐ ԽՈՐԵՆԱՑՈՒՅ ՇԻՐԱԿԱՑՈՒՅ ԱՌԱՋ ԱՊՐԱԾ ՀԵՂԻՆԱԿ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Աշխարհացոյց»-ի ժամանակի վորոշման հարցում վճռական նշանակություն ունի իրեն, Խորենացու ժամանակի վորոշման հարցը: Յեթե պարզիվ, վոր Խորենացին ավելի վաղ ապրած ժամանագիր ե, քան Անանիա Շիրակացին, պարզ ե, վոր «Աշխարհացոյց»-ը 9—10-րդ դար բերող բանասերների կովանները 99 % -ով կիսախտվեն: Այստեղ մեր նպատակից գուրս ե Խորենացու ժամանակի հարցը մամնագիտական հատուկ ուսումնասիրության յենթարկելը, նման հարցով զբաղվելու համար անհրաժեշտ երազմակողմանի ուսումնասիրել հենց իրեն, Խորենացու Պատմության ոգտագործած աղբյուրները, բայց այնքան, վորքան այդ հարցը սերտ կերպով կապվում ե «Աշխարհացոյց»-ի հարցի հետ, ուստի և անհրաժեշտ ենք համարում միջանկյալ ձևով կանգառնել նրա վրա:

Խորենացու հարցով զբաղվող բանասերներից շատերի ուշագրությունից, մեր կարծիքով, վրիակել և մատենագրական մի

կարեոր հիշատակություն, վորը մեծ կարևորություն ունի Խորենացու ժամանակի վորոշման հարցում, — դա 7-րդ դարում հայերեն գրված անանուն հեղինակի ժամանակագրությունն է: Այդ ժամանակագրությունը, ըստ Տաշյանի¹ և մի շաբք այլ աղբյուրագետների, պատկանում է Անանիա Շիրակացուն: Ժամանակագրության հեղինակի վերաբերյալ նույն կարծիքն ե հայոննելնաև նրա հրատարակիչ Բ. Սարգսյանը²:

Սարգսյանի և մյուսների հայտնած այդ կարծիքը լիովին հաստատվում է ՀԽՍՀ մատենագրարանի թիվ 102 (ներկայումս մատենագրարանի 2679 համարի) թղթի նշանավոր ձեռագրում՝ յեղած նույն բովանդակություն ունեցող ժամանակագրությամբ: Այդ ձեռագրի մասին, Շիրակացու այլ աշխատությունների կապակցությամբ, խոսել ե արդեն Գալուստ Տեր-Մկրտչյանը (տես «Արարատ»-ի 1896 թվի փետրվարի №, եջ 96), սակայն անհասկանակի պատճառով լուսությամբ ե անցել ժամանակագրության վրայով, փոք հաստատում ե նրա՝ Շիրակացուն պատկանելու վերաբերյալ արտահայտված կարծիքները:

ՀԽՍՀ մատենագրարանի ժամանակագրություն պարունակող այս ձեռագիրը մեր ամենաարժեքավոր հնություններից մեկն ե — մեզ հասած ամենահին թղթի վրա գրված հայերեն ձեռագիրը՝ Նա ընդորինակված ե 971 թվին և պարունակում ե պատմագիտական արժեքավոր նյութեր, վորոնց մեծ մասը գեռ ուսումնասիրված ու հրատարակված չեն: Զերագրում ժամանակագրությունը սկսվում է Ծթ (59) հոդվածից, իսկ նրան նախորդող բոլոր նյութերը Շիրակացու գործերն են: Այսպես՝ թերթ 5 թ-ից սկսվում է «Անանիայի համարողի վասն ընթացից արեգական»-ը³, թերթ 9 աշ-ից (Ծթ՝ հոդված) «Անանիայի Շիրակացոյ համարողի, Յաղագս ամպոց և նշանացն» ե (սրանք հրատարակված են Գալուստ Տեր-Մկրտչյանի կողմից «Արարատ» ամսագրում 1896 թ.):

¹ Յ. Վ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1895, եջ 1057:

² «Եկաննուն ժամանակագրութիւն... 7-րդ դարու» (տես Հ. Բ. Սարգսյանի ներածությունը):

³ Շիրակացու այս աշխատության հրատարակության մասին տես Անանիայի Շիրակունուոյ Մանացորդք Բանից, ՍՊԲ, 1877 (հրատարակ. պրոֆ. Ք. Պատկանյանի), եջ 4—26:

թերթ 13 բ.-ից—Անանիայի Շիրակացու «Յարութեան» և «Զատկի» ձառներն են և վերջապես, մի փոքրիկ հատված «Նորին Անանիայի» վերնագրով:

Ժամանակադրությունը վերջանում է 685 թվականի մի դեպքի հիշատակությամբ. «Յուստիանոս, որդի երրորդ Կոստանդինի՝ ամս երկուս: Ի սորա առաջին ամին տիրեցին հիւսիւսային ազգն, որ ասին հազիրք՝ հայոց, վրաց և աղուանից և սպանին ի պատերազմի զիշխանս հայոց, վրաց և աղուանից, յամսեանն սահմի, որ աւր տասն էր ամսոյն, ի ձևի թուականին հայոց»:

Ժամանակադրության այս վերջաբանից յերկում և, վոր նա իրոք գրվել է 685 թվին, Կոստանդինի վորդի Հուստինիանոսի յերկրորդ տարին, յերբ դեպի Անդրկովկաս ելին արշավում խաղաղները: Ճիշտ նույն ժամանակով ել վերջանում է Պարսկաստանի թագավորների ժամանակադրությունը: Ժամանակադրության մեջ չկա պատմական վոչ մի փաստ, վոր հիմք տար նրա գրելու ժամանակը 7-րդ դարի յերկրորդ կեսից ուշ շրջան բերելու: Այս բոլորը, կարծում ենք, վոչ մի կասկած չեն թողնում ժամանակադրության իրոք վոր 7-րդ դարի յերկրորդ կիսում գրված աշխատություն լինելու մասին: Այսքան, վորքան ժամանակադրությունը համբնկնում և մոտավորապես Անանիա Շիրակացու ժամանակին, ընդորինակված է 971 թ. գրչություն ունեցող ձեռագրում և տեղավորված է Շիրակացու գործերի շարքում, ժամանակադրության մեջ ոգտագործված են այն աղբյուրները, վորոնք ոգտագործել և Շիրակացին իր մյուս աշխատություններում ևս, այդ բոլորը վոչ մի կասկած չեն թողնում ժամանակադրության իրոք վոր Շիրակացու գործ լինելու վերաբերյալ, ինչպես շատ ճիշտ յենթադրել և Հ. Բ. Մարգարինը իր «Մովսէս Խորենացւոյ պատմագրության ընթացքը և անոր հնութեան նոր ապացոյցները» աշխատության մեջ (տես «Բագմակէպ» ամսագիր, 1903 թ., 11, էջ 509—517 և թիվ 12, էջ 541—547):

Հիմն մատենագրաբանի վորոշ ձեռագրերում մենք հանդիպում ենք դեպքերի, յերբ այս ժամանակադրությունը պարզապես հիշատակված է Շիրակացու անունով: Այսպես՝ թիվ 2271 (2287) ձեռագրում, վորն ընդորինակված է Զուղայում, 1724 թվին, տեղավորված է հայ մատենագրերի մի ցուցակ «Պատմագիրք հայոց» վերնագրով: Այս ցուցակի 12-րդ համարի տակ

կարողում ենք. «Անանիայ Շիրակցին—սկիզբն առեալ յԱդամայ, համառօտ գաւաղանաւ իջանէ մինչև ի ժամանակս Անաստասայ» (թերթ 410ա): Ցուցակի հեղինակն, անկասկած, ի նկատի յեռնեցյալ Շիրակցու ներկա ժամանակագրությունը:

Դ-ըդ գարի յերկրորդ կիսում գրած ահա այս ժամանակա-
վրության վերնադրում, շատ պարզ, սպիտակի վրա սև տառերով

Հայութեան բարեպահութեան առաջարկութեան

Henry J. Whipple

It was a very fine day, and the sun shone brightly. The birds were singing, and the flowers were swaying in the gentle breeze. The children were playing happily in the park, and the parents were watching over them with love and care.

^թղթիւ կրա զրված ամենահիւն ձեռագիրը (971 թ. Ընդորինակություն),
ուր Անանիս Շիրակացու ժամանակադրության մեջ հիշված և
«Մոլուս» Խորենացաւոյ անունը:

զրված և ընդգծված եւ «Մովսէսի Խորենացւոյ և Անդրէասի» բառերը: Յեթէ վենետիկցիների հրատարակած ժամանակագրության մեջ Խորենացու անվան հիշատակումը կարող եր փրոշ չսփոլ կասկածանքների տեղիք տալ ապա մեր մատենագրանի 971 թվի Ընդորինակություն ունեցող այս ձեռագրի պարունակած ժամանակագրության մեջ, Խորենացու անվան հիշատակումը ցրում ե բոլոր նման կասկածները: Դորդ գարի յերկրորդ կիսում՝ կազմող ժամանակագրության հեղինակը, պարզ ե, ոգովիկ և Խորենացու աշխատությունից և հիշում ե այդ մասին իր աշխատության մեջ: Վորպեսզի ժամանակագրության հեղինակ Անտանիա Շիրակացու Խորենացուց ոգովիլու այդ փաստն ընթերցողի համար ավելի քան պարզ լինի, անհրաժեշտ ենք համարում այդ ժամանակագրությունից ըստել Խորենացու «Պատմութիւն»-ից ոգոված մի հատվածը՝ համեմատելով այն Խորենացու «Պատմութիւն հայոց»-ի համապատասխան հատվածի հետ:

«Անանուն ժամանակագ. VII դ.»

Խորենացի

Մովսէսի Խորենացւոյ եւ Անդրէասի, — Աղամ նախաստեղծ. սա կեցեալ ամս երկերիւր եւ երեսուն, ծնանի զԵթի: Եւ կեցեալ ամս երկերիւր եւ հինգ, ծնանի զԵնով: Սորա երկուքն յարձանագրութենացն ընդդէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովհէպս. թէպէտ և ուրն անյայս ենովս, որ առաջին յուսացաւ կոչել զԱսուածառականաց հանդերձելոցն, որպէս առէ Յովհէպէու այս եւըն անյայս է: Ենովս, որ առաջին յուսացաւ կոչել զԱսուածառականաց հանդերձելոցն, որպէս կոչելն ի նմանէ, քանզի Աղամ ճշմարտութեամբ աստուածաստեղծն, եւ սա ի բերանոյ աստուածոյ առեալ ասի պատուէր այլ եւ յանցուցեալ եւ ի թագստեան եղեալ զոր ենն յԱստուածոյ եւ ոչ յայդ ումեքէ հարցանի. սապես եւ վճիռ վարկին ի

Աղամ նախաստեղծն՝ սա կեցեալ ամս երկերիւր և երեսուն, ծնանի զՍէթ. Սէթ կեցեալ ամս երկերիւր և հինգ, ծնանի զԵնով: Սորա երկուքն յարձանագրութենացն ընդդէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովհէպս. թէպէտ և ուրն անյայս ենովս, որ առաջին յուսացաւ կոչել զԱսուածառած:

Եւ ընդէ՞ր արդեւք այս, և կամ վասն որո՞յ պատճառանաց նախնիս ասացեալ կոչելոյն զԱստուած, և կամ որպէ՞ս կոչելն իմանի: Քանզի է Աղամ ճշմարտապէս աստուածաստեղծ. և սա ի բերանոյ Աստուածոյ առեալ ասի պատուէր, այլ և յանցուցեալ և թագստեան եղեալ զՈւր եսն յԱստուածոյ և ոչ յայլ մէ ումեքէ հարցանի. սապէս և զիմիռ վարկին ի նորին բերանոյ լոէ: Խոկ յետոյ և Աբէլ մերձաւոր և ծանօթ Աստուածոյ լեալ, պատարագ մատու-

Նմին բերանոյ լսէ, իսկ յետոյ Արեղ
մերձաւը եւ ծանօթ Աստուծոյ լեալ
պատրազ մատուցանէ և ընկալեալ
լինի: Արդ՝ սոցա այսպէս ընդելու-
թեան եւ ծանօթութեան Աստուծոյ
լինել, Ե՞ր աղաքո առաջին սա ասի
կոչել զԱստուծ եւ այս յուսով,
այդ զայդոն վասն սորա ի տեսու-
թեանց՝ ի հրաւիրեալքն մեր յուղար-
կեսցուք տեղի, իսկ որ առ ձեռն
պատրաստն է ասասցուց: Քանդի ի
պատուիրանզանցութեան գտեալ ա-
ռաջինն ի մարդկանէ՝ ի զրախաէն եւ
յԱստուծոյ՝ չարութեան աղաքու,
որպէս առացեալ է, գտանի արտա-
սահմանեալ Զկնի եւ ընդանեղոյնն
ամենայն որդուցն Աղամայ՝ ի հարա-
զատէն իւրմէ սպանանի յեղաւրէ:
Յետ որոյ՝ ոչ բանիւ ինչ Աստուծայոյ
եւ ոչ յաժմանութեան ինչ իւրիք եղե-
լոյ ի տարակուսանն եւ յանյուսու-
թեան ազգ մարդկան համարեալ լի-
նի. այդ եւ ինքնահաճոյ արդարեւ
գործո, յորոց միջի սա քաջայոյս
եղեալ ուղղութեամբ հանդերձ, կոչէ
զաստուած, իսկ կոչելու կրկնակի
իմանի. կամ անուանելու պայէս մոռաց-
եալ, կամ յաւդնականութիւն կար-
գալ Արդ՝ անուանելու պայէս մոռաց-
եալ՝ ոչ է ի դէպ, զի ոչ բազմութիւն
ամաց ընդ մէջ, որ ի մոռացումն
նոյսա զաստուածդ ածէր անունն
եւ կամ զնոյն ինքնն, որոյ անունն,
եւ ոչ դարձեալ մահու եւ թաղման
զետ ևս յԱստուծոյ ստեղծեալն հա-
սեալ է: Ազա ուրեմն յաւդնականու-
թիւն կոչէ սա զԱստուած Սա կեց-
եալ ամս ձ՞ո՞ ծնանի զԿայիանն: Եւ
եկեաց ամս Ձմե՞ մինչեւ ի ԺԴ ամս
Մաթուուայի: Կայիանն, կեցեալ
ամնդ ձ՞ո՞ ծնանի Մաղաղաէլ եւ
եկեաց ամս Ձմ մինչեւ ՁԱ. ամս
Ղամեքայ:

ցանէ, և ընկալեալ լինի Արդ, սոցա
այսպէս ընդունելութիւն և ի ծանօ-
թութիւն Աստուծոյ լինել Ե՞ր աղա-
գու սա առաջին ասի կոչել զԱս-
տուծ և այս՝ յուսով: Արդ զայլն
վասն սորա ի տեսութեանց և հրաւ-
իրեալն մեր յուղարկեացուք տեղի.
իսկ որ ի ձեռն պատրաստն է՝ ասաս-
ցուք:

Քանդի ի պատուիրանապանցու-
թեան գտեալ առաջինն ի մարդկանէ,
ի զրախտէն և յԱստուծոյ, չարու-
թեան աղագու, որպէս սասցեալ է,
գտան արտասահմանեալ Զկնի և
ընտանեցոյնն Աստուծոյ յորդուցն
Աղամայ՝ ի հարազատէն իւրմէ: սպա-
նանի յեղօրէ: Յետ որոյ ոչ բանի
ինչ աստուծայոյ և ոչ յայտնու-
թեան ինչ իւրիք եղելոյ, 'ի տարա-
կուսանն և յանյուսութիւն աղդ
մարդկան հասեալ լինի, այլ և ինք-
նահմանոյ արդարեկ գործն. յորոց միջի
սա քաջայոյս եղեալ ուղղութեամբ
հանդերձ, կոչէ զԱստուած: Իսկ կո-
չելու կրկնակի իմանի. կամ անուա-
նել որպէս զմոռացեալ, կամ յօդնա-
կանութիւն կարգաբ: Արդ անուա-
նելն իւրեւ զմոռացեալ՝ ոչ է ի դէպ,
զի ոչ բազմութիւն ամաց ընդ մէջ մէջ
անցեալ, որ ի մոռացումն նոյսա
զԱստուածդ ածէր անունն, և կամ
զնոյն ինքն՝ որոյ անունն, և ոչ
դարձեալ մահու. և թաղման զետ ևս
ստեղծեալն յԱստուծոյ հասեալ Ապա
ուրեմն յօդնականութիւն կոչէ սա
զԱստուած:

Սա կեցեալ ամս հարեւը և իննասուն,
ծնանի զԿայիանն. Կայնց կեցեալ
ամս հարեւը և եւթանսուն, ծնանի
զՄաղաղիէլ Մաղաղիէլ կեցեալ ամս
հարեւը վաթսուն և հինգ, ծնանի
զՅարեղ, Յարեղ կեցեալ ամս հարեւը
վաթսուն և երկու, ծնանի զՅնովք:

Մաղաղակը կեցեալ ամս ձկե, ծնաւ-
աի զՅարեթ, եւ եկեաց ամս ՁԼ մին-
չեւ և՛ ամս նոյի:
Յարեթ կեցեալ ամս ձկե, ծնանի
գԵնովք: եւ եկեաց ամս Պ մինչեւ
ՄԶ ամս նոյի: (Ձեռ. № 2679)

Ենովք կեցեալ ամս հարեւը զաթ-
ուուն և հինգ, ծնանի զՄաթուսաղաւ
(Վենետ. հրատ., Էջ 9—10)

Համեմատությունից պարզ յերեւում ե, վոր ժամանակադրու-
թյան վերնագրում հիշատակված Մովսես Խորենացու անունը
պատահական չե, այլ վոր Շիրակացին իրոք ոգտվել ե Մովսես
Խորենացու «Հայոց պատմութիւն»-ից:


Յեթե 7-րդ դարի կեսում ապրած հեղինակը, կարեոր չե ան-
գամ, թե քա Սնանիա Շիրակացին ե թե ուրիշ մեկը, ոգտվում ե
Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց»-ից, այդ նշանակում
ե, վոր 7-րդ դարի յերկրորդ կիսում Խորենացու պատմությունն
արդեն գրված, պատրաստ մի աշխատություն եր: Կնշանակի՝
Մովսես Խորենացին 7-րդ դարի յերկրորդ կիսից ավելի վաղ
ապրած հեղինակ ե:

Ժամանակադրության մեջ Մովսես Խորենացու հիշատակվե-
լու և ոգտագործելու այս փաստը ամբողջապես խախտում է Մով-
սես Խորենացուն 8—9-րդ դար հասցնող բանասերների բոլոր
կովանները: Նա խախտում ե նաև Խորենացուն 7-րդ դարի յերկ-
րորդ կիսում ապրող հեղինակ համարող բանասերների յենթա-
գրությունը, վորովհետեւ դժվար ե կարծել թե Խորենացու «Պատ-
մութիւն»-ը գրելուց անմիջապես հետ հնարավոր դարձավ նրա-
նից ոգտվիլ: Մնում ե, վոր մենք Մովսես Խորենացուն 7-րդ
դարի կեսից ավելի վաղ փնտունք:

Խորենացու 7-րդ դարի յերկրորդ կիսից առաջ ապրելու այս
փաստը, մյուս կողմից, կարծում ենք, լուծում ե նաև «Աշխար-
հացոյց»-ի շուրջը յեղած վեճը: Նա հերքում ե այն բանասերների
տեսակետը, վորոնք «Աշխարհացոյց»-ը Խորենացու հետ ելին կա-
պում, պատճառաբանելով Խորենացու ուշ դարերի հեղինակ հան-
գիսանալու փաստը:

Շիրակացու՝ Խորենացու աշխատության հետ ծանոթ լինելու
և նա ոգտագործելու վերաբերյալ մենք ունենք ունենք, սակայն, մի այլ
կարեոր տեղեկություն—Շիրակացու չհրատարակված մի աշխա-
տության մեջ Հայկի մասին արված մի հիշատակություն, վորը

մեր կարծիքով, վերցված և Խորենացուց: Շիրակացու այդ աշխատությունը ինչպես ասել ենք, գտնվում է ՀԽՍՀ մատ. թիվ 2762 և 2180 ձեռագրում: Նա Շիրակացու «Յաղագս երկրի» աշխատության գլուխներից մեկն է: Պարզվում է, վոր Շիրակացու «Յաղագս երկրի» աշխատությունը սկզբում ունեցել է առաջարան «Առ խոստացեալմա» վերնագրով: Այդ նույն աշխատությունը «Յաղագս կենդանատեսակաց» գլխով չեւ վերջացել ինչպես Պատ-



Շիրակացու տիեզերագիտության ընդարձակ առաջին եջը

կանյանի տպագրված տեքստումն ե, այլ շարունակվել է յոթանասուն և չորս այլ գլուխներով, վորոնք ունեն տոմարագիտական բովանդակություն: — Ահա այդ գլուխներից մեկում — ԽԴ. (43), վորի վերնագիրն ե «Զինչ է ամիսն», Շիրակացու կողմից հիշատակվում ե Հայիի առասպելը: Ի նկատի ունենալով այն հանդամանքը, վոր Շիրակացու աշխատության այդ մասը զեռ վոչ վորի կողմից չի հրատարակված, ուստի և անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ այդ գլուխն ամբողջությամբ:

«ԶԻՆՉ Է ԱՄԻՍՆ»

Տեսանելով առաջնոցն զրուխնն լցեալ և մաշեալ, իմացան զանցաւորութիւն կենաց իւրեանց, ասացին թէ ի մեզ պատկեր: Եւ գարձեալ զի՞նչ են ամիսք, և կամ ով եղ զանուանս նոցա: Անուանք ամսոցն ոչ էին յիսկզբանէ, այլ՝ սկսեալ յԱդամայ մինչև ի Մովսէս՝ զգարնանամուտն տարեմուտ անուանէին ամենայն ազգք, և ամսոց անուանք ոչ գոյր, բայց միայն զառաջինն լուսին զգարնանն առաջին լուսին անուանէին. և զինի՝ Բարդ լուսին և Գ-րդ և Դ-րդ մինչև ցՔժ-ըրոդ և զողջուն ամեն այսպիսի անուանք վարէին մինչև ի մուտն գարնանային և դարձեալ յառաջինն դառնային: Իսկ անուանք ամսոց երբացըցն ի Մովսիսէ անուանեցան, որ և կարգեաց զլրումն զատկաց նոցա, որ աւր էր ելից նոցա յԵղիպտոսէ, և զամենայն տաւնս նոցա նա կարգեաց: Իսկ վասն այլոց ազգացդ ամսոց յայտնի ուրեք ոչ գտաք՝ թէ յաւմէ աւրինազրեցան՝ յիմաստասիրաց թէ ի թագաւորաց, զի բազում ամիսք այն են՝ զոր թագաւորք յիւրեանց անունն անուանեցին: Առաջին կայսրն Հռոմայ, Գայիոս, որ կոչեցաւ Յուլիոս, սա ի թագաւորին իւրում, զինտիլոս ամսոյ, յուլիս անուանեաց ի վերայ անուան իւրոյ և վասն ծննդեան իւրոյ ի նոյն ամիսն: Նոյնպէս և Օգոստոս Բ-որդ կայսրն զնեկիտոս ամիս՝ յաւգոստոս անուանեաց իւր անունն եղաւսն ծննդեան իւրոյ ի նոյն ամիսն. նոյնպէս և այլ ամիսքդ անուանեցան յումէ և իցէ, զոր աւելորդ համարիմ կարգաւ ասել Բայց զամիսքդ հայոց ասացից՝ զի հայ ամսոցդ անուանք յառաջ քան զդնել թուականին հայոց էին: Եւ ոչ քան զայն միայն, այլ և յառաջ քան զմարդեզութիւն բանին աստուծոյ անուանեալ էին ամիսքդ այդոքիկ. և այս է պատճառն:

Զի Հայկ ոմն անուն աղեղնաւոր եսկայ, յազգէ Յաքէթի, որդոյ նոյի, եկեալ ի Բաքէլոնէ՛ եկեալ տերեաց հայոց և բնակեալ ի հայս. և յանուն նորա կոչեցան Հայք, նոյնպէս որդոց և դստերաց իւրոց եղ անուանս. զոր առեալ հայոց զանուանս ուստերաց և դստերաց նորա եղին ի վերայ ամսոց՝ վասն մեծարանաց հարբն և զաւակացն (ընդգծումն իմն ե. — Ա. Ա.) և են այսոքիկ՝ Նաւասարդի, Հոսի, Սահմի և Մահեկի. Սըհետ և Մարերի դստերք էին Հայկին... իսկ մարդաց և հարաւանց, զոր այժմ աճկի կոչեն՝ այս ի գործոց անուանեցան՝ զի ընդ այն ժամանակս ամառնայինք էին սոքա»: (ՀԽՍՀ մատենադար. ձեռ., թիվ 2180, թիրթ 523ա-ը):

Շիրակացու այս աշխատությունը, վորի վերնագրում պարզ հիշատակված ե «Անանիայի Շիրակունուոյ համարող»-ի աշխատություն լինելը, վոչ մի կասկած չի թողնում այլևս, վոր Շիրակացու ժամանակ Մովսես Խորենացու աշխատությունն արդեն գրված պատրաստ մի աշխատություն եր, Շիրակացին ծանոթ և յեղել Խորենացուն և ոգտվել և նրանից:

Հին հայկական մատենագրության մեջ Հայկի առասպելի հիշատակության յերրորդ փաստն և այս (Խորենացի, Սեբես և աա), չհաշված Աստվածաշնչում և Թեյոնի մոտ յեղած հիշատակությունները, վորոնք թարգմանություններ են: Ուշ շրջանի մյուս բոլոր հեղինակներն ոգտվում ե կրկնում են իրենց աշխատություններում այս հիշատակությունները: Ի միջի այլոց, Շիրակացու աշխատությունից բերված այս գլխից մեծ չափով ոգտվել ե Վանականը:

Շիրակացին՝ Հայկի առասպելը, անկասկած, ոգտվել և Խորենացուց: Շիրակացու բերած այս առասպելի կառուցվածքն ու շաբագրությունը վոչ մի կասկած չեն առաջացնում, վոր նա վոչ թե բանակոր տեղեկությունների հիման վրա յե զրել այդ, այլ ոգտվել և Խորենացուց: Շիրակացու՝ Սեբեսոսից (ժամանակակից հեղինակից) ոգտվելու վերաբերյալ իհարկե, խոսք լինել չի կարող: Նշանակոր հայագետ գիտնական Ստ. Մալխասյանն իր կազմած Սեբեսոսի պատմության համեմատական տեքստի առաջարանում անհերքելի փաստերով ապացուցել ե, վոր Սեբեսոսն ևս ոգտվել և Խորենացուց¹: Խորագույն ուսումնասիրությունների ար-

¹ Տես «Սեբեսոսի եպիսկոպոսի պատմութիւն», չորրորդ տպագրութ., հրատ. Արմֆանի, 1939 թ., Ստ. Մալխասյանի առաջարանը:

Loring H. Jr.

Շիրակացու աշխատության այն եջը, ուր բերված ե Հայկի տռասպելը:

դյունքները, այսպիսով, գալիս են լիովին ապացուցելու Խորենացու՝ հին հեղինակ լինելու փաստը: Խորենացու ժամանակի վերջնական վորոշման համար այժմ մնում է քննության առնել Խորենացու «Պատմութիւն հայոց»-ում Հայաստանի չըրս մասի բաժանված հիշատակվելու, հովհաննես Մաղաղասից ու Սեղրես արոսի վարքից ոգտվելու փաստերը և վերջնականապես լուծել այդ հեղինակի ժամանակը: Շիրակացին իր՝ Խորենացուց ոգտվելու փաստերով սահմանագծում և Խորենացու ժամանակի վերջին սահմանը: Այժմ մնում է Խորենացուն փնտուել այդ ժամանակից առաջ յեղած տարածության մեջ:

Մեր վերև բերված փաստերը հնարավորություն են տալիս բացատրելու «Աշխարհացոյց»-ի և Խորենացու պատմության մեջ նկատվող այն նմանությունները, վորոնք մատնացույց են արված Խալաթյանցի, Մարկվարտի և ակադ. Հ. Մանանդյանի աշխատություններում: Նմանությունները պարզ ցույց են տալիս, վորոնք թե Խորենացին և ոգտվել «Աշխարհացոյց»-ից, այլ «Աշխարհացոյց»-ի հեղինակ Անանիա Շիրակացին և ոգտվել Խորենացու պատմությունից: Նկատվող կարեռ նմանությունները մենք չենք ուզում բերել այստեղ, հետաքրքրվողն այդ կտտնի ակադ. Հ. Մանանդյանի «Խորենացու տոեղծվածի լուծումը» աշխատության մեջ, սակայն Շիրակացու Խորենացու «Պատմութիւն»-ից ոգտվելու փաստը ցույց տալու համար մենք անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ յերկու համեմատություն միայն:

«Բայց զնախասացեալ կինս Անոյշ
բնակեցուցանե՝ [Տիգրան] որդուոք
իւրագի յանդորրութեան սպառուածի
փրածին մեծի լերին: (Զորմէ լեալ
առեն յահազին իմն շարժմանէ: զոր
պատմեն՝ որք բազմաշրջութեամբ
հրամաւ Պաղոմեա ար ասպարի-
սօք զընակութիւնս մարդ-
կան չափեցին...»:

(Խոր., I, 30, եջ 83)

«Որպէս Պաղոմէս Կղաւ-
դէսս չափեալ ասպարի զօք
գամենայն բնակութիւն
մարդկան...»:

(«Աշխարհացոյց»-ի Վահեան, հրատ.,
հջ 587)

«Եքանչելի է և աշխարհն [ձենաց]
առատութեամբ ամենայն պաղաց, և

«...և լինի անդ (ձենաց աշխար-
համբ) դարբնենիկ և կասիմոն, ի-

գեղեցիկ բուսովք զարդարեալ,
քը քմաւէ տ և սիրամաքաւա-
շատ և բազմամետաքս, ան-
բաւթիւն յամուրաց և հրէ շից,
և որ էշայծեմունսդ անուանեն. ուր
հասարակաց կերակուր ասեն զառ
մեղ պատուական և սակաւուց ճա-
շակելիս՝ զփասեան և զպոր, և այլք
այսպիսիք»:

(Խորենացի, II, 81, եջ 223)

Կասիա լեռնէ, և սկիւթիկոն՝ որ է
ատրագոյն ինքնեղ. և ունի հրէ շու և
մուշկ, և շիրամաքաւ շատ, և
այլ հաւապիտանիս, և քը քումս
անբաւու. մինչ զի հեծեալ ոք ի
սպիտակ զերդակ ձիով. լինի ապ-
րէ շում շատ և ազնիւ քան զա-
մենայն երկիր»:

(«Աշխարհացոյց»-ի Սուքը. հրատ.,
եջ 46)

ԽՈՐԵՆԱՅԻ ՅԵՎ ԶԱՔ ԶԱՔԱՐԻՄ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԺԱՄԱՆԱԿԱՒՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ ԶԼԻՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Խորենացու ժամանակը վորոշելու հարցում ակադ. Հ. Մա-
նանդյանի կարեւոր կովաններից մեկը, ինչպես հայտնի յի, Յե-
րուսաղեմի թիվ 413 ձեռագրում պահված «Զաքարիա կաթողիկոսի
և Մովսէսի ի փոխութն Աստուածամաւրն և պատկերի նորին»
ձառն և հանդիսանում: Այդ ձառը հիմք և տիել նրան յենթադրելու,
վոր Խորենացին և Զաքարիա կաթողիկոսը ժամանակակից հեղի-
նակներ են, վորովհետև նրանք, ակադ. Հ. Մանանդյանի կարծի-
քով, միասին են գրել այդ ձառը ու նրանց անունները միասին
են հիշատակված տվյալ ձառի վերնագրում, իսկ վորովհետև մեղ
ճշտությամբ հայտնի յի Զաքարիա կաթողիկոսի ժամանակը
(=855—876 թ. թ.), ուրեմն, յենթադրել և նա, այդ նույն ժա-
մանակի մարդ պիտի լինի նաև Խորենացին¹:

Զաքարիա կաթողիկոսին և Խորենացուն վերագրվող այդ ձա-
ռի հիման վրա ակադ. Հ. Մանանդյանը կունել և նաև, վոր այդ
ձառում աստվածածնի պատկերի մասին յեղած տեղեկություն-
ները հավանական և քաղված լինեն Մովսէս Խորենացուն վե-
րագրված «Պատասխանի թղթոյն Սահակայ» աշխատությունից,
վորը Վենետիկի միարանության կողմից հրատարակված և Խորե-
նացու «Մատենագրութիւնք»-ի մեջ: «Միանգամայն սակայն հա-
վանական և,—ասում և ակադ. Հ. Մանանդյանը,—վոր այդ թըդ-

1 Տիել «Խորենացու առեղծվածի լուծումը», եջ 157, նաև նույն աշ-
խատության վերջում տեղակորված ոռուերեն և գերմաներեն լեզուներով
գրված թեղերը:

թում մեջ բերված Աստվածածնի պատկերի մասին տեղեկությունները քաղլած են, իրոք, «Մովսես քերթող»-ի, այսինքն՝ Խորենացու համապատասխան գրվածքից, վորը նա զբել եր Զաքարիա կաքողիկոսի հետ միասին (ընդգծումն իմն ե. — Ա. Ա.) և վորը հիշատակված է Յերուսաղեմի թիվ 413 ձեռագրում¹:

Ակադ. Հ. Մանանդյանը Յերուսաղեմի այդ ձեռագիրն ինքն անձամբ չի տեսել: Նա այդ աշխատության վերնազրի հետ ծանոթացել ե միայն Գ. Զարբանալյանի «Հայկական հին դպրութեան պատմութիւն» աշխատության մեջ՝ Զաքարիայի և Խորենացու գրական ժառանգության առթիվ բերված փոքրիկ հիշատակությունից, ուստի և նա իր գրած հարցերի վերջնական լուծումը թողել ե կատարել հետագայում, յերբ կուսումնասիրվի Յերուսաղեմի մատենագրարանի ձեռագիրը: Նա ասում է. «Այս ինդիրը վերջնականագեն պարզելու համար անհրաժեշտ ե, իհարկե, համեմատել «Պատասխանի թղթոյն Սահակայ» գրվածքը «Ի վոխումն Աստուածամաւրն և պատկերի նորին» վերոհիշյալ յերկի հետ, վորը գտնվում է Յերուսաղեմի մատենագրարանում»²:

Խորենացուն և Զաքարիա կաթողիկոսին վերագրվող այս ճառի հնագույն մի ընդորինակություն, բացի Յերուսաղեմի մատենագրարանից, բարեբախտաբար, պահպել ե նաև մեր մատենագրարանում: Նա այժմ մեր ձեռքի տակ ե և հնարավոր ե կատարել այդ համեմատությունը:

Խորենացու և Զաքարիա կաթողիկոսի այդ ճառը պարունակող ՀԽՍՀ մատենագրարանի ձեռագիրն ունի XIII դարի գրչություն: Նրա գրիչն ու գրչության վայրը անհայտ են: Այդ տեքստն ունի հետևյալ վերնագիրը. «Զաքարիա(j)ի հա(j)ոց կաթողիկոսի և Մովսիսի Քերթողի ասացեալ ի վոխումն Աստուածամաւրն և պատկերի նորայ»: Զեռագրի նյութը թուղթ ե: Գրված ե միայուն, գեղեցիկ բոլոր գրով: Զեռագիրը կրում է ՀԽՍՀ մատենագրարանի 2042 (2054) համարը:

Զաքարիա կաթողիկոսին և Խորենացուն վերագրվող այդ տեքստի ուսումնասիրությունից պարզվում է, վոր Խորենացին և Զաքարիան վնչ թե իրար ժամանակակից հեղինակներ են հան-

¹ Հ. Մանանդյան, «Խորենացու առեղծվածի լուծումը», էջ 157:

² Եռւյն տեղում:

դիսացել և իրար հետ միասին կազմել են այդ տեքստը, այլ մէ յերբորդ անձնավորություն կատարել և կոմպիլիացիա—վերցրել և Խորենացու և Զաքարիայի առանձին աշխատություններից իր ցանկացած հատվածները, միացրել և և վերնագրում դրել Խորենացու և Զաքարիա կաթողիկոսի անունները (այսինքն այն հեղինակների անունները, փորոնցից նա ոգավել և իր այդ տեքստը կազմելու ժամանակ): Անհրաժեշտ են նշել, վոր կոմպիլիացիա կատարող այդ յերրորդ անձնավորությունը նպատակ չի ունեցել ձուլել Խորենացու և Զաքարիայի տեքստերը, խմբագրական մեծ փոփոխության չի յենթարկել, անգամ տեքստի լուսանցքներում մի քանի տեղ անհրաժեշտ ե համարել հիշեցնել, վոր տեքստի այս հատվածը Խորենացուն ե, այս հատվածը—Զաքարիային: Խորենացուց վերցրած հատվածների դիմաց նա կրճատ նշանակել և «Մու», «Մու» և «Մովս», խոկ Զաքարիայինը—«Զ.ք» կամ «Զաք»: Ի միջի այլոց, կոմպիլիացիայի այս տեսակն ինչ-վոր մի բացառիկ յերևույթ չե մեր մատենագրության մեջ: Այս նույն ձևով կատարվել և կոմպիլիացիա նաև մի շարք այլ տեքստերում: Այսպիս՝ ձեռագրերում մեզ հաճախ հանդիպում են քերականությունների այնպիսի տեքստեր, վորոնք կազմված են տարբեր ժամանակներից ապրող հեղինակների աշխատություններից վերցրած հատվածներից (Դավթի, Մամբրեյի, Ստեփանոսի, Մովսեսի և ուրիշների), վորոնց անունները, ճիշտ վերև հիշված տեքստի նման, հիշատակվում են լուսանցքներում:

Մովսեսին և Զաքարիային վերագրվող այս տեքստի վճռ մի հատվածից, ուղղակի կամ անուղղակի ձևով, չի յերևում, վոր Զաքարիան և Մովսես Խորենացին ժամանակակից մարդիկ են: Զեռագրից չի յերևում նաև, վոր կոմպիլիացիա կատարող հեղինակը, վորը ժամանակագրական տիսակետից Խորենացուն և Զաքարիային համեմատարար ավելի մոտիկ կանգնած անձնավորություն ե, նրանց վրա նայի վորպես ժամանակակից հեղինակների: Այսպիսով, ակադ. Հ. Մանանդյանի այն յենթագրությունը, վոր Յերուսաղեմի թիվ 413 ձեռագրում յեղած «Զաքարիայի կաթողիկոսի և Մովսէսի ի փոխումն Աստուածամաւրն և պատկերի նորին» ճառը գրել են Զաքարիա կաթողիկոսը և Խորենացին վորպես ժամանակակից հեղինակներ, մատենագրանի նույն տեքստի ավելի հին ընդորինակության հիման վրա, չի հաստատվում:

Այս նույն տեքստի ուսումնասիրության հիման վրա, սակայն, հաստատվում է ակադ. Հ. Մանանդյանի մյուս յենթազրությունը, վոր այդ ճառում ոգտագործված պիտի լինի Խորենացուն վերագրվող «Պատասխանի թղթոյին Սահակայ» աշխատությունը: Մեր վերև հիշած կոմպիլիտորը հեղինակն իրոք վոր ոգտվել է Խորենացու նշված աշխատությունից: Ավելի ճիշտ, այդ ճառի այս բոլոր հատվածները, վորոնք վերաբերում են Խորենացուն, վերցված են նրա «Պատասխանի թղթոյն Սահակայ» աշխատությունից: Ի միջի այլոց, անհրաժեշտ են նշել, վոր Խորենացու «Պատասխանի թղթոյն Սահակայ» աշխատությունը, ինչպես շատ ճիշտ նկատել են վրոպացի գիտնական ֆետտերը¹, անվավերական եւ:

Դժվար է վորոշել կոմպիլիտորը հեղինակի՝ Մովսեսի և Զաքարիայի աստվածածնի վերափոխման ու նրա պատկերի վերաբերյալ գրած այս առանձին աշխատություններից ոգտվելու և նշված ճառը կազմելու ժամանակը: Համենայն դեպս, մեզ թիվում են, այդ XII—XIII դարերից ավելի ուշ ժամանակներում չպիտի լինի:

Խորենացու «Պատասխանի թղթոյն Սահակայ» աշխատությունից ոգտվելու փաստն ավելի ակնրախ դարձնելու համար անհրաժեշտ ենք համարում բերել յերկու տեքստերից զուգահեռ մի հատված:

(Զաքարիա (J)ի հա (j)ոց կաթողիկոսի Մովսեսի քերթողի առաջեալի փոխութիւն Աստուածամաւըն և պատկերի նորայի):

Մովսեսի Ամինադաբա որդի ծնաւ զՍաղմոն յազդէ Յուղա, և յորժամ անցոյց Յեսու ընդ Յորդանան զԲժ ցեղիցն. զրանակն և զկործանելն Երեքովի ապրեցուցանէն զԲանար պոռնիկի. զոր առեալ Սաղմոն իւր կնութեան քաղաք շինէ զմեզդ զանէմի սահման Յուղայ. և ծնանէր զԲոսս. և Բառ առ իւր կին զհոռութ-

(Պատասխանի թղթոյն Սահակայ)

... և նասոն ծնանի զՍաղմոն Այս Սաղմոն իշխան էր ցեղին Յուղայ, յորժամ անցոյց Յեսու ընդ Յորդանան զորդիսն իսրայէլի, զերկուասան ցեղիցն բանակս եւ ի կործանման Երիթովի, ապրեցուցեալ Յեսու զԲախար պոռնիկն, ևս զնաի կնութեան Սաղմոնի. և քաղաք շինէր սա ինքեան զԲեթղեհէմի գե-

¹ Տե՛ս «Հայկական աշխատասիրութիւնք հայագէտ պ. Ֆէթթէլի», թարգմանությամբ Հ. Տաշյանի, 1895 թ., էջ 98—101:

Թովարաց ի զինով աւեղիցի հաղորդ
աւրհնութեան արդարոց, և ի Հոռու-
թա ծննդենէն ծնաւ ազգ տանն
Դաւթի. և ի նոցա զաւակէն ծնաւ
քրիստոս. և Բոսո ծնաւ զմիքէթ. և
յմիքէթ ծնաւ զեսաէ. և Յեսոսէ զԴա-
ւիթ մարգարէն. հոգով սրբով ասաց
ոչ ինչ կրու<Ար>ես իշխանն Յուղայ
իսկ երրաթա քացումն ասէ. վանդի
ի նմա Երանելին Սամուէլ աւծանէր
զԴաւիթ թագաւոր Աստուածակն.
զոր մարգարէն կանխաւ ճառեալ
ի քէն ելցէ ինձ իշխան որ հովեցէ
զժողովուրդ իմ զիսրայէլ. մեծ նա-
հապեաին Յակոբա լցաւ աւընու-
թիւն որ ասաց. մի պակասեսցէ իշ-
խան Յուղայէ. մինչև ի գալին որոյ
իւր է թագաւորութիւն. և նա է ակն-
կալութիւն նեթանոսաց. ոչ վասն
Դաւթի ասացաւ մարգարէութիւն.
այլ որ ի զաւակէ Դաւթի էտա զմըշ-
մարիտ մարգեղութիւնն. ի Բեղդահէմ
որ կոչեցաւ քաղաք Դաւթի ծնաւ
ի սուրբ կուսէն. ի սմա բացաւ գուռն
տիեզերաց տեսանել զարարչական
բանն մարմնով ճշմարտապէս. որ է
առաջին քաղաք զաւառին. Յուղա ի
քէն ելցէ ինձ իշխան. ոչ ըստ Դաւթի.
կամ այլ ըստ թագաւորացն ասացաւ,
որք միում Խորայէլի տիրեցին. այլ
թ Բեթղահէմ ծնելոյն ի կուսէն. որ
տիրեաց տիեզերաց աստուածաբար-
զի մի հրէայքն միայն ճոխացին
մարգեղութեամբն. առաջին հաւատալ
ի Թրիստոս. զի և նեթանոսաց անմա-
քուր կանայք ի գոտերացն Խորայէլի
յաջորդեցին մաքրութիւն Ռահար.
Հոռութ և Թամար. զի և հեթանոսաց ժո-
զովուրդն պարծեսցին. այսպէս ունե-
լով նախամայլը սրբոյ կուսն. զի վոր-
պէս հրէայքն թագաւորովին պարծին
և նահապետն. սուրբ կուսին նախա-
չարբը. նմանապէս և սուրբ եկեղեցի

տինս Յուղայ. և ի սմանէ ծնանէր
զբոսու եւ Բոսու առ կին զՆոութ մո-
վարացի. և ի նմանէ ծնանէր զՈվենի.
և Ովենի ծնանի զԵնսէ. Յեսոէ
ծնանի զԴաւիթ: Սա է մարգարէին
հոգեթառն խոստովանութիւնն. «Ոչ
ինչ կրսեր ես յիշխանն Յուղայ:
իսկ Եփրամթա՝ թարզմանի բացումն,
վասն զի ի սմա և Սամուէլ օծեալ իւ-
ղով զԴաւիթ, զոր մարգարէն նախա-
ճառեալ, չի քէն ելցէ ինձ իշխան որ
հովուեցէ զժողովուրդ իմ զիսրայէլ»:
Մեծի նահապետին լցաւ օրհնու-
թիւն, անպակաս ասացեալ պետ ի
Յուղայէ, մինչև ի գալ՝ որոյ իւր է
թագաւորութիւնն, և նա է ակնկա-
լութիւն հեթանոսաց: Ոչ վասն Դաւ-
թայ ճառեալ զայս մարգարէացաւ,
այլ վասն որ ի զաւակէ Դաւթի ճըշ-
մարիտ էտա զմարմնաւորութիւնն:
Ծնակ ի սուրբ կուսէն ի Բեթղեհէմ
որ Դաւթի կոչեցաւ քաղաք: Ի սմա
բանայր դուռն տեսութեան տիեզե-
րաց, զարարչական բանին մարմնա-
նալ ծշմարիտ, որ առաջին է, և ոչ
կրսեր քաղաք զաւականին Յուղայ:
«Ո քէն ելցէ ինձ իշխան», ոչ է ըստ
Դաւթայ և կամ ըստ մարուր թագա-
ւորաց ճառեալ, որք միամսւմ իս-
րայէլի տիրեցին, այլ ի Բեթղեհէմ ի
կուսէ ծնեցելոյ, և տիրեալ տիեզերաց
աստուածաբար: Եւ զի մի Հրէայքն
ճոխացին միայն ինքեանց զմար-
նաւորութիւնն հաւատալով, զի և ի
հեթանոսաց անմաքուր կանայք զըս-
տերաց իսրայէլի յաջորդեցին մաք-
րութիւն, Թամար, Ռախար, Հռութ.
զի և հեթանոսաց պարծեսցի ժո-
զովարան, այսպիսի ունելով նա-
խարարս սրբոյ կուսին Զի սրպէս
Հրէայք պարծին թագաւորօք և նա-
հապետօք, նույնպէս և եկեղեցի
սուրբ խնդասցէ տեղեաւն, Թամա-

Զաքարիային և Սովորո քերթողին վերագրվող ձառի առաջին յերեսը:

տեղովի. Հռութաւ. || և Բահարաւ. և
Թամարաւ. և զեկեսաւ փրկութիւն
նոցաւ առնելով ընդ թագաւորան
և ընդ նահատեսան գմիծ և զառաջին
կանայօն զինքպահէմ հասարակաց
արար. զաստածընկաւ այրն հա-
ստատապէս զաստղն անշատակի,
զմոգան անորիշ. զմարմատցեալ բանն.
յերկակի մասանց. յառաքինի կա-
նանց որ ի ճեթանոսաց. ի թագա-
ւորացն և նահատեսացն որ յիբրա-
յէլի. ի սրբոյ կուսէն հասարակաց

բան, Բաֆիարտն, Հոռոթեսն: Եւ
զերելիք փրկութիւնս նոցա առնելով
ընդ թագաւորս և ընդ նահապետս,
որպէս զմիծ և զառաքինի կանայք
ընթեթղենէմ հասարակաբար զաս-
տուածընկալ այրն, հաւաստագէս
զատողն, անջատակի զմուն, անո-
րի զմարմանցեայ Բանս Յերկակի զմ
մասանց, յանսաւաքինի կանանցն
որք ի ճեթանոսաց, ի թագաւորաց
և ի նահապետաց որք յիշրայէլ, ՚լ-
սրբոյ կուէն հասարակաց փայլեաց

գայլեաց անմուտ արեգակն, որ ջահառիքաց զընթանուր տիեզերս ամենայն...»:

(Զեռագիր թիվ 2042 (2054), թիրթ՝ 325ա—բ):

անմուտ արեգակն, ջահառարեաց զընթանուր տիեզերս...:
(Մովսէսի Խորենացւոյ, Մատենագիր թիւնք, Վենետիկ, 1865 թ., հջ 286—87, «Պատասխանի թղթոյն Սակայք):

Համեմատությունից պարզ յերեսում է, վոր այդ յերկու տեքստերում եյական տարրերություններ չկան: Յեղած տարրերություննելլ զընական բնույթը ունեն: Ներկա ճառը կազմող հեղինակը, ինչպես շատ ճիշտ կռահել և ակագ. Հ. Մանանդյանը, վերցրել և Խորենացու «Պատասխանի թղթոյն Սահակաց» աշխատությունից: Սակայն, կրկնում ենք, ակագ. Հ. Մանանդյանի մյուս յեղակացությունը՝ նշված ճառի հիման վրա Խորենացուն: Զաքարիա կաթողիկոսի ժամանակակից մարդ համարելլ, ինչպես ցույց ենք տվել վերեռում, չի հաստատվում:

«ՄՂՈՆԱՉԱՓՔ»-Ն «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՅ»-Ի
ՇԱՐՈՒԽՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ Ե

«Մղոնաչափք»-ի և «Աշխարհացոյց»-ի մեջ յեղած կապի վրա կանգ և առել արդեն ակագ. Հ. Մանանդյանը իր «Խորենացու առեղծվածի լուծումը» աշխատության մեջ (հջ 84—89) և հիմնվելով «Աշխարհացոյց»-ի ու «Մղոնաչափք»-ի աշխարհագրական անունների նմանության վրա, հասրտվոր և համարել «Մղոնաչափք»-ը «Աշխարհացոյց»-ի հետինակի գրություններ: Ժամանակակից գրությունները այսպիս այս վերատառածությամբ, վոր այդ գրվել և վոչ թե Դ-րդ դարում, այլ ավելի ուշ՝ 9-րդ դարում: Ակաղեմիկ Հ. Մանանդյանի հիմնական կռվանը, վոր հիմք և տվել յենթագրելու, թե «Մղոնաչափք»-ը Շիրակացու ժամանակից ուշ, IX դարում գրված աշխատանք և, հանդիսացել և «Ակողա» և «Բասրա» քաղաքների հիշատակումը «Մղոնաչափք»-ում, վորոնք առևտրական կարեոր կենտրոններ եյին դառիկ և կարող եյին հիշվել Դ-րդ դարից հետո: Յերեսում է, ակագ. Հ. Մանանդյանը ծանոթ և միայն «Աղվէսագրքի» և ՀԽՍՀ մատենադարանի 2679 և 1737 թվակիր ձեռագրերի «Մղոնաչափք»-երի հետ, վորոնք լավ որինակներից չեն: Նա իր արամագրության տակ չի ունեցել ՀԽՍՀ մատենադարանի «Մղոնաչափքեր»-ի լավագույն մյուս որինակները, վորոնք հիմք կտային ավելի համարձակ յեղակացության:

ՀԽՍՀ մատենադարանի 30 ձեռագիրը «Մղոնաչափք»-կրի ուսումնասիրության արդյունքները այժմ գալիս են լիովին հաստատելու ակադ. Հ. Մանանդյանի յեղբակացությունը՝ «Մղոնաչափք»-ը «Աշխարհացոյց»-ի հավերժած լինելու հարցում; Պարզվում է, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակը վերջացնելով աշխարհագրության շարադրությունը, իրոք շարունակել և «Մղոնաչափք»-ը՝ ցանկանալով համառում ձեռվ տալ գլխավորապես Արեվելքի առեւտրական կարևոր մագիստրալները և նրանց վրա գտնվող առանձին կարևոր քաղաքները՝ մղոնաչափերով; Ուսումնասիրողների գործը հետագայում հեշտացնելու համար անհրաժեշտ ենք համարում տալ այստեղ ՀԽՍՀ մատենադարանի ձեռագրերի «Մղոնաչափք»-ի բերվողրափիան՝ դասավորված ժամանակագրական կարգով:

1. «Վասն գիտութեան մղոնաչափաց»: — Ընդորինակված և 971 թվին: Գրիչը — Դուկան և (Դավթի վորդին): Ամենահին հայկական մեզ հասած թղթե ձեռագիրն եւ: Գրված և միասյուն միջին մեսրոպյան յերկաթագրով: «Մղոնաչափք»-ը շարունակվում և դրամական չափերով (տես թիվ 2679 (102), թերթ 206ա):

2. «Մղոնահամարք երկրաչափութեան»: — Ընդորինակված և XIII դ.: Գրիչը — Սարգիսն եւ: Վերջում ունի «Աշխարհացոյց»-ի բնդարձակ վերջաբանը: Գրված և թղթի վրա, միասյուն, բոլոր գրով (տես թիվ 4166, թերթ 209ա-բ):

3. «Մղոնաչափք»: — Գրված և պահպանակի վրա: Գրչության ժամանակը հայտնի չի: Պահպանակին կից ձեռագիրն ունի 1353 թ. գրչություն: Գրված և թղթի վրա, միջին մեսրոպյան գրով (տես թիվ 5600, վերջին պահպանակը):

4. «Յ(ա)ղ(ա)զ Մղոնաց»: — Ընդորինակված և 1413 թ. Թովմա Մեծոփեցու կողմից: Վերջինիս մի հիշատակությունից յերեսում է, վոր նա արտազրել և Խաթա վանքում գտնվող մի հին ձեռագրից: Զեռագրի նյութը — թուղթ և: Գրված և միասյուն, բոլոր գրով: «Մղոնաչափք»-ը շարունակվում և Շիրակացու ծանրության չափերով (տես թիվ 599, թերթ 51ա-բ):

5. «Յաղազս երկրաչափութեան»: — Ընդորինակված և Մատթեվոս վարդապետի կողմից, XV դարում: Գրված և թղթի վրա, բոլոր գրով (տես թիվ 5184, թերթ 57թ):

6. «Մղոնահամարք այս են»: — Ընդորինակված և Վարդանի

վորդի Դավթի կողմից: Գրչության թվականը—1443 թ. և Գրված
ե թղթի վրա, միասյուն, բոլոր գրով, տեղափորված և «Աշխարհ-
հացոյց»-ի հավելվածում (տես թիվ 582, թերթ 173թ—174ա):

7. «Մղնաչափ»:—Ընդորինակված և XV դարում Պետրոս
գրչի կողմից: Տեղափորված և «Աշխարհացոյց»-ի հավելվածում:
Վերջում ունի ընծայական վերջաբան: Գրված և թղթի վրա,
յերկսյուն, բոլոր գրով (տես թիվ 1267, թերթ 363թ—364ա):

8. «Մղնաչափ»:—Ընդորինակված և 1597 թ. Ղազար Բա-
րերգու կողմից: Տեղափորված և «Աշխարհացոյց»-ի հավելվածում:
Վերջում ունի «Աշխարհացոյց»-ի ընծայական վերջաբանը: Գրված
և թղթի վրա, յերկսյուն, նոտր գրով (տես թիվ 1486, թերթ
104թ):

9. «Մղնաչափ»:—Ընդորինակված և XVI դարում: Գրիչն
անհայտ և: Գրված և թղթի վրա, միասյուն, նոտր գրով (տես
թիվ 3961, թերթ 28ա—29ա):

10. «Մղնաչափ»:—Ընդորինակված և 1600 թ. Յերեմիա
գրչի կողմից: Տեղափորված և «Աշխարհացոյց»-ի հավելվածում:
Զեռագիրը—թուղթ և, գրված և յերկսյուն, նոտր գրով (տես թիվ
2019, թերթ 291ա—բ):

11. «Մղնաչափ»:—Ընդորինակված և 1608 թ., Պոլսում,
Պետրոս գրչի կողմից: Տեղափորված և «Աշխարհացոյց»-ի հավել-
վածում: Զեռագիրը—թուղթ և: Գրված և միասյուն, նոտր գրով
(տես թիվ 5613, թերթ 299ա—բ):

12. «Մղնաչափ»:—Ընդորինակել և Սիմեոն Կապու-ը, Լեմ-
բերգում, 1614 թ.: «Մղնաչափ»-ն սկսում և փոքրիկ ծանոթու-
թյումք՝ մղնական չափերի մասին, մի քանի տող խոսվում և
ասպարհական չափերի մասին և անցնում բուն տեքստին: «Մղն-
աչափ»-ի այս տեքստն իր բովանդակությամբ համապատաս-
խանում և Ալիշանի ողտագործած Սարգիս գրչի «Մղնաչափ»-ին:
Գրված և թղթի վրա, յերկսյուն, նոտր գրով (տես թիվ 20,
թերթ 293—295):

13. [«Մղնաչափ»]:—Ընդորինակված և 1624 թ. Աստվածա-
տուր վարդապետի կողմից: Տեղափորված և «Աշխարհացոյց»-ի
հավելվածում: Գրությունը—բոլոր և: Գրված և թղթի վրա,
յերկսյուն (տես 2748, թերթ 238ա—բ):

14. «Մղնաչափ»:—Ընդորինակված և 1653 թ., Շոռոթում:

Զեռագիրը — թուղթ և: Գրությունը — նոտր և: «Մղոնաչափք»-նի վերջում պահել և «Աշխարհացոյց»-ի ընծայական վերջաբանը (տես 4205, թերթ 470ա):

15. «Մղոնաչափք»: — Ընդորինակված և 1657 թ. Ալեքսանդրի կողմից նորաշենում: Տեղափորված և Վարդանի «Աշխարհացոյց»-ի հավելվածում: Գրված և թղթի վրա, միասյուն, բոլոր գրով (տես թիվ 1487, թերթ 50ա-բ):

16. «Մղոնահամարք այս են»: — Ընդորինակված և 1664 թ.: Գրիչն անհայտ և: Տեղափորված և «Աշխարհացոյց»-ի հավելվածում: Զեռագիրը — թուղթ և: Գրված և յերկայուն, նոտր գրով (տես թիվ 1717, թերթ 170ա-բ):

17. «Մղոնաչափք»: — Ընդորինակված և 1665 թ. Յեփրեմ Տաթևացու կողմից, Կեսարիայում: Տեղափորված և «Աշխարհացոյց»-ի հավելվածում: Գրությունը — նոտր և: Զեռագիրը — թուղթ և (տես թիվ 2291, թերթ 105ա—106ա):

18. [«Մղոնաչափք»]: — Ընդորինակված և XVII դարում: Զեռագրի գրիչն ու գրչության վայրն անհայտ են: Զեռագրի նյութը — թուղթ և: «Մղոնաչափք»-ն իր վերջում ունի ընծայական վերջաբան (տես թիվ 1127, թերթ 227ա-բ):

19. [«Մղոնաչափք»]: — Ընդորինակված և 1672 թվին Նահապետ Շռութեցու կողմից: Տեղափորված և «Աշխարհացոյց»-ի հավելվածում: Վերջում ունի ընծայական վերջաբանը: Գիրը — նոտր և: Նյութը — թուղթ և: Գրությունը — միասյուն և (տես թիվ 3941, թերթ 280բ—281ա):

20. «Մղոնաչափք»: — Ընդորինակված և 1676 թ. Գրիգոր Յերեվանցու կողմից: Տեղափորված և «Աշխարհացոյց»-ի հավելվածում: Զեռագրի նյութը — թուղթ և: Գրությունը — միասյուն և (տես թիվ 1864, թերթ 296ա—297ա):

21. «Մղոնաչափք»: — Ընդորինակված և 1677 թ. Սարգիս յեալ, Յելդոկեցու կողմից, Յերուսաղեմում: Զեռագրի նյութը — թուղթ և, գիրը նոտր և (տես թիվ 3657, թերթ 40ա-բ):

22. «Մղոնահամարք նանապարհաց ընդիանուր»: — Ընդորինակված և XVII դարում: Զեռագրի գրիչն ու գրչության վայրն անհայտ են: Նյութը թուղթ և (տես թիվ 1737, թերթ 72բ—73ա):

23. «Մղոնաչափք»: — Ընդորինակված և 1691 թ. Ներսես սար-

Աղավագի կողմից: Զեռագրի նյութը—թուղթ և Տեքստը վերջում
թերի յէ (տես թիվ 1459, թերթ 190ր):

24. «Մղոնաչափ»: — Ընդորինակված և XVIII դ.: Զեռագրի
դրիչն ու գրչության վայրն անհայտ են: Նյութը—թուղթ և,
գիրը—նոտր (տես թիվ 7190, թերթ 95ր—96ա):

25. «Մղոնաչափ»: — Ընդորինակված և 1722 թ. Ալեքսան
դրչի կողմից: Նյութը—թուղթ և: Գիրը—նոտր և (տես թիվ 7993,
թերթ 100ր):

«Մղոնաչափ»-ի ներկա բիբլիոգրաֆիան լրիվ չի: ՀԽՍՀ
Պետ. մատենադարանի ձեռագրերում կան պատմագիտական այն-
պիսի ժողովածուներ, վորոնք գեռես ուշադիր չեն նայված:

«Մղոնաչափ»-երի միջի գոյություն ունեցող կապը, կամ
ինչպես, սովորաբար, ասլում և—ճյուղազրությունը, մենք դժվա-
րանում ենք տալ, վորովհետեւ առանձին ընդորինակվություննե-
րի միջն յեղած կապի պարզաբանումը, կոնկրետ հիշատակությունների
բացակայության պատճառով, անհնար և:

Կարեոր հետեւթյունը, վոր կարելի յէ հանել ՀԽՍՀ մատե-
նադարանի ձեռագրերում պահված «Մղոնաչափ»-երի ուսումնա-
սիրությունից, դա նրանց ունեցած սերտ կապի հարցն և «Աշ-
խարհացոյց»-ի տեքստի հետ: «Մղոնաչափ»-ի տեքստերի մեծ
մասը ընդորինակված են «Աշխարհացոյց»-ի հավելվածում:
Ուշադրության արժանի յի, վոր «Մղոնաչափ»-երը վորպես
հավելված պահել են հատկապես «Աշխարհացոյց»-ի լավագույն
և հնագույն որինակները (թիվ 582 և ուրիշները): Ճիշտ և,
պատահում են պատմագիտական բովանդակությամբ հնագույն
այնպիսի ձեռագրեր ես, ուր «Մղոնաչափ»-երը պատահում են
«Աշխարհացոյց»-ից անդամանատված ձեռվ, սակայն այդ ժողովա-
ծուները սովորաբար պատմագիտական մանր նյութերի ժողովա-
ծուներ են և դրանց նպատակն ե յեղել զանազան մատենագիրնե-
րից ծաղկաքաղ ձեռվ արված ներկայացնել տարբեր գիտություննե-
րի գծով հատվածներ միայն:

Կարեոր և նշել նաև, վոր «Մղոնաչափ»-ի ընդորինակու-
թյունները պարունակող ձեռագրերը սովորաբար պարունակում
են նաև Շիրակացու մյուս աշխատությունները («Յաղագս կշռոց»,
«Յաղագս չափոց», «Յաղագս ընթացից արեգական», «Աստեղա-
բաշխական երկրաչափութիւն» և այլն): «Մղոնաչափ»-ի՝ Շիրա-

կացու աշխատությունների հետ և նրան կապակցված հանդեմ գալը, նրանց միջև գոյություն ունեցող կապի տեսակետից, անկասկած, ունի եյական նշանակություն։ Հետագայում այլ փառաերից մենք կտեսնենք, վոր «Մղոնաչափք»-ի այդպիսի կապակցության մեջ հանդիպելը պատահականություն չեւ:

Ուշազրության արժանի յեւ նաև այն, վոր վորոշ «Մղոնաչափք»-ի տեքստերը, անդամ այն գեղագում, յերբ անդամահատված զրության մեջ են ընկորինակված, իրենց կից պահել են «Աշխարհացոյց»-ի հեղինակի վերջարանը։

«Մղոնաչափք»-ի «Աշխարհացոյց»-ի հավելված լինելու հարցում ամենակարևոր փաստը—այդ վորոշ «Աշխարհացոյց»-երի վերջում պահված հեղինակի մի հիշատակությունն եւ Այդ հիշատակությունը պահել են մեր մատենադարանի մի շարք ձեռագրեր։ Աշխարհագրության վերջում, այնտեղ, ուր վերջանում է Սյունացոց աշխարհազրությունը («... կիսահաւք, կիսամարդք, անգլուխք») և սկսում «Մղոնաչափք»-ը, հեղինակն ամփոփում եւ հետեւյալ խոսքերով. «Ահա կատարեցան ամենայն տիեզերք և պատմածք խաւսից և աճա կամիմ զչափ գորա համառօտել մղոնախազաց ոտնաչափութեամբ՝ աւժանդակարար ասպարէզաձէմ դիտաւորութեամբ»¹։ «Աշխարհացոյց»-ի հեղինակը շատ պարզ հայտնում եւ, վոր վերջացը և «Ամենայն տիեզերք և պատմածք խաւսից»-ը և ցանկանում եւ այժմ նրա չափերը համառօտել «մղոնախազաց ոտնաչափութեամբ»։

Այն մասին, վոր իրոք այդ հիշատակությունը «Աշխարհացոյց»-ի հեղինակինն եւ գնչ ուրիշ մեկինը, այդ պարզ յերեսում և հեղինակի «Աշխարհացոյցի»-ի վերջում թողած վերջարանից, վորի վրա մենք գետ առիթ կունենանք կանգ առնել։

ՀԽՍՀ մատենադարանի ձեռագրերում յեղած «Մղոնաչափք»-ի ուսումնասիրությունից պարզվում եւ դարձյալ, վոր մեզ հասած «Մղոնաչափք»-երն ունեն յերեք խմբագրություն, վորոնցից ամենից հինը և արժեքավորը, դժբախտաբար, չի հրատարակված։ «Մղոնաչափք»-ի այդ լավագույն ու հնագույն որինակը պահվել և ՀԽՍՀ մատենադարանի 582 թվակիր ձեռագրի «Աշ-

¹ «Աշխարհացոյց»-ի հեղինակի այս հատվածը տպագրվել է «Աղյուսագրում» «Մղոնաչափք»-ի հետ միասին։

խարհացոյց»-ի խավելվածում: Այս «Մղոնաչափք»-ը՝ մեզ հայունի մյուս որինակներից տարբերվում և նրանով, վոր նա իր մեջ չունի աշխարհագրական այն անունները, վորոնք ավելացվել են ուշ շրջանում: Այստեղ չկան, որինակ՝ վոչ Ակողա և վոչ ել Բասրա քաղաքները, վորոնք Խորենացու ժամանակի վորոշման հարցում մեր բանասիրության մեջ այնքան թյուրիմացությունների պատճառ են դառնել: Մենք անհրաժեշտ ենք համարում բերել այս խմբի «Մղոնաչափք»-ի տեքստն ամրողությամբ.—

«Ի Դուռնա (յ) մղոն Մ մինչև ի Կարնոն (յ) (բնագրում—Քարսո) քաղաք. անդի մղոն ձ մինչև ի փոս աշխարհն Հայ(յ)ոց և Յունաց. անտի մղոն Ղ, ի Կողոնիա բերդ քաղաքաց. անդի մղոն ձ մինչև ի Նիոկեսարիա. անդի մղոն Զ մինչև յԱմասիա. անդի մղոն Ձ մինչև ի Գանգը. անդի մղոն ՑԻ ի Պոնտպաւլիս. անդի մղոն ՅՇ մինչև ի Տրապաւլիս (բնագրում—Սոփակլիս), անդի մղոն ՌՇ մինչև յԱփրիկէ. անդի մղոն Զ մինչև ի Սեփտէ. անդի մղոն Ռ մինչև յՌվակիանոս ծով անծանօթ» (ՀԽՍՀ Պետ. մատ. ձեռագիր № 582, թերթ 182բ—183ա):

«Աշխարհացոյց»-ի առաջին խմբի այս տեքստից յերեսում և, վոր «Մղոնաչափք»-ը իր ներկա խմբագրությամբ գրված և վոչ թե IX դարում, այլ VII դ. Խալիֆաթի նվաճումից առաջ:

Յերկրորդ խմբի «Մղոնաչափք»-երը — զրանք «Աղվէսագրում» հրատարակված «Մղոնաչափք»-երն են¹: Այդ խմբին և պատկանում նաև 971 թվին ընդորինակված ՀԽՍՀ Պետ. մատենադարանի նշանավոր (թիվ 2879) ձեռագրի «Մղոնաչափք»-ը, վորե պատճենը մտածնադարանից ուղարկվել և ակադեմիկ Հ. Մանոնդյանին և վորը նա հրատարակել եւ: Այս «Մղոնաչափք»-ը նուխորդի համեմատությամբ խմբագրված որինակ և: Մեզ թվում ե, վոր նրա խմբագրությունը պիտի յեղած լինի 8-րդ կամ 9-րդ դարերում: «Մղոնաչափք»-ի այս տեքստում ավելացվել են առետրական մագիստրալի նոր ուղղություններ և այդ մագիստրալի վրա բարձրացած վարչական ու առետրական նոր այնպիսի քաղաքներ, վորոնք զարգանալ սկսեցին միայն Խալիֆաթի զերիշիանության վերջին շրջանում:

¹ Գիրք աշխարհաց եւ առասպեկտարանութեանց, որ է Աղուէսագիրը, 1698, էջ 40—42:

Յերբորդ խմբի «Մղոնաչափք»-ը — այդ կ. Ալիշանի հիշած «Մղոնաչափք»-ն ե, վորը խմբագրված ե վոնն Սարգիս զրչի կողմից: Նա իր կողմից նախորդ «Մղոնաչափք»-ի վրա ավելացրել և ասպարիզական չափերը ևս: Այս խմբի «Մղոնաչափք»-ի տեքստը պահվել է ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 20 ձեռագրում: Անհրաժեշտ ե նշել, վոր այս տեքստը, մեր կարծիքով, վերստին խմբագրվել և յերկրորդ խմբի «Մղոնաչափք»-ից:

Այսպիսով, մնաք տեսնում ենք, վոր «Մղոնաչափք»-ի նախնական տեքստը խմբագրվել ու վերախմբագրվել և ուշ շրջանում: Խմբագրողները «Մղոնաչափք»-ում մտցրել են իրենց ժամանակի առևտրական մագիստրալի նոր ուղղություններն ու նրանց վրա բարձրացած առևտրական նոր կենտրոնները: «Մղոնաչափք»-ի տեքստում ուշ ժամանակում մտած այդպիսի կենտրոններից են հանդիսացել «Բաւրա» և «Ակողա» քաղաքները, վորոնք թյուրիմացարար կովաններ են ծառայել Խորենացուն ուշ շրջանը բերող բանասիրների մոտ:

«Մղոնաչափք»-ի նախնական տեքստի ուսումնասիրությունից պարզ յերեսում ե, վոր «Մղոնաչափք»-ն իր նախնական խմբագրությամբ զրված և VII գարում: Անհրաժեշտ և նշել, վոր այդ ժամանակում, հայկական մատենագիրներից միակ անձնավորությունը, վոր կարող եր գրադիվել տարածության այդպիսի չափերով, կարող եր լինել միայն Անանիա Շիրակացին:

«Մղոնաչափք»-ի սկզբնաղբյուրների նոր ուսումնասիրությունը, ինչպես տեսնում ենք, հաստատում ե կ. Ալիշանի «Մղոնաչափք»-ի հնության մասին վաղուց հայտնած այն կարծիքը, վոր «Հեղինակն՝ թուի Անանիա Շիրակացին, եթէ չիցէ հնագոյն քան զնա ոք, զի զրի և ընդ գործս սորտ և ընդ աշխարհագրութեան Խորենացոյ»¹:

ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ

ՀԽՍՀ Պետ. մատենադարանի հնագույն ձեռագիր «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրությունից պարզվում ե, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստը «Մղոնաչափք»-ով չի վերջացել: «Մղոնաչափք»-ը շարունակվել և աստղաբաշխական բովանդակություն

¹ կ. Ալիշան, Այբարատ, էջ 412:

ունեցող մի այլ նյութով, վորի վերնագիրն և «Աստեղաբաշխական երկրաչափութիւն»: ՀԽՍՀ Պետ. մատենադարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների հնագույն վորոշ որինակների «Մղոնաշափք»-երն իրենց կից պահել են այդ նյութը: Այդպիսի ձեռագրերից են թիվ 582, 5154 և 1717: 4166:

Մատենագրաբանի թիվ 582 ձեռագրի «Աշխարհացայց»-ի շարունակությունը
հանդիսացր Շիրակացու «Աստեղպարագան» երկրաչափութիւնը»

Աստղաբաշխական բովանդակություն ունեցող այս նյութը, վորքան մեզ հայտնի յէ, գեռ չի հաստարակված։ Նա չի ոգտագործած նաև առանձին ուսումնասիրությունների մեջ։ Անհրաժեշտ էնք համարում լինել այդ տեքստոն ամբողջությամբ։

«ԱՍՏԵՂԱՅԲԱՇԽԱԿԱՆ ԵՐԿՐՈՎԱՉՄԱՆ»

Ի հարաւային ծայրէն մինչև ցհիւիւսային շրջանակն ասպարէզք ծլի բիւր. ի սրտէ երկրէ մինչև յորում բնակեմքս՝ ասպարէզք երկու բիւր Ծիկ. ի մերմէ բնակութենէս մինչև գունդն լուսնի՝ ասպարէզք Դի բիւր Ծժ. մինչև յգունդն փայլածոին՝ ասպարէզք ՃԶԻ բիւր Գծի. մինչև զգունդն լուսաբերին՝ ասպարէզք ՆՀԷ բիւր ԾԳ է. մինչև յգունդն արեգական՝ ՎՂԳ բեւր (այստեղ «բիւր»-ը գրված և հնագույն «բեւր» ձևով, թողնում ենք այնպես, ինչպես բնագրումն ե) Ճ. մինչև յգունդն հրատին՝ ասպարէզք (Ք) ՎՈՒԲ բիւր. մինչև յգունդն լուսնթագին ասպարէզք ԲՄԴ բիւր մինչև ի յգունդն երեակին (բնագրում— երակին)՝ ասպարէզք (Ք) ԺՌ եւթն ՃԿԸ բեւր կէս, երբեակ. մինչև յութերբորդ գունդն՝ ասպարէզք (Ք) ՃԶՌ ԹՃԽ և զբեւր և երբորդ. թէ հաւատայ ոք վիպասանիս» (ՀԽՍՀ Պետ. մատ. ձեռագիր թիվ 582, թերթ 183ա):

Աստղաբաշխական այս նյութը հետաքրքիր և վաչ միայն այն տեսակետից, վոր նա աստղաբաշխության պատմության և ընդհանրապես կուլտուրայի պատմության համար արժեքավոր նյութ ե, այլ վոր նա խոզոր չափով ոգնում և մեզ պարզելու նաև «Աշխարհացոյց»-ի հեղինակը: Նյութի բովանդակությանը նայելով, առանց գժվարության համարձակ կարելի յե առեւ, վոր դրա հեղինակը ուրիշ վոչ չի կարող լինել քան Անանիա Շիրակացին: Հին հայկական մեզ հայտնի մատենագրերից նա յե միայն, վոր կարող եր կատարած լինել աստղաբաշխական այդ բարդ հաշիվները՝ փորձերով վորոշել յերկրագնդի մյուս մոլորակների միջև դոյցություն ունեցող հեռավորության չափը:

ՀԽՍՀ Պետ. մատենագրանի վորոշ ձեռագրերում այդ նյութը հանդիպում ե մեզ «Աշխարհացոյց»-ից անջատված գրությամբ, «Մղոնաչափք»-ի հետ միասին, կամ բոլորովին առանձին, բայց միշտ Շիրակացու աշխատությունների շարքում: Նման ձեռագրերից ե, որինակ, ՀԽՍՀ Պետ. մատենագրանի 13-րդ գարի գրչություն ունեցող մի հետաքրքիր ձեռագիր, վորը զանվում և թիվ 4166-ի տակ (անս թերթ 209ա—ը): Այս ձեռագրում մեր հիշած աստղաբաշխական նյութը տեղափորված և «Մղոնաչափք»-ից

հետո, Շիրակացու աշխատությունների շարքում: «Մղոնաչափք»-ի վերնագիրն եւ «Մղոնահամարք երկրաչափութեան», իսկ աստղաբաշխական նյութինը — «Աւդաչափութիւն»:

ՀԽՍՀ Պետ. մատենագրաբանի թիվ 4166 ինչպես և այլ ձեռագրերում, «Մղոնաչափք»-ի և աստղաբաշխական այլ նյութի՝ Շիրակացու աշխատությունների շարքում ընդորինակվելը, անկասկած, պատահականություն չե: Նա ապացուցում է միննույն հեղինակի գործ լինելու փաստը:

Աստղաբաշխական այս նյութի Շիրակացուն պատկանելու վերաբերյալ, բարերախտաբար, մեզ հասել եւ մատենագրական մի պարզ վկայություն: ՀԽՍՀ Պետ. մատենագրաբանի թիվ 2492 (թերթ 51ա) և 4284 ձեռագրերում աստղաբաշխական այդ նյութի վերնագրում շատ պարզ հիշված ե Շիրակացու անունը — «Անանիայի Շիրակացոյն ասացեալ է, հայոց վարդապետի, յաղագս բարձրութեան երկնից»: Աստղաբաշխական այս նյութը «Աշխարհացոյց»-ի տեքստի աստղաբաշխական նյութի համեմատությամբ խոշոր փոփոխության ե յենթարկվել միջնադարյան ընդորինակողների կողմից, նրա մեջ մտել են մեծ չափով ախթաբական տարրեր, սակայն հիմնական բովանդակությունը մնացել ե նույնը:

Մատենագրական այս տեղեկությունը, մենք կարծում ենք, կարեղոր փաստ ե «Աշխարհացոյց»-ի հեղինակը վորոշելու հարցում: Յեթե «Մղոնաչափք»-ը «Աշխարհացոյց»-ի շարունակությունն ե կազմել, իսկ «Օդաչափք»-ը («Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը) — «Մղոնաչափք»-ի, իսկ այդ անկասկած ե, յեթե վերջինը հայտնի յե Շիրակացու անունով, պարզ ե, վոր ամբողջ աշխատության հեղինակը — Շիրակացին ե: «Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը, ինչպես և «Աշխարհացոյց»-ը, հնագույն ընդորինակող գրիչներին հայտնի յե յեղել Շիրակացու անունով, սակայն հետագայում անդամահատվելուց հետո «Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը պահել ե իր նախկին հեղինակի անունը, իսկ «Աշխարհացոյց»-ը — վհչ:

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՋ»-Ի ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

«Աշխարհացոյց»-ի տեքստի վերլուծման հիման վրա, բանասիրության մեջ մատնացույց են արվել արգեն մի շարք աղբյուրներ, վորոնք ոգտագործել ե «Աշխարհացոյց»-ի հեղինակը:

Նշվել եւ Պապալոս Աղեքսանդրացու «Երկրագրութիւն»-ը, Պտուղոմեոսի «Տիեզերագրութիւն»-ը, Կոստանդին Անտիռքացու (Կոստամաս Հնդկաչու հայտնի աշխարհագրագիտի, ինչպես ապացուցել ե պրոֆ. Ք. Պատկանյանը) «Քրիստոնեյական տեղագրություն»-ը, «Աղեքսանդրի գիրքը», Հովհաննես Մալաղասի «Ժամանակագրություն»-ը և այլն: Վեճ է յեղել միայն մի աղբյուրի շուրջը—Պտողեմեոսի շուրջ—«Աշխարհացոյց»-ի հեղինակն անմիջապես ե ոգտվել Պտողեմեոսից, թե միջնորդաբար, Պապալոսի միջոցով: Սեն-Մարտենը¹, պրոֆ. Ք. Պատկանյանը² և ակադ. Հ. Մանանդյանը³ հիմնվելով «Աշխարհացոյց»-ի հեղինակի արած այն հիշատակության վրա, վոր Պապալոսը համառոտել ե Պտողեմեոսից («Եւ առաւել յարտաքս կոյս քան զայս չէ ուրուք զեղը երկրի տեսեալ և կամ գիտացեալ որպէս տսէ Պտղոմէոս. այլ անձանօթ կոչի երկիր և ովկիանոս. Յորոյ ինքնադիր բոլորակին տիեզերագրութեանցն առեալ Պապայ Աղեքսանդրացոյց համառօտաբար երկրագրութեամբ, յորմէ մեր ծայրաքաղ արարեալ գրեցաք...») (եջ 587—588), յենթագրել են, վոր «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակն անմիջապես չի ոդտվել Պտողեմեոսից:

Սուբքրյանը հանգել ե հակառակ յեղակացության: Նրա կարծիքով, մեզ հասած «Աշխարհացոյց»-ի հայերեն տեքստը Պտողեմեոսի աշխատության համառոտ թարգմանությունն ե: Նա անդամ իր հրատարակած «Աշխարհացոյց»-ը վերնագրել ե «Géographie de Moïse de Corène d'après Ptolémée».

«Աշխարհացոյց»-ի հայկական տեքստը Պտողեմեոսի աշխարհագրության համառոտ թարգմանությունն համարելը, պարզ է, վոր ճիշտ չե: Այս հարցում միանգամայն ճիշտ ե ակադ. Հ. Մանանդյանի գիտողությունը Սուբքրյանին: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, ճիշտ ե, խոշոր չափով ոգտվել ե Պտողեմեոսից, սակայն նա ոգտվել ե վորոշ գլուխներում միայն և վոչ ամրողջապես համառոտել նրա աշխարհագրությունը:

Ճիշտ չեն, սակայն, նաև Սեն-Մարտենը, պրոֆ. Ք. Պատկանյանը և ակադ. Մանանդյանը, վորոնք կարծում են՝ թե «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակն անմիջապես չի ոդտվել Պտողեմեոսից: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, մեր կարծիքով, իր տեքստում

¹ Saint-Martin, Mémoires, II, եջ 304—305.

² Проф. К. Гатканов, Армянская география VII в., стр. IV—V.

³ Պրոֆ. Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածի լուծումը, եջ 23:

շատ պարզ վկայում և իր՝ Պտղեմենոսից ոգտվելու մասին: «Աշխարհացոյց»-ի հեղինակն իր առաջաբանում, այնտեղ, ուր նա խոսում է ովկիանոսի մասին և թերում է Կոստանդին Անտիոքացու և Պտղեմենոսի կարծիքներն ովկիանոսի մասին, պարզ հայտնում և իր Պտղեմենոսից անմիջապես ոգտվելու մասին. «Եւ ոչ միայն զայրեցեալ գօտեաւն ասեն զՄվկիանոս, այլ և զամենայն խոկ երկրավ շուրջ զոր զոր և Կոստանդինոս անտիոքացի ի քրիստոնէական տեղագրութեան ասէ յաղագս տապանին անդանելոյ յարեւեան երկրէն առ մեղ ի մէջս կոյս: Բայց Պտղոմէոս, որոյ արք բազմաշրջութեամբ զամենայն չափեցին, ոչ ասեն շուրջ լինել զՄվկիանոս, այլի մի կողմանէ յանկեան հիւսիսոյ յարեւետից...» (Եջ 589, տող 12—21): Կամ թե չե՞ մի այլ հատվածում «Աշխարհացոյց»-ի հեղինակը խոսելով երջանիկ Արարիայի մասին, հետեւյալն և զրում: «Իսկ միջոց աշխարհի բնակութիւն մարդկան՝ Պտղոմէոս զերջանիկն Արարիա ասէ, բայց ես ոչ հաւատում» (Եջ 592, տող 27—29): Պարզ ե, զոր «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակն անմիջապես և ոգտվել Պտղեմենոսից և զրա համար ել հայտնում ե՝ թե այդ «ասում և Պտղեմենոսը», այլապես՝ հարկ չեր լինի այդ ձեռվ Պտղեմենոսին հիշելը:

«Աշխարհացոյց»-ի հեղինակի Պտղեմենոսից ոգտվելու, և ընդհանրապես, նրա ոգտված հիմնական աղբյուրների մասին, սակայն, կա մատենագրական մի պարզ վկայություն, վորի վրա ուշադրություն չեն զարձել մեր բանասերները: — ՀԽՍՀ Պետ. մատենադարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների վորոշ որինակներ, ինչպես ասել ենք, պահպանել են մատենագրական մի կարևոր հիշատակություն: «Աշխարհացոյց»-ի աղբյուրների մասին հիշատակություն պարունակող մատենագրական այդ տեղեկությունը փաստորեն «Աշխարհացոյց»-ի հեղինակի ընծայական վերջարանն ե, ուր և նա հիշում և իր ոգտագործած աղբյուրները: «Աշխարհացոյց»-ի հեղինակի այս վերջարանը հասել և մեղ մի քանի խմբագրությամբ: ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 1267 ձեռագրի «Աշխարհացոյց»-ում նա ունի հետևյալ բովանդակությունը. «Այս յինէն ընծայ քեզ գրատրական, վերծանեալ ի Պորֆիրի ներգործութենէն և գեղգեղիոյ մղոնական գրամատիկոս տառիցն և ի բազմավեպ պատմութենէն Պապայ Աղէքսանդրացւոյ: Ողջ լեր ի տէր» (թերթ 364ա):

Սրանից մասամբ տարբերվում և թիվ 582 խմբի ձեռագրի «Աշխարհացոյց»-ի վերջաբանը. «Այս քեզ յինէն ընձա(յ) գրաւուրական՝ վերծանեալ ի Պորփիւրի ներգործութիւնէն և գեղգեղեալ ի Պառզամէական դրամարտիկոս տառիցն, և ի բաղմավիչպ պատմութիւնէն Պապա(յ) Աղեքանդրացիո(յ), ողջ լեր» (թիրթ 183ա-ը): Վորոշ ձեռագիր «Աշխարհացոյց»-ների այս վերջարանը վերջանում և վնչ թե «ողջ լեր» բառերով, այլ «ողջ լեր, իմաստուն» բառերով (տես ձեռագիր թիվ 5613 թ., 299ր):

«Աշխարհացոյց»-ի այս վերջարանից առաջին համառոտված որինակը հայտնի յե յեղել Դ. Ալիշանին, նա այդ մասին ակնարկում և իր «Այրաբատ» աշխատության մեջ¹: Ակադ. Հ. Մանուդյանն այդ տեղեկությունը համարում է հետաքրքիր, սակայն գտնում ե, վոր դա «... կարոտ և գեռ դրական ու ավելի պարզ ապացոյցների²»: Այժմ ՀԽՍՀ Պետ. մատենադարանի ձեռագրերից բերված մատենագրական այս կոնկրեատեղեկությունն այլևս, կարծում ենք, կասկած չի թողնում հեղինակի հիմնական աղբյուրների նկատմամբ: «Աշխարհացոյց»-ի ընծայական այս վերջարանից շատ պարզ հետեւմ ե, վոր «Աշխարհացոյց»-ի աղբյուրները, հիմնականում, յերեք են հանդիսացել՝ Պորփիյուրի ներածությունը, Պապաս Աղեքանդրացու «Երկրագրութիւն»-ը և Պտողեմեսուի «Տիեզերագրութիւն»-ը: Այսպիսով՝ Պտողեմեսուից ուժավելու հարցը, կարծում ենք, լուծվում է վերջնականապես:

Պարզվում է նաև, վոր բանասիրության կողմից նշված մյուս բոլոր աղբյուրները՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակի կողմից ոգտագործվել են միջանկյալ ձեռվ-նա չի հիշատակում այդ մասին իր հիմնական աղբյուրների շարքում:

Ընծայական այս վերջարանը, սակայն, վկայում է նաև մի այլ տիպուր փաստի մասին—«Աշխարհացոյց»-ի տեքստի անդամահատման մասին: Ընծայական այս վերջարանից, ինչպես տեսանում ենք, ոգտագործված հիմնական աղբյուրներից առաջին տեղը տրվում է Պորփիյուրի ներածությանը: «Աշխարհացոյց»-ի տեքստի ուշադիր քննությունից պարզվում ե, վոր Պորփիյուրի ներածությունից, վորը հավանական է տիեզերագիտական բո-

¹ Դ. Ալիշան, Այրաբատ, եջ 412:

² Հ. Մանանդյան, Խորենացու առեղջամբի լուծումը, եջ 89:

Վանդակություն և ունեցել, գրեթե վոչինչ չկա: Հարց և առաջ գալիս, ապա ինչո՞ւ յե «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակը Պորտյուրի անունը հիշում վորպես հիմնական աղբյուր, միթե սա թյուրիմացություն և Կարծում ենք, վոր վոչ: Ամբողջ ինդիրն այն և, վոր «Աշխարհացոյց»-ի սկզբից անդամահատվել, անձատվել և Շիրակացու տիեզերագիտական բովանդակություն ունեցող ինչ վոր մի աշխատություն:

Համել և արդյոք մեզ «Աշխարհացոյց»-ին նախորդող տիեզերագիտական բովանդակություն ունեցող այդ մասը և Շիրակացու «Յաղագս երկնային շարժմանց» աշխատությունը վորեն կապ չունի նրա հետ,—դժվար և ասել: Առայժմ մի բան միայն համոզված կարելի յե պնդել, վոր «Աշխարհացոյց»-ին նախորդող տիեզերագրական բովանդակություն ունեցող տեքստն անդամահատվել եւ:

ԿՈՏՈՐԱԿԻ ՅԵՎ. «Ը» ՏԱՌԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԱՑՈՒ
«ՅԱՂԱԳՍ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐՈՂՈՒԹՅԱՆՆ ՅԵՎ. ԿԵՐՊԻՑ
ՀԱՐՑՄԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԹԻ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՅ»-Ի ՄԻԶԵՎ.

«Աշխարհացոյց»-ի Շիրակացուն պատկանելու վերաբերյալ կա մի ուրիշ ավելի կարեռ փաստ, վորի վրա դեռ իր ժամանակին կանգ և առել Գալուստ Տեր-Մկրտչյանը—դա մի համարիչից ավելի ունեցող կոտորակների նման ձևով գործածությունն և Շիրակացու «Յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցման» աշխատության և «Աշխարհացոյց»-ի միջև:

«Աշխարհացոյց»-ի առաջաբանում, ինչպիս հայտնի յե, կայսրիսի մի հատված «Բայց օդաչափութեամբ է մասն հինգ հարիւր ասպարէզ... չորեքկուսի. որպէսզի լինել մասինն եւթանասուն և մի մղոն, չորք եւթն է քսան և ութ» (Վենետ. հրատ., Եջ. 588): Պրոֆ. Ք. Պատկանյանը «Աշխարհացոյց»-ի ուսւերեն թարգմանության մեջ, այդ տեղում կանգ և առել և խոստովանվում և, վոր իր համար այդ հատվածը պարզ չեր: Նա այդ հատվածը թարգմանում և յենթադրաբ հետեւյալ ձևով. «Так что в градусе заключается 71 миля; (а четыре стороны квадратной мили) равняются 28 аспарезам, ибо 4 раза 7 составляет 28» («Այսպես վոր մասը պարունակում և 71 մղոն,

(իսկ քառակուսի չորս կտղմը հավասարվում է 28 ասպարեզի, վորովնեան չորս անգամ 7-ը հավասար է 28-ի): Ռուսերեն թարգմանածը, ինչպես տեսնում ենք, խիստ բռնաձիգ է:

«Աշխարհացոյց»-ի, այդ անհասկանալի մասի առեղծվածը հաջողվել է լուծել Գալուստ Տեր-Մկրտչյանին: Գալուստիքը կայացել և նրանում, վոր 71-ից հետո բերված թվերը մեկից ավելի համարիչ ունեցող կոտորակ է, գորի նմանը մեր հին մատենագրերից գործ և ածել միայն Շիրակացին իր «Յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցման» — աշխատության մեջ: «Աշխարհացոյց»-ի տեքստում յեղած այդ հատվածը Գ. Տ. Մկրտչյանի ուղղումից հետո թարգմանությունը կարդացվում և հետեւյալ ձեռվ «...Մասը հինգ հարյուր ասպարեզ և ...քառակուսին համար և 71 ամբողջ $\frac{1}{4} + \frac{1}{7} + \frac{1}{28}$ մղոնի» (= 71 $\frac{3}{7}$): Մենք գիտենք, վոր մղոնը հավասար է 7 ասպարեզի, ուրեմն 71 $\frac{3}{7}$ = 500 ասպարեզի: Նման ձեռվ Շիրակացին կոտորակ և գործածել իր «Յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցմանն» աշխատության մեջ (որինակ 21-րորդ հարցը առաջ կարաս գինու չափի մասին): Մեկից ավելի համարիչ ունեցող կոտորակների նման ձեռվ գործածելը «Աշխարհացոյց»-ում և Շիրակացու մյուս աշխատության մեջ, պարզ է, վոր պատահական չե և կարելոր փաստերից մեկն և հեղինակի նույնության:

Գալուստ Տեր-Մկրտչյանը Շիրակացու «Յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցմանն» աշխատության և «Աշխարհացոյց»-ի տեքստում մատնացույց և արել այդ յերկու աշխատությունների հեղինակի նույնությունն ապացուցող մի այլ փաստ՝ Հ-ի գործածությանն կեսի փոխարեն:

Ը նշանը՝ կեսի նշանակությամբ գործածվելու այդ փաստը Գ. Տ. Մկրտչյանը մատնացույց և արել Սուքրյանի հարաբերակած «Աշխարհացոյց»-ի հետեւյալ հատվածում «... սկսանիմք պատմելու... ի Ծալըն որ կոչի Յեռոն, այսինքն մեծ եւ հրաշալի. որ ծայրն ի ներքո գայ ի յՈվկիանոս, առաւել քան զայլ երկիր. մատնն երիս, որ լինի ասպարեզք հաղար հինգ հարիւր յիսուն...» (Եջ 13—14): Սուքրյանը սխալ հասկանալով տեքստի այդ հատվածը, անհրաժեշտ է համարել տալ հետեւյալ ծանոթությունը. «Յօրինակին կայ առ երիս բառի՝ ձև մի իբրեւ Ը, որ թուի նշանակել զտասներորդ մասին, այսինքն զաստիճանի. զի զմասն ասաց 500

ասպարէզ լինել և երեք մասունք լինին 1500. իսկ աստ աւելի կայ և 50 հս, որ է $\frac{1}{10}$ մասին»։ Գալուստ Տ. Մկրտչյանն իր աշխատության մեջ, համոզեցուցիչ ձևով ցույց է տվել վոր Ը-ն հավասար և գոչ թե $\frac{1}{10}$ -ի, այլ կեսի ($\frac{1}{2}$): Յեվ նա վերև բերված հատվածում գրչական մի այլ սխալ (հինգ հարյուրը՝ յոթ հարյուրով) ուղղելուց հետո, այդ տեքստը կարդացվում է այսպես. «... Սկսանիմք պատմել... ի ծայրէն որ կոչի Յեռոն. որ ծայրն ի ներքս գայ ի յՈվկիանոս, առաւել քան զայլ երկիր մասունս երիս Ը (կես), որ լինի ասպարէզք հազար և թին հարիւր յիսուն»։ Մեզ հայտնի յե, վոր աստիճանը հավասար և 500 ասպարեզի, ուրեմն $3\frac{1}{2}$ աստիճանը հավասար կիմի 1750 ասպարեզի, վորը և համապատասխանում է Շիրակացու արած հաշիվերին։ ՀԽՍՀ մատենագրարանի հնագույն «Աշխարհացոյց»-ների և Շիրակացու այլ աշխատությունների ուսումնափրությունը լիովին հաստատում է Գ. Տ.-Մկրտչյանի հայտնած կարծիքը՝ Ը-ի նկատմամբ։

Կեսը՝ Ը տառով նշանակությամբ գործ ածված փաստեր են հանդիպում՝ մեզ Շիրակացու այլ աշխատություններում։ Այսպես, ՀԽՍՀ պետ. մատենագրարանի թիվ 582 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի առաջարանում՝ «Երեքտասան և կես»-ը գրված է «Ը-ով (=ՓԳԸ) («Թանգի յեւթնէ նահանգացն... զերկորդն (տուեալ է) ընդ Սիւնիս՝ ժամմ ունելով ԺԳԸ») (տես թերթ 165ր):

Շիրակացու «Աստեղարաշխական երկրաչափութեան» մեջ՝ վորի վրա մենք կանգ ենք առել մի քանի տեղ բերված և Ը-ն կեսի նշանակությամբ. «ի սրտէ երկրէ մինչև յորում բնակեմքու, ասպարէզք երկու բիւր ԾԳԵ» (թ. 384ա):

Շիրակացու «Սակս բացահայութեան թուոց» աշխատության մեջ մենք դարձյալ հանդիպում ենք Ը-ի կեսի նշանակությամբ գործ ածվելու փաստի. «Այլ մեք անցցուք ... սքանչելի խորհուրդ, որ ունի զծնունդ ի կրկնակին քառից կատարեալ թուոց, զի տացէ աւուր առաջին և Ը երեակ լեալ...»։

Պատահական են արգյուր «Աշխարհացոյց»-ի և Շիրակացու մյուս աշխատությունների մեջ բերված այս նմանությունները. կարծում ենք, վոր վոչ. Պատահական գուցե համարվեր, յեթե այլ փաստեր չգալին հաստատելու «Աշխարհացոյց»-ի՝ Շիրակացուն լինելը. Այդ նմանությունները ցույց են տալիս, վոր «Աշ-

իմարհացոյց»-ի հեղինակն ուրիշ վճռ չի, քան ինքը, VII դաշտի նշանավոր մաթեմատիկոս Անանիա Շիրակացին:

ՆԵՐՍԵՀ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ-ՈՒՄ ՅԵՎ, ՇԻՐԱԿԱՅՈՒ ԽՆԴՐԱԳՐԻՑՈՒՄ

«Աշխարհացոյց»-ի հեղինակը Շիրակացին հանդիսանալու վերաբերյալ հետաքրքրիր փաստ և հանդիսանում Շիրակի և Արշարունյաց Պատրիկ Ներսէն Կամսարականի հիշվելու փաստը Սուքըյան հրատ. «Աշխարհացոյց»-ի տեքստում և Շիրակացու Խնդրագրքում: Նմանության այս փաստը հիշել և Սուքըյանն իր Քրանակերեն լեզվով թարգմանած «Աշխարհացոյց»-ի առաջարանում (տես «Géographie de Moïse» de Corène, Venise», 1881, էջ VIII): Նա, սակայն, այդ փաստը նշել և վճռ թե «Աշխարհացոյց»-ը Շիրակացու աշխատությունը համարելու նորատակով, այլ ապացուցելու, վոր Խորենացու «Աշխարհացոյց»-ը խմբագրվել և Շիրակացու կողմից: «Աշխարհացոյց»-ի և Շիրակացու մեջ յեղած կապը ցույց տալու համար մենք անհրաժեշտ ենք համարում զուգանեռ ձեռվ բերել Ներսէն Կամսարականի անվան հիշատակության փաստը:

«Աշխարհացոյց»

Շիրակացու Յաղագս հարցման
և լուծման

«... եւ մայրաքաղաք (Աֆրիկա-
յում) Կարբեզոն, և Տրոպոլիք՝ որ է
երեք-քաղաք, Գիովքի, Կալանիա,
Եւսի. թէպէտ եւ երեք այլ շինեցին
Տիորա, Իգիսիա, Պոնդիկա, որոց
իշխանացաւ իմաստունն եւ բառէն
կամսարական, պատը իկն
Շիրակա և Աշխարհացուն եաց
տէ բնա:

«Հարցումն իւ Ներսէն ի Կամ-
սարականի Շիրակայ և Ար-
շարուն եաց տեսան բուն
կանգնէր առ ստորատով լեզինն,
որում Արախն կոչեն...»

Շիրակացի, Յաղագս հարցման
և լուծման (տես «Գիտ. աշխա-
թերեանի Պետ. համալսարանի
հատ. XI, էջ 271)

(Տ., էջ 18)

Յերկու դեպքում ել, պարզ է, հիշատակված և միենույն
անձնավորությունը՝ իր իշխանական, տիրակալական իրավունք-
ներով:

ԶԱՓԵՐԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԽՐԱԿԱՅՈՅԻ «ՅԱՂԱԳՍ
ԸՆԹԱՅԻՑ ԱՐԵԳԱԿԱՆ»-Ի ՅԵՎ, «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

«Աշխարհացոյց»-ի Շիրակացուն պատկանելու վերաբերյալ,
վերջապես, մենք ունենք մի այլ փաստ, վորի վրա, վորքան մեզ
հայտնի ե, ուշադրություն չեն դարձել «Աշխարհացոյց»-ն ու-
սումնասիրող բանակերներից վճռ մեկը—«Աշխարհացոյց»-ի առա-
ջարանում և Շիրակացու «Յաղագս ընթացից արեգական»-ի մեջ
գործ ածված չափերի նմանությունները։ Ավելի ակնրախ դարձնե-
լու համար մենք անհրաժեշտ ենք համարում այդ տեքստերը
բերել զուգահեռաբար:

«Ասպարէզն է ըստ օդաչափու-
թեան բայլ ձի, և բայլն Զ ոտն, և
ոտն ԺԶ մատն: Եւ մղոնն է ասպա-
րէզ: Իսկ ըստ Պարսից ասպարիսին
ՃԽԴ բայլ որպէս լինել գետնաշա-
փութեամբ մղոնն Մ բայլ: Եւ խրաս-
խըն Գ մղոն՝ բայց օդաչափութեամբ
երկրաչափութիւն մասն ԵՇ ասպա-
րէզ ի լայն և յերկայն՝ չորերկուսի
միաչափ»։

(«Յաղագս ընթացից արեգական
և համարոյ չափուց ըստ կրկին
օրինակաց Շիրակացոյց» (անս
Անանիայի Շիրակունոյ Մնա-
ցորդք բանից), եջ 32—33):

«Եւ է ասպարէզն ըստ օդաչափու-
թեան բայլը հարիւր, և բայլն վեց
ոտն, և ոտն՝ վեշտասան մատն, մրանն
ասպարէզմի: Իսկ ասպարիզագ աս-
պարէզն է հարիւր բառասուն և
երեք բայլ և մղոնն է եւթն աս-
պարէզ, որպէս զի լինել գետնաշա-
փութեամբ մղոնն հազար բայլ և
փարսախն երեք մղոն և Բայց օդա-
չափութեամբ է մասն հինգ հարիւր
ասպարէզ ի լայնն երկրաչափու-
թեան, և նույնչափ երկայն շորե-
քուսի որպէս զի լինել մասինն եւ-
թանասուն և մի մղոն, չորք եւթն
է քսան և ութ»։

(«Աշխարհացոյց»-ի Վենետիկյան
հրատարակություն, եջ 588)

Յեթե մենք յերկած այս տեքստերում ուզգելու լինենք յեղած
գրչական վորոշ սխալներ, ապա մենք իրավունք կունենանք վճռ
թե նմանության, այլ նույնության մասին խոսել: Այստեղ յեր-
կարության չափերը նույն հետևողականությամբ շարադրված են
յերկու տեքստում ել: Այս նմանությունը, ինչ խոսք, վոր դար-
ձյալ վկայում է յերկու աշխատության հեղինակների նույնու-
թյան մասին: Շիրակացին իր «Աշխարհացոյց»-ի առաջարանում
խոսելով յերկրագնդի չափելու մասին, ըստ յերեւութիւն, անհրա-
ժեշտ և գտել իրեն հայտնի չափերը կրկնել այստեղ ևս: Գուցե
և Շիրակացու «Յաղագս ընթացից արեգական» աշխատությունը

«Աշխարհացոյց»-ի հետ մի ձեռագրում զտնվելով, խառնվել են թերթերը, և հետագա գրիչներն արտագրել են յերկու տարբեր տեղում: Ինչպիսի ձեռվ ել մտած լինի այս տեքստը «Աշխարհացոյց»-ի առաջարանում, այդ այնուամենայնիվ վկայում ե մի փաստի մտին, վոր յերկու տեքստերի հեղինակներն ել միենույն անձնավորություն են և այդ անձնավորությունը—Շիրակացին ե:

«Աշխարհացոյց»-ի և Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության մեջ նկատվում են բազմաթիվ բառերի և հատվածների նմանություններ: Մենք անհրաժեշտ ենք համարում բերել այդ նմանություններից մի քանի որինակներ:

«Աշխարհացոյց»

«... Աստուծոյ հրամանն ըստական է ունել զեզեր ջրոյն անծանօթ ծովուն ոչ պիտոյացեալ երկրի, եւ զեղերս սպառուած ի անծանօթ երկրի...»

S., եջ 9

«... զի երկոքին գտանին յասուած այս զի ըստ եղաբար եւ յոգնաբար ասացեալ ժժողովով զեցին ջուրքով ի ժողով միւ եւ ի ժողովս իւրեանցը, եւ թէ շաժողովով ջուրցն կոչեաց ծով ազ:»

S., եջ 8

«Առ խոստացեալսն»

«... իսկ որ ի գերայ երկրիս են ծովը՝ ընդ որս արջին մարգիկ՝ զոյ նոցա եղերս, սպառուած ն բարձնակածն...»

Եջ 40 (Պատկ. հրատ.)

«... զի աստուածայի ն զի ըստ հանգոյն սոցա ասէ. ժողովով ենցին ջուրքով կոչեաց ի ժուրքով որ ի ներքոյ յերկունից՝ ի ժողով միւ, յորմէ մարթի իմանալ թէ խառնին ի միւ և զարձեալ ասէ. Զժողովով ջուրցն կոչեաց զ ծով ազ:»

Եջ 40—41 (Պատկ. հրատ.)

Նմանությունները, կարծում ենք, անվիճելի յեն:

Այսպիսով, «Աշխարհացոյց»-ի՝ Շիրակացու ժամանակ գրվելու, լեզվական նմանությունների, աստղաբաշխական ու յերկրաշափական բարձր պատրաստականության, մաթեմատիկական յուրահատուկ նշանների գործածության և մի շարք այլ փաստեր վկայում են, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակը Անանիա Շիրակացին ե: Այժմ արդեն պարզվում ե, թէ վորքան իրավացի և յեղել պրոֆ. Ք. Պատկանյանը, վորը կոտհել ե այդ մասին առաջին անգամ:

ԱՇԽԱՄՐՀՅԱՅՅՈՅՆ-Ի ՀԵՂԻՆԱԿԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ
ՓԱՍՏԸ ԳՐԻԴՈՐ ՄՍԴԻՄՄՈՅԻ ՄՈՏ

Հարց և առաջ դալիս — ինչպիս ե, վոր Շիրակացու այս կարելոր աշխատության մասին հիշատակություն չի պահվել ժամանակադրական տեսակետից ավելի մոտ կանգնած հայկական ժամանագրերից վորեն մեկը, հատկապես X—XI դարերում ապրող մատենագրերի մոտ, վորոնք պիտի վոր ծանոթ լինելին «Աշխարհացոյց»-ի՝ Շիրակացու աշխատություն լինելու փաստի հետ Հին հայկական մատենագրության ուշադիր քննությունից պարզ վում ե, վոր նման հիշատակություն մեր մատենագրության մեջ պահվել ե, միայն թե «Աշխարհացոյց»-ի նախնական վերնագիրը մեր բանասիրությանը ծանոթ չլինելու հանգամանքով ե, վոր ձիշտ չի հասկացվել յեղած այդ հիշատակությունը:

X—XI դարի հայկական մատենագրերից՝ Շիրակացու՝ տարբեր գիտությունների ասպարիգում գրած աշխատությունները մենք թվարկած ու արժեքավորված ենք գտնում XI դարի նշանավոր հայ գիտնական Դրիգոր Մագիստրոսի մոտ: Նա իր մի նամակում՝ ուղղված Պետրոս Գետաղարձ կաթողիկոսին, հետեւյան և գրում՝ «Փոխան Յիսուսի, համարձակիմք ... (հայցել) զգիրս Անանիայի Շիրակայնոյ, որ բազում աշխատությամբ և յածառու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազան և յօքնաբեղուն մատենից, յորում և ենթակայացեալ են ոչ միայն քառիցն արհեստք այլ բոլոր էակացն խոկմունս... յորում մթերեալ են տոգորք աստուածային, և ենթակայացեալ ամենայն արհեստի մակացութեան և նախադասեալ է թուականութեանն և երածշականությանն՝ որք են ի տարորոշ քանակէ տարակացեալք. իսկ երկրաշփութեանն (Բնդգծումն մերն և—Ա. Ա.) և աստեղաբաշխությանն, որք են ի շարունակ քանակէ, և զինի այսոցիկ յարամանեալք արհեստք և մակացութիւնք, մատենագրութիւնք և գրէ եթէ ամենայն բոլոր գարժութն հոկտորական, թէպէտ և մասնաւոր զիոշետևական զօրէն գործառէր մեղուի ամբարեաց ի մեղումնոցի այդք ի բազմավէտ մատենագրից Քաղգէացւոց և Յունաց և ամենայն ազգաց տա ի ծանօթ լինելոյ, որք նախ քան զայնոսիկ հաւաքեալն մտահանս, մակացու եղեալ իմաստասիրութեան...»¹:

1 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, հրատ. Կ. Կոստանյանցի, Ալեքսանդրապոլ, 1910, եջ 8:

Այստեղ ուշադրության արժանի յե Շիրակացու անունով՝ «Երկրաչափութիւն» աշխատության հիշատակման փաստը։ Մաս-գիստրոսի խոսքն այստեղ, անկասկած, յերկրաչափական ինչ վոր փոքրիկ հատվածի մասին չե, այլ կարեոր մի աշխատության։ Բայց Շիրակացու անունով մեզ հասած այդպիսի մի աշխատություն հայտնի չե։ Մեր բանասիրությունն այդ հարցի վրայով լուսաթյամբ և անցել հավանական ե, յենթադրելով՝ թե նա կորած մի աշխատություն ե։ Սակայն մենք արդեն մեր աշխատության սկզբներում ցույց ենք տվել վոր «Աշխարհացոյց»-ի առաջին գլխի վերնագիրը յեղել և «Երկրաչափ»։ Պատահական գուգաղիպություն և արդյոք սա։ Կարծում ենք վոր՝ վճչ։ Գրիգոր Մագիստրոսի Շիրակացու անունով հիշած «Երկրաչափ»-ը — դա հենց «Աշխարհացոյց»-ն ե, վորի վերնագիրը յեղել և «Երկրաչափ», վորպիսի վերնագրեր պահել են մեր մատենադարանի ընտիր գրչություն ունեցող յերկու ձեռագիր «Աշխարհացոյց»-ները, վորոնցից մեկը գրված և լուսադրի Ագուր գյուղում, իսկ մյոււլը — Մոկաց յերկը Մուլս գյուղում (առև թիվ 1883 (1663), թերթ 145ա և թիվ 3160 (1035), եջ 596) ձեռագրերը։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խորենացուն վերագրվող տպագիր և ձեռագիր «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրությունից պարզվում ե, վոր մեզ հասած հայտնի «Աշխարհացոյց»-ի ընդորինակություններից համեմատաբար լավագույն և հնագույն տեքստեր են հանդիսանում չևսչ Պետ. մատենադարանի թիվ 3160 և 582 գրչադրերը։ Նրանցից առաջինն ընդորինակել և կարապետ գրիչը, իսկ յերկրորդը — Վարդան գրիչը։

2. Կարապետ և Վարդան գրիչների որինակներից յերեսում ե, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստերը խմբագրվել են ուշ շրջանի ընդորինակողների կողմից։ Նրանց մեջ մտել են մեծ քանակությամբ ընդմիջարկություններ։ «Աշխարհացոյց»-ի վորոշ հատվածներ յենթարկվել են հապավման ու աղավաղման։ Այդ թերություններից, ինչպես պարզվում ե, գուրկ չե նաև Սուքըյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի ընդարձակ տեքստը։

Կարապետ և Վարդան գրիչների «Աշխարհացոյց»-ի համե-

մատության հիման վրա հնարավոր և այժմ ուղղել Վենետիկյան հրատարակության «Աշխարհացոյց»-ի մեջ տեղ գտած մի շարք սխալներ և աղավաղումներ:

3. «Աշխարհացոյց»-ը սխալմամբ ե Խորենացուն վերագրվել ու նրա անունը «Աշխարհացոյց»-ի վերնագրում հիշատակվել ուշ շրջանի ընդորինակող զրիչների կողմից: Հետո մատենագարանի 1600 թ. առաջ զրված «Աշխարհացոյց»-ներից և վոչ մեկի վերնագրում չի հիշատակվում Խորենացու անունը: Բացառություն և կազմում XV դարում ընդորինակված Պետրոս գրչի որինակը, վորի վերնագրում սակայն, ինչպես պարզվում և այդ նույն վերնագրի ուշաղիք քննությունից, Խորենացու անունը ափելացված և XVIII դարի գրչությամբ:

4. Ֆրանսիացի գիտնական Սեն-Մարտենի հայտնած այն կարծիքը, վոր գոյություն և ունեցել յերկու Խորենացի, վորոնցից առաջինը ճիշտ Խորենացին ե (V դարի), իսկ յերկրորդը — սուտ (IX—X դարի) չի հաստատվում մատենագրական նոր տվյալներով:

5. «Աշխարհացոյց»-ի, ինչպես և նրա ոգտագործած աղբյուրների վերնագրերի ուսումնասիրությունից պարզվում է, վոր «Աշխարհացոյց»-ի հավանական վերնագիրն ե հանդիսացել «Երկրաշախի»-ը: Այս վերնագիրը պահպաննել են Լոռիի Ագուր գյուղում և Մոկաց յերկրի Սուլա գյուղում ընդորինակված «Աշխարհացոյց»-ները:

6. Մատենագարանի հնագույն ձեռագրերի ուսումնասիրությունից յերևում ե, վոր Սեն-Մարտենի «Աշխարհացոյց»-ը X դար հացնելու համար բերված բոլոր կովանները («Յօգու ոռւսաց», «Շաղախ», «Ղում» և այլն), ինչպես ճիշտ նշվել ե արդեն բանասիրության մեջ, ընդմիջարկություն են հանդիսացել: XVII դարից առաջ ընդորինակված Հետո մատենագարանի «Աշխարհացոյց»-ներից վոչ մեկի տեքստում մենք չենք հանդիպում Սեն-Մարտենի մոտ կովան հանդիսացող աշխարհագրական այս անունները:

7. Մարկվարտի յենթագրությունը, վոր Սուքըյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստում Խորասանի շրջանների շարքում հիշված «Ֆճակստան»-ը դա աղավաղված ձեն և «Փճակ» և «Ասան» շրջանների և այդ անունները կարող ենին հայտնի

դառնալ և հիշատակվել այդ նույն աերիսորիայում 737 թ. տեղի ունեցած թուրք-արաբական մեծ կովից հետո միայն—վոչնչով չի հիմնավորված: Յես առաջարկում եմ աղավաղված այդ անուններն ուղղել «Ման»; «Շանջակստան» ձեռլ:

8. «Աշխարհացոյց»-ի հեղինակին IX դար շարժող բանասերների բերած ապացույցները չեն հաստատվում գրչագիր «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրությամբ: Այսպես, պարզվում է, վոր Գալիայում Փրանները «հօր» չեն հիշատակված, Բասրա և Ակողա քաղաքների հիշատակությունը այն ձեռվ, ինչ ձեռվ մեզ հանդիպում են ապագիր «Աշխարհացոյց»-ի տեքստերում—ըսդմիշարկություն և, «Աշխարհացոյց»-ի տեքստում արարերեն տերմիններ չկան և այլն:

9. «Աշխարհացոյց»-ի տեքստի ուշադիր քննությունից յերեսում է, վոր «Աշխարհացոյց»-ը VII դարում ապրող հեղինակի գործ և Նա գրված է Հայաստանն արաբական Խալիֆաթի կողմից վերջնականապես գեռ չնվաճված ժամանակ:

10. Ակադ. Հ. Մանանդյանի այն յենթադրությունը, թե «Աշխարհացոյց»-ի հեղինակը Խորենացին է, վորովհետեւ նրան և հատուկ բնորոշ այնպիսի գարձվածքների գործածությունը, վորոնք հանդիպում են միայն «Պատմութիւն հայոց»-ում և «Աշխարհացոյց»-ում, չի հիմնավորվում: Ակադ. Հ. Մանանդյանի մեջ բերված «բնորոշ» այդ գարձվածքները («զիտեմ», «կարծեմ», «ինձ թուի», «հաւանեալ եմ», «ճշմարիտ է», «ասեմ», «զրեմ», «սկսացց»), գործ են ածվել նաև Ծիրակացու աշխատություններում:

11. Ծիրակացու և «Աշխարհացոյց»-ի հեղինակի մեջ աշխարհագրական անունների և հայացքների տարրերություններ չկան: Պարզվում է, վոր Ծիրակացին ևս ծանոթ է յերկրագունդը կլոր լինելու տեսության հետ: Հասարակած ասկրով նա հասկացել է յերկնային ծիրը, ծովի և ծովակի շփոթումը գրչության աղավաղում պիտի լինի, և այլն:

12. VII դարում կաղմած Անանուն հեղինակի ժամանակաշրությունից (վորը պահվել է ՀԽՍՀ Պետ. մատենադարանի 971 թվի ընդուրինակած գրչագրում) և Ծիրակացու մինչեւ այժմ ամբողջությամբ գեռ չտպագրված «Տիեզերագիտութեան» մի հատվածից պարզ յերեսում է, վոր Խորենացին Ծիրակացուց առաջ

ապրած հեղինակ ե, ուստի և չեր կարող պրած լինել ներկա խմբագրությամբ մեղ հասած «Աշխարհացոյց»-ը:

13. Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքը՝ «Մղոնաչափք»-ն «Աշխարհացոյց»-ի հեղինակի գործ լինելու և «Աշխարհացոյց»-ի շարունակություն հանդիսանալու հարցում, հաստատվում ե ՀԽՍՀ Պետ. մատենադարանի «Աշխարհացոյց»-ների հնագույն գրչագրերում պահված մատենադարական փաստացի հիշատակությամբ: Վորոշ «Աշխարհացոյց»-ների վերջում պահվել ե մի փոքրիկ հիշատակություն, ուր հեղինակը պարզ հայտնում ե, վոր ինքը վերջացրել ե «Աշխարհացոյց»-ի շարագրությունը և այժմ սկսում ե համառոտել առանձին քաղաքների չափերը մղոններով:

14. «Աշխարհացոյց»-ը «Մղոնաչափք»-ով չի վերջացել: Նա շարունակվել ե աստղաբաշխական բովանդակություն ունեցող մի այլ նյութով, վորի վերնագիրն և «Աստեղաբաշխական երկրաշափութիւն»: «Աշխարհացոյց»-ի շարունակությունը կազմող աստղաբաշխական այդ նյութը «Աշխարհացոյց»-ի գլուխներից մեկն ե հանդիսացել բայց հետագայում ընդորինակողների կողմից անդամանատվել ե: Աստղաբաշխական այդ նյութը, բարերախոսաբար, պահպանվել ե հնագույն «Աշխարհացոյց»-ներից մի քանի սի շարունակության մեջ: Այդ նյութը, վորքան մեղ հայտնի ե, մինչև այժմ գեռ չի հրատարակված:

Վորոշ ձեռագրերում աստղաբաշխական այդ նյութը պատահում ե «Աշխարհացոյց»-ից անջատված վիճակում: ՀԽՍՀ Պետ. մատենադարանում կան աստղաբաշխական այդ նյութը պարունակող գրչագրեր, ուր վերնագրում, վորպես հեղինակ, հիշատակված ե Անանիա Շիրակացին:

15. «Աշխարհացոյց»-ը վերջացել ե հեղինակի ընծայական վերջարանով, վորից յերեսում ե, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակն իր աշխատությունը նվիրում ե վոմն իմաստասերի:

16. Նույն հիշատակարանում «Աշխարհացոյց»-ի հեղինակը հիշում է իր ոգտագործած աղբյուրները: Պարզվում ե, վոր «Աշխարհացոյց»-ի հիմնական աղբյուրներ են հանդիսացել՝ Պաղումնուի «Տիեզերագրութիւն»-ը, Պապլոս Աղեքսանդրացու «Երկրագրութիւն»-ը և Պորֆիրի ներածությունը: «Աշխարհացոյց»-ի հեղինակի Պաղումնուից անմիջապես ոգտվելու հարցը լուծվում ե գրականապես:

17. «Աշխարհացոյց»-ի՝ Շիրակացու ապրած ժամանակաշրջանում գրվելը, նրա՝ Շիրակացու այլ աշխատություններին կից ձեռագրերում գտնվելու հանդամանքը, յերկրաչափական և աստղաբախչական նյութերի ծանոթ լինելու փաստը, կոտորակի գործածությունը, «Աշխարհացոյց»-ում՝ Շիրակացու այլ աշխատություններից վորոշ հատվածների գործածությունը և մատենագրական մի շարք այլ փաստեր վկայում են, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակը Vլ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին ե:
18. «Աշխարհացոյց»-ը «Երկրաչափ» վերնագրով հիշատակված և Գրիգոր Մագիստրոսի մոտ:

К вопросу об авторстве древнеармянской географии, приписываемой Мовсесу Хоренаци

(Основные тезисы)

1. В Гос. библиотеке древних рукописей Арм. ССР (в Матенадаране) имеется 35 неизученных списков древнеармянской „Географии“, приписываемой Мовсесу Хоренаци. Среди них имеются древнейшие манускрипты, тексты которых значительно отличаются от опубликованных до сих пор текстов „Географии“ и помогают нам в деле определения ее автора. Из списков „Географии“, хранящихся в Гос. библиотеке древних рукописей Арм. ССР, наиболее ценными являются списки писца Вардана (см. рукопись Матенадарана № 582) и писца Карапета (см. рукопись Матенадарана № 1662).

2. Сличение текстов рукописей Гос. библиотеки с двумя опубликованными редакциями „Географии“, — с венецианским изданием сокращенного текста (см. «Աշխարհացոյց Մովսեսի Առենացուոյ», Վենետիկ, 1865) и с изданием Сукри пространного текста (см. „Géographie de Moïse de Corène d'après Ptolémée“, Venise, 1881) показывает, что первоначальный текст „Географии“ на протяжении веков подвергался значительным изменениям: в опубликованных текстах „Географии“ имеется много искажений, сокращений, вставок и интерполяций.

3. Пространный текст древнеармянской „Географии“ издания Сукри, как уже правильно отмечено некоторыми авторитетными учеными, не является идеально точным:

по сравнению с первоначальным оригиналом он сокращен и отредактирован.

4. Древнеармянскую „Географию“ ошибочно приписывали перу Хоренского, с упоминанием его имени в заглавиях текста. Изучение древнейших текстов рукописей Гос. библиотеки древних рукописей Арм. ССР показывает, что ни одна рукопись, переписанная до 1600 г., в заглавии не носила имени Хоренского. „Географию“ ошибочно стали приписывать перу Хоренского лишь в XVII веке, после чего она и стала известна, как его труд.

5. Мнение французского ученого Сен-Мартена о существовании двух Мовсесов, один из которых является достоверным, а другой мнимым, не подтверждается новыми данными по исследованию источников.

6. Приводимые Сен-Мартеном из опубликованного им текста „Географии“ выражения: „река Яуза“, „провинция Шадах“, „полуостров Крым“ и др. географические названия в доказательство принадлежности „Географии“ мнимому Мовсесу Хоренскому, являлись, как правильно отмечают проф. К. Патканов и акад. Я Манандян, интерполяциями, вставками позднейших переписчиков. В текстах древнейших рукописей Гос. библиотеки древних рукописей Арм. ССР указанные Сен-Мартеном предложения отсутствуют.

7. Предположение Маркварта, что название провинции „Гджакстан“, упоминаемое в тексте древнеармянской географии (в разделе географии Ирана), является искажением, и его предложение исправить его на „Гужак“ и „Асан“ (см. его „Eranschahr nach des Géographie Ps. Mowses Chorenpaçi“) не обосновывается текстами древнейших списков. Я предлагаю это название исправить на „Ман Шанджакстан“.

8. Все аргументы, приводимые исследователями в доказательство того, что автор „Географии“ жил в IX веке, не подтверждаются новыми материалами, обнаруженными в Гос. библиотеке древних рукописей Арм. ССР. Так, например, в первоначальном тексте в Галлии упоми-

наются не „могучие франки“ (*«Փրանկներու»*), что дало повод некоторым ученым полагать, будто автор „Географии“ жил после Карла II-го, (768—814 г.), ибо франки на историческую арену выступили после этого, а „сильные буйволы“ (*«գոմէշներու»*, не „торговый город“ Басра (*«Բաշրա տինաշլից վաճառքոք»*), что дало повод некоторым исследователям передвинуть автора „Географии“ в более поздние века, ибо Басра была основана во второй половине 7-го века, а обильная плодами Басра и т. д.

9. Утверждение ак. Я. А. Манандяна, будто автором „Географии“ является Хоренский на том основании, что ему присуще употребление личных выражений, которые необычны и крайне редки у других древнеармянских писателей, не подтверждается. В сочинениях Ширакаци, в частности в его неопубликованных рукописях, недавно обнаруженных в Матенадаране, встречаются почти все эти выражения („я знаю“, „я не знаю“, „я полагаю“, „мне кажется“, „я одобряю“, „я говорю“, „я начну“ и т. д.).

10. Утверждение некоторых ученых, что географические выражения Ширакаци и составителя „Географии“ якобы не сходятся и потому они являются различными авторами,—не верно, ибо факты, приводимые в доказательство этого положения, ничем не обоснованы. Так, например, указывалось, что Анании Ширакскому, в противоположность автору „Географии“, земной шар не представлялся шарообразным, меж тем как в двух местах „Космографии“ Ширакского мы находим ясные указания на шарообразность земли (см. „Космографию“ Анании Ширакаци). Указывалось также, будто составитель „Географии“ солнце считает меньше земли, в то время как Ширакаци утверждает обратное, а из текста „Географии“ видно, что составитель „Географии“ о величине солнца говорит не от себя, а приводит точку зрения другого автора (см. „Арм. географию 7 в“). Ширакаци не путает также ни параллели с меридианом, ни маленького моря (*ծովակ*) с обычным морем, что опять утверждают некоторые

исследователи. У Ширакаци и составителя „Географии“ нет также никакого различия в их географической терминологии.

11. Из пространного текста „Космографии“ Анании Ширакаци, обнаруженного не так давно в Гос. библиотеке древних рукописей Арм ССР, и из „Летописи анонимного автора VII в.“, сохранившейся в манускрипте списка 981 г., видно, что Ширакаци пользовался „Историей Армении“ Мовсеса Хоренаци. В „Космографии“ он использовал легенду о родоначальнике армян—Гайке, а в „Летописи“ он списывает из истории Хоренского целую страницу, упоминая в заглавии имя Мовсеса Хоренского. Так как „География“ написана во второй половине VII в., то она и не могла быть трудом Хоренского.

12. Текст „Об успении Богоматери и об ее изображении у Мовсеса Кертоха и католикоса Захария“, сохранившийся в древнеармянском манускрипте Иерусалимской библиотеки армянского патриаршества и послуживший аргументом у некоторых ученых для доказательства современности Хоренского с католикосом Захарием (855—875 гг.), не обосновывается древнейшей рукописью этого же текста, находящейся в Гос. библиотеке древних рукописей Арм. ССР. Текст этот, как оказывается, был составлен не Мовсесом и католикосом Захарием, как современниками, а неким компилятором в VIII в., причем этот компилятор, при составлении этого текста, у Хоренаци использовал его „Ответ на письмо Саака, («Պատիսիսնի թղթոյն Սահակոյ») которое опубликовано в сборнике сочинений Хоренского (см. «Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնը»), а у Захария—его „религиозное сочинение“.

13. Текст „Географии“ не кончался „Интенарией“: в продолжении у него имелась другая глава астрономического содержания. Она сохранилась в некоторых древних рукописях „Географии“ Гос. библиотеки древних рукописей (№№ 582, 1717 и др.). Здесь Ширакаци определяет пространство, дальность земного шара от солнца, луны

и других планет. В некоторых манускриптах они встречаются нам в обособленном виде, но с упоминанием его автора—Анании Ширакского.

14. В конце текста „Географии“ Ананией было написано послесловие в виде приписки, где он перечислял использованные им источники. Это послесловие автора „Географии“ сохранилось в ряде рукописей Гос. библиотеки древних рукописей.

15. Из послесловия Анании Ширакского видно, что он пользовался в основном тремя источниками: „Космографией“ Птоломея, „Землемерием“ Папа Александрийского и „Пре-дисловием“ («Արշակութիւն») Порфирия. Спор о том, черпал ли составитель армянской „Географии“ сведения у Птоломея непосредственно, разрешается положительно.

16. „География“ под заглавием „Землемерие“, как труд Анании Ширакского, была известна армянскому учёному XI века Григорию Магистру.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Առաջարտն	5
«Աշխարհացոյց»-ի ձեռագրերը	9
Սուբրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի հնության հարցը	20
«Աշխարհացոյց»-ի վերնագրի հարցը	25
«Աշխարհացոյց»-ի տեքստում նկատվող աղավաղումները	34
«Աշխարհացոյց»-ի գրելու ժամանակը	48
«Աշխարհացոյց»-ի և Խորենացու «Պատմութիւն հայոց»-ի բնորոշ դարձվածքները	61
Շիրակացու և «Աշխարհացոյց»-ի հեղինակի միջն մատնացույց արված աշխարհագրական հասկացողությունների հակասության հարցը	68
Փաստեր Խորենացու՝ Շիրակացուց առաջ ապրած հեղինակ լինելու մասին Խորենացու և Զաքարիա կաթողիկոսի ժամանակակից հեղինակներ չլինելու խնդիրը	73
«Մղոնաչափը»-ն «Աշխարհացոյց»-ի շարունակությունն և	85
Աստղաբաշխական յերկրաշափությունը	91
«Աշխարհացոյց»-ի ազբյուրները	98
Կոսորտակի և «C» տառի գործածությունը Շիրակացու «Յաղագս կատարման համարողության և կերպից հարցման» աշխատության և «Աշխարհացոյց»-ի միջն	101
Ներսէն Կամասարականի հիշատակությունը «Աշխարհացոյց»-ում և Շիրակացու խնդրագրքում	105
Չափերի նմանությունը Շիրակացու «Յաղագս ընթացից արեգական»-ի և «Աշխարհացոյց»-ի տեքստում	108
«Աշխարհացոյց»-ի հեղինակի հիշատակության փաստը Դրիգոը Մագիստրոսի մատ	109
Յեզրակացություններ	111
Резюме на русск. яз.	112
	118

Պատ. խմբագիր՝ Հ. Հ ա ը ու թ յ ո ւ ն յ ա ն
Տեխ. խմբագիր՝ Վ. Մ ա ն ո ւ կ յ ա ն
Սըրապէիչ՝ Ա. Թ ա յ ի բ յ ա ն
Պատ. սըրապէիչ՝ Ա. Շ ա հ բ ա դ յ ա ն



Հանձնված է արտադրության 13/VII 1940 թ.

Ստորագրված է ազագրության 26/XI 1940 թ.

Վ.Յ. 2334, պատկ. № 172, տիրաժ 1000, հրատ. № 66. Գինը 7 ո. 50 կ.

Արմֆանի հրատարակչության տպաբան, Լենինի փ. № 67.

(604)



A II
32888